Ս. ՑԻԳԻԲԸՆԵԸՆ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

ԵՐԿՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՑՈՒՄ

Գինն է 30 կոպ.

ԹԻՖԼԻՍ
1907

Ս. ՏԻԳՐԱՆԵԱՆ

9(ԿՀ)173
Տ
329.14

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

Ա II 3245

ԵՐԿՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՅՈՒՄ

ԹԻՖԼԻՍ
Էլեֆտրաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» Ս. Պ. Եղիազարեանի.
Մադաթ. փող. № 5.
1907 (18)

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ Բ. ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Փետրուար—յունիս 1907 ամի)

I.

Պաշտօնէութիւն ստանձնելը պատասխանատուութեան և հաշէտուութեան հետ է կապուած անխզելի կերպով։ Ընտրող ժողովրդի և կուսակցութեան առաջ հաշէտուութեամբ ներկայանալը մի ընտրեալ կուսակցական պատգամաւորի համար ոչ միայն քաղաքական և բաղաքացիական անվիճելի պարտք է, այլ նաև անձնական հոգեկանի մի անզսպելի պահանջ։ Թող յետագայ համառօտ պատմութիւնը այդպիսի մի հաշէտուութեան անկատար կատարումը լինի։

Սակայն, բացի այդ ընդհանուր դրդիչ պատճառից՝ մի ուրիշ յատուկ նպատակ էլ կայ, որ ստիպում է ներկայ հակիրճ տեղեկագրով նկարագրել ընդհանրապէս հայ հասարակութեան առաջ դաշնակցական պատգամաւորների խմբակի՝ երկրորդ Պետական Դումայի գործունէութեանը ունեցած մասնակցութիւնը։ Ռուսաստանի հայ ժողովրդի և հայ կուսակցութիւնների համար այս՝ ընդհանուր պետական ներկայացուցչական ժողովին ինքնուրոյնարար *)

*) Առաջին Պետ. Դումայում էլ կային հայ պատգամաւորներ Անդրկովկասից. բայց նրանց գործունէութիւնը ոչ միայն խիստ կարճատև եղաւ շատ ուշ ընտրելու և տեղ հասնելու պատճառով, այլ և զուրկ էր ինքնուրոյնութիւնից. նրանք բոլորովին ձուլւել էին կադէտների ստուար զանգուածում։ Երկրորդ Պետ. Դումայում էլ կային կադէտներին միացած հայ պատգամաւորներ. մէկը Ռուսական Հայաստանից, միւսը հարաւային Ռուսաստանից ընտրուած։ Բայց Դաշնակցական պատգամաւորների մասնակցութիւնը այն առաւել հետաքրքրականութիւն ունեցաւ, որ սրանք ոչ թէ հայ պատգամաւորներ էին, այլ Ռուս. Հայաստանի հայ (աշխատաւոր) ժողովրդից ընտրուած լինելուց զատ, նաև ուրոյն հայոց (սոցիալիստական) կուսակցութեան թեկնածուներ էին, և, ինչպէս կտեսնենք, ինքնուրոյն, որոշ չափով առանձին խմբակ և դիրք ունեցան երկրորդ Պետ. Դումայում։

մասնակցելու առաջին փորձն էր. և որքան էլ թերի, սակաւաբովանդակ և ապարդիւն լիներ Բ. Դումայի եռամսեայ գործունէութիւնը, որքան էլ հաժեստ եղած լինէր դաշնակցական պատգամաւորների այնտեղ ցոյց տուած մասնակցութիւնը, որքան էլ քիչ նիւթ տուած լինի Բ. Դումայի գոյութիւնը մեր ժողովրդի և կուսակցութիւնների քաղաքական փորձառութեան տեսակէտից, բայց և այնպէս այդ քիչն էլ ոչ միայն արհամարհելի չէ, այլ մտացի գիտողին և դատողին հետաքրքրական փաստական պաշար է մատակարարում՝ ապագայի համար ուսանելի և պիտանի եզրակացութիւնների գալու։ Թէ Ռուսաստանն ընդհանրապէս, և թէ մանաւանդ Կովկասն ու հայ ժողովուրդը դեռ շատ դեռևս, փորձով ազրատ և անվարժ են քաղաքական կեանքից և գործունէութիւնից, որ հիմք ունենային արհամարհելու փորձառութեան ամենափոքր պաշարն անգամ։

Մանաւանդ որ կան մի շարք առանձնայատուկ հարցեր ու հանգամանքներ, որոնք անխուսափելի կերպով կապած են Ռուսական Հայաստանի հայ ժողովրդի և ընդհանրապէս Հարաւային Կովկասի ազգաբնակութեան պատգամաւորութեան՝ ընդհանուր պետական պառլամենտում ինքնուրոյնաբար գործելու եղանակի և պայմանների հետ։ Այդ հարցերը և հանգամանքները նաև ապագայում ամեն անգամ հանդէս են գալու, և հայ աշխատաւոր ժողովրդի գիտակից մասնակցութիւնը Պետական Դումայում պայմանաւորւած է այդ հարցերին որոշ և մտածւած լուծում տալուց, յիշեալ հանգամանքները ճշտիւ հաշի առնելուց։ Այս տեսակէտից Բ. Դումայի կեանքի և գործունէութեան ցոյց տուած փորձերը չը պիտի մոռացութեան մատնուեն և կորչեն. այլ որոշ յինակէտ դառնան ապագայի նորանոր փորձերով ստուգելու և լրացնելու։

Ներկայ տեղեկագիրը կազմելու յիշեալ անսիջական շարժառիթները որոշում են նրա ունենալիք յետագայ բովանդակութեան սահմանագիծը։ Երկրորդ Պետական Դումայի կեանքի ամբողջ անցած-դարձածի պատմութիւնն անելը ի հարկէ հաշւեցուութեանս հաժեստ շրջանակից դուրս մի գործ կը լինէր։ Պարբերական մամուլի (մանաւանդ մայրաքաղաքի, մասամբ էլ Կովկասի) էջերում ժամանակին բաւականին մանրամասն տեղեկութիւն էր տրւում այդ մասին ընթերցող հասարակութեանը (տես նաև դաշ-

նակցական պատգամաւոր Ստ. Տէր-Աւետիքեանի թղթակցութիւնները կուսակցական օրաթերթերում)։ Յետագայ զեկուցագրով կանգ եմ առնելու գլխաւորապէս, մինչև իսկ յատկապէս, դաշնակցական պատգամաւորների ընթացքի և քայլերի վրայ, յիշատակելով նաև սոցիալիստ-յեղափոխականների խմբի գործունէութեան մասին, որովհետև, ինչպէս յայտնի է, այդ կուսակցութեան պառլամենտական խմբին էր յարել դաշնակցական պատգամաւորների խմբակը մի միացեալ խումբ կազմելով։

—

Յիշեցի պարբերական մամուլի՝ Բ. Պետական Դումայի գործունէութեան մասին ժամանակին տուած տեղեկութիւնների մասին։ Պէտք է նկատեմ, որ այդ տեղեկութիւնները շօշափում էին Դումայի գոյութեան ոչ բոլոր կողմերը, շօշափածն էլ նկարագրում էին ոչ հաստատ և հաւասարաչափ մանրամասնութեամբ ու ճշտութեամբ։ Ամենից հանգամանօրէն մամուլի միջոցով հաղորդւում էին Դումայի ամբիոնից արտասանուած ճառերը. համեմատաբար աւելի թերի և պակաս ճշտութեամբ տեղեկացւում էր Դումայի յանձնաժողովներում կատարուածի մասին. իսկ Դումայի կուսակցական ֆրակցիաներում և խմբերում անցածի մասին շատ հաղիւ էր բիչ թէ շատ լրիւ և ճիշտ բան հաղորդւում։

Դումայում գործող զանազան կուսակցութիւնների մասին պարբերական մամուլի օրգանների հաղորդած տեղեկութիւնների նկատմամբ պէտք է մատնացոյց անեմ, որ սոցիալիստ-յեղափոխական ու դաշնակցական պատգամաւորների միացեալ խմբի գործածի մասին լրագրներում համեմատաբար շատ քիչ բան էր գրւում։

Այս կողմից ամենից լաւ էր կադէտների ֆրակցիայի գրութիւնը։ Սրանց կուսակցական օրգան «Բիկ» օրաթերթը, որը անընդհատ և անարգել կարդացաւ հրատարակւել, շարունակ ոչ միայն մանրամասն և լիակատար տեղեկութիւն էր տալիս կադէտների ֆրակցիայի Դումայում գործածի մասին, այլև այդ լրացնում ու պաշտպանում էր իր լուսաբանութիւններով։ Սոցիալիստ յեղափոխականները (ինչպէս և սոցիալ-դեմոկրատները) նոյնպէս մի քանի անգամ փորձ արին իրենց օրաթերթերը հրատարակելու. բայց, իբրև թէ վերացած ցենզուրայի ստեղծած «ազատ» պայմանները այլև բարեխնամ կառավարութեան սահմանադրական հայացքները վերջ դրին մէկը միւսի ետևից այդ «անտանելի» կու-

սակցութիւնների «վերասակար» օգտաններին, գրաւելով իւրաքանչիւր լոյս տեսած թերթի բոլոր համարները և պատասխանատուութեան ու դատի ենթարկելով խմբագիրներին։

Զուսնալով իրենց սեփական թերթերը՝ թէ ընդհանրապէս բոլոր ձախակողմեան կուսակցութիւնների, և թէ առանձնապէս սոցիալիստ-յեղափոխականների ու դաշնակցականների խմբերը և ֆրակցիաները զուրկ էին իրենց Դումայում կատարած գործունէութիւնը հանգամանօրէն և ցանկալի հարազատութեամբ ժողովրդի առաջ երևան հանելու և ինչպէս հարկն է լուսաբանելու հնարաւորութիւնից։

Ինչ որ սեփական թերթերը հնարաւորութիւն չունեցան կատարելու ձախակողմեանների համար, պիտի անէին «օտար» թերթերը, ի հարկէ դիմադիր ուղղութեան, օպոզիցիային պատկանողներից։ Սակայն սրանցից «Рѣчь»-ը, կադէտների կուսակցական օգանը լինելով՝ բացառապէս իր կուսակցութեան շահերին էր նուիրուած, և ձախակողմեանների գործածների մասին կամ ոչինչ չէր գրում, և կամ նրանց արածը բնականաբար իր կուսակցութեան տեսակէտից էր ներկայացնում և լուսաբանում։ Մնում էր «Товарищъ» օրաթերթը, որը կադէտներից ձախակողմեան ուղղութեան պատկանելով հանդերձ, նոյնպէս կարողացաւ անընդհատ հրատարակուել։ «Товарищъ»-ը իրօք էլ աւելի մեծ ուշադրութեամբ և հարազատութեամբ էր հետեւում ձախակողմեանների գործունէութեանը Դումայում։

Բայց այստեղ էլ սոցիալիստ-յեղափոխականների և դաշնակցականների միացեալ խմբի դրութիւնը միւս ձախակողմեանների հետ համեմատած ամենից անանպատն էր։ «Товарищъ» լրագիրը, որը իրեն ձախակողմեան անկուսակցական օրաթերթ էր յայտարարում, իրօք գլխաւորապէս սոցիալ-դեմոկրատներին էր ծառայում և մասամբ էլ «աշխատաւորականներին» (տրուդովիկներին), իսկ սոցիալիստ-յեղափոխականների խմբի նկատմամբ (սրանց պատճառով նաև դաշնակցական պատգամաւորների նկատմամբ) մի դատապարտելի կողմնապահութեամբ դիտաւորեալ և յամառ լռութիւն էր պահում։ Օր. սոցիալիստ-յեղափոխականների և դաշնակցական պատգամաւորների Դումայում արտասանած ճառերը կամ խոսքը չէին յիշատակում, կամ առաջ էին բերում չափազանց կրճատուած և քննադատական որև է անհիմն ու անարդար

ակնարկով, մինչդեռ սոցիալ-դեմոկրատներից ոմանց մինչև իսկ համեմատաբար թույլ ճառերը գովաբանում էին. եթէ Դումայի սրև է յանձնաժողովում սոցիալիստ-յեղափոխական կամ դաշնակցական պատգամաւորը մի կարեւոր հարց էր յարուցանում և սոցիալ-դեմոկրատները լոկ միանում էին նրան, «Товарищъ»-ը, բոլորովին չը յիշատակելով իսկական նախաձեռնողի մասին, գրում էր՝ իբր թէ սոցիալ-դեմոկրատները յանձնաժողովում յարուցին այս ինչ հարցը. երբ յանձնաժողովներից որև է մէկում մի սոցիալ-յեղափոխական նախագահ կամ նախագահի օգնական էր ընտրում, «Товарищъ»-ը այդ մասին ուղղակի լռում էր։

Միայն «Русь» օրաթերթն էր, որ մասամբ ու երբեմնապէս, այն էլ Բ. Դումայի գոյութեան երկրորդ կիսում, ընդարձակ տեղ էր տալիս սոցիալիստ-յեղափոխականների և դաշնակցականների Դումայում կատարածին նուիրած տեղեկութիւններին. նոյն «Русь»-ում տալեց ամբողջութեամբ սոցիալիստ-յեղափոխական պատգամաւոր Մուշենկոյի ընդարձակ ճառը հողի խնդրի մասին, սոցիալիստ-յեղափոխականների ու դաշնակցականների միացեալ խմբից Դումային առաջարկուած հողի Օրինագիծը և այլն։

Պարբերական մամուլի ժամանակին հաղորդած տեղեկութիւնների այս բոլոր միակողմանութիւններն ու թերութիւնները աչքի առաջ ունենալով՝ յետագայ տեղեկագրումս աշխատելու եմ լրացնելու այդ պակասը զոնէ դաշնակցական պատգամաւորների վերաբերմամբ։

II.

Բացի մի քանի տասնեակ (մօտ 50 հոգի) անկուսակցականներից («վայրենիներից») Ցացած բոլոր պատգամաւորները որոշ կուսակցութիւնների պատկանող կամ որոշ կուսակցութիւնների կողմից իբրև պատգամաւորութեան թեկնածու առաջարկուած անձեր էին։ Համակուսակից պատգամաւորները բնականաբար միանում, մի կուսակցական միութիւն էին կազմում Դումայում միասին համերաշխ և նոյն կուսակցութեան ուղղութեան համեմատ գործելու։ Երկրորդ Դուման ոչ թէ առանձին անհատ պատգամաւորների, այլ պատգամաւորների հաւաքական խմբերի, կուսակցական միութիւնների մի համագումար էր. և իւրաքանչիւր պատգամաւոր (բացի ան-

կուսակցականներից) գործում էր ոչ թէ անհատաբար, այլ կուսակցաբար, ղեկավարելով ոչ թէ իր սոսկ անհատական տրամադրութիւններով ու հայեացքներով, այլ ենթարկելով իր կուսակցական մարմինների և Դումայի համապատասխան կուսակցական խմբի հաւաքական որոշումներին։

Բացի այդ զուտ կուսակցական միութիւններից՝ որոշ ձևի մօտիկութիւն, նոյն իսկ միութիւն կարող էին լինել և եղան իսկ Բ. Դումայում նաև տարբեր կուսակցական խմբերի միջև, ի հարկէ նման ուղղութեան պատկանելու դէպքում. օր. դեմոկրատիկ բարենորոգումների կուսակցութեան Բ. Դումայում եղած մէկ հատիկ պատգամաւորը միացել էր կադէտների ֆրակցիային. «տրուդովիկները» և գիւղացիութեան միութեան պատկանող պատգամաւորները մէկ խումբ էին կազմել Դումայում (մօտ 100 հոգուց բաղկացած). հոկտեմբերականները և «չափաւորները» նոյնպէս մի խումբ էին կազմել։ Միացման հարցը ի հարկէ կարևորութիւն ունի մանաւանդ սակաւամարդ խմբերի համար։

Երկրորդ Պետական Դումայում գործելիս դաշնակցական պատգամաւորները *) իրենք իրենց մէջ մի ուրոյն և սեպհ միացած սեփական խմբակ կազմելով հանդերձ, պէտք է յարէին Դաշնակցութեանը նման և մօտ (իր ծրագրով ու տակտիկայով) Ռուսաստանում գործող օրէնք խոշոր կուսակցութեան պառլամենտական բազմանդամ ֆրակցիային կամ խմբին։ Այդպիսին էր ռուսաց սոցիալիստ-յեղափոխականների խումբը Դումայում, որին և յարեց դաշնակցական պատգամաւորների խմբակը։

Երկրորդ Դումայի դեռ պատգամաւորական ընտրական գործառնութիւնների ժամանակ Դաշնակցութիւնը իւր պատգամաւորացուների համար մի հրահանգ **) էր յօրինել, ուր ի միջի այլոց ասուած էր նաև, որ Դումայում «հնարաւոր գործեն սոցիալիստ-

*) Բ. Դումայում ընդամենը երեք դաշնակցական պատգամաւոր կային՝ երկուսը Երևանի (Յովհաննէս Մաղաքիանեան և Միրական Տիգրանեան) և մէկը (Ստեփան Տէր-Աւետիքեան) Դանդակի նահանգից ընտրուած։

**) Այդ հրահանգը պատուիրակ Սիմ. Զաւարեանը կարդաց Թիֆլիս քաղաքի պատուիրակների ընտրողական ժողովում։ Նոյն հրահանգը տպուեց «Ժամանակ» օրաթերթի 31-րդ №-ում (փետրուարի 9, 1907 թիւ), որ և տես արտատպած գրքոյկիս վերջում Յաւելուածների բաժնում։

յեղափոխական աշխարհայեացք դաստանող բոլոր կուսակցութիւնների հետ և նրանց հետ բլոկ կազմելու։

Սակայն առանց յատուկ հրահանգի էլ դաշնակցական պատգամաւորների խմբակը ընականօրէն Դումայում համերաշխութեամբ էր գործելու սոց յեղափոխականների խմբի հետ, և մինչև իսկ այս կամ այն ձևով յարելու էր նրանց, քանի որ այդ էր պահանջում ընդհանուր քաղաքական բոպէի օրպիսութիւնը և հայայն պետական պատասխանի ներքին կազմը, այդպէս էր տրամադրում նաև նոյն ինքն Դաշնակցութեան կուսակցութեան սեփական բնոյթը։

Այդ կերպ վարելու հէնց առաջուց արդէն տրամադրում էր Դաշնակցութեան ոչ թէ մի նեղ ու զուտ ազգային, այլ սոցիալիստական (հայ սոցիալիստական) կուսակցութիւն հանդիսանալը, և առաջց սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութեանը իր աշխարհայեացքով, ծրագրի ու տակտիկայի օգով ու ուղղութեամբ Հ. Յ. Դաշնակցութեան խիստ նման, համասեռ լինելը։

Սակայն այդ բնական տրամադրութիւնն ու ներքին հակումը մի անխուսափելի անհրաժեշտութիւն էր դարձնում դաշնակցական պատգամաւորների խիստ քչուր, ընդամենը երեք հոգի լինելը։ Առանձնացած, մենակ մնալով, Պետ. Դումայի աջքի ընկնող որև է ֆրակցիայի չը յարելով, այլ միայն երեքով մի առանձին խումբ կազմելով՝ դաշնակցականները կորչելու էին հարիւրաւոր պատգամաւորների և պատգամաւորների տասնեակներից բաղկացած ֆրակցիաների ստուար զանգուցի խորքերում, առանց հնարաւորութիւն ունենալու որն է ազդեցութիւն գործելու որև է խնդրի լուծման եղանակի վրայ, առանց Դումայի որև է յանձնաժողովի անդամ ընտրել կարողանալու։ Մինչդեռ սոցիալիստ յեղափոխականների խմբին Դումայում միանալու շնորհիւ դաշնակցական պատգամաւորները ընտրեցին Դումայի բոլոր կարևոր յանձնաժողովների անդամ. միևնոյն ժամանակ Պետ. Դումայի վճիռների և ռեզոլիւցիաների վրայ հարկաւոր դէպքում ցանկալի ազդեցութիւն գործելու համար հնարաւոր էր դառնում ոչ միայն սոց յեղափոխականների ձայներն ստանալ, այլ և սրանց միջոցով և միջնորդութեամբ նաև միւս ձախակողմեան ֆրակցիաների ձայներից օգուտ։

Այս հանգամանքը արժանի է ուշադրութեան, քանի որ այդ

միանալը կամ յարելը *) Ռուսական Հայաստանի աշխատաւոր ժողովրդի պատգամաւորութեան համար մի մշտական անհրաժեշտութիւն է մնալու նաև ապագայում։

Նորերս յեղաշրջուած նախկին ընտրական օրէնքը (1905 թ. օգոստոսի 6-ի և դեկտեմբերի 11-ի օրէնքները Պետական Դումայի ընտրութիւնների մասին), ինչպէս յայտնի է, Անդրկովկասի ժողովրդին չէր տալ այնքան պատգամաւոր ընտրելու իրաւունք, որքանի որ իրաւունք պէտք է ունենար Անդրկովկասը իր ազգաբնակութեան թւի համեմատութեամբ։ Ներկայումս, յունիսի 3-ի նոր «օրէնքը» այդ թիւը այնքան է քչացնում, որ Ռուսական Հայաստանի ժողովրդի պատգամաւորութիւնը գրեթէ չը-քանում է Պետ. Դումայում։ Սակայն, երբ Անդրկովկասի ազգաբնակութիւնը լիովին կը ստանայ արդարութեամբ իրեն հասնող թւով պատգամաւորներ ընտրելու իրաւունքը, դարձեալ Ռուս. Հայաստանի աշխատաւոր ժողովրդի պատգամաւորութիւնը, համեմատած պառլամենտի ընդհանուր թւին, այնքան փոքրաթիւ է լինելու, որ Պետական Դումայում մի բոլորովին ստանձին խումբ կազմելը միշտ էլ անհնարին է մնալու։

Հետևապէս ինքնըստինքեան պարզ է, որ այս անհրաժեշտ միացման ամենանպատակայարմար ձևերը և եղանակները մշակելու ու որոշելու խնդիրը տեսական կարևորութիւն ունեցող մի հարց է, որի լուծման առաջին փորձը կատարուեց երկրորդ Պետական Դումայում՝ դաշնակցական պատգամաւորների խմբակի և սոցիալիստ-յեղափոխական պատգամաւորների խմբի միացմամբ։

Միանալուց, մի ընդհանուր խմբակին կարգապահութեան ենթարկելուց, միշտ համերաշխ ընթանալուց, փոխադարձաբար իրար աջակցելուց, միմեանց ձայները և ուժերը փոխանակելուց անշուշտ շահելու են Դումայում միացող երկու կողմն էլ թէ բարոյապէս և թէ գործնական հետևանքների տեսակէտից։ Եւ եթէ այս փոխադարձ աջակցման խնդրում միացողներից աւելի փոքր, աւելի թոյլ կողմը աւելի է շահելու, քան աւելի զօրեղ կողմը,

*) Խօսքս այստեղ դաշնակցական պատգամաւորների խմբակի և այլ կուսակցութիւնների պառլամենտական խմբերի կամ ֆրակցիաների Դումայում միանալու կամ միմեանց յարելու մասին է։ Նոյն ինքն կուսակցութիւնների Դումայից դուրս միանալու, դաշնակցելու խնդիրը, որ անշուշտ սերտ առնչութիւն ունի շօշափած հարցի հետ, տեղեկագրիս սահմանից դուրս է։

բայց և միևնույն ժամանակ աւելի թոյլ կողմը վտանգի է ենթարկուում ձուլելիս-կորչելու աւելի մեծի մէջ, նսեմանալու, զրկելու իր ինքնուրոյնութիւնից։ Այս վտանգից խուսափելու էր ըստ կարելոյն։

Ահա թէ ինչու որքան էլ որ անհրաժեշտ չինէր մի այլ խոշոր կուսակցութեան ֆրակցիայի հետ միանալը, սակայն միւս կողմից էլ նոյնքան ցանկալի էր, որ դաշնակցական փոքրիկ խմբակի ուրոյն կուսակցականութիւնը Պետական Դումայում խպառ չը նսեմանար։ Հետևապէս, պէտք էր միացման մի այնպիսի ձև մշակել և իրականացնել, որպէսզի Դաշնակցութիւնը և դաշնակցական փոքրաթիւ պատգամաւորութիւնը թէպետ և ոչ իբրև բոլորովին առանձին կուսակցութիւն կամ ֆրակցիայ հանդէս գար Պետական Դումայում, բայց և այնպէս իր որոշ ինքնուրոյնութիւնը պահած լիներ։

Ուրեմն պէտք էր որոշել դաշնակցական պատգամաւորների բոնելիք դիրքը Դումայի սոց.-յեղափոխական խմբի վերաբերմամբ։ Բայց այդ յարաբերութեան խնդիրը մինչև վերջն էլ վերջնականապէս և կատարեալ որոշակիութեամբ չը ձևակերպուեց, որովհետև սոց.-յեղափոխականների խմբի ընդհանուր կազմակերպումը դեռ չէր մշակուել վերջացել, երբ Դուման փակուեց. խմբի Կանոնադրութեան նախագծի միայն մի մասը քննուել և հաստատուել էր կուսակցական պատգամաւորների ընդհանուր ժողովի կողմից. իսկ դաշնակցական պատգամաւորների խմբակի առանձնայատուկ կազմակերպչական դիրքը և մասնակցութեան եղանակը որոշելուն և ձևակերպելուն կարելի կը լինէր ձեռնարկել միայն խմբի ընդհանուր կանոնադրութիւնը մշակելուց յետոյ։ Սակայն և այնպէս, որքան էլ անմշակ էր դեռ այդ խնդիրը, բայց էլի դաշնակցական պատգամաւորների կուսակցական ինքնուրոյնութիւնը Դումայում և Դումայի սոց.-յեղափոխականների խմբում խպառ չը ջնջուեց։

Այս կողմից նախ և առաջ խիստ նպաստաւոր էր այն հանգամանքը, որ սոց.-յեղ. պատգամաւորները Պետ. Դումայում կուսակցական ոչ թէ ֆրակցիա, այլ խումբ (группа) կազմեցին. այսինքն այդ պատգամաւորների Դումայի միութիւնը սոց.-յեղափոխական կուսակցութեան կեդրոնական բարձրագոյն մարմնին (Կեդրոնական Կոմիտէին, Ц. К.) չէր ենթարկուում, նրանից

պարտադիր կարգադրութիւններ և դիրեկտիւներ չէր տանում. սոց.-յեղափոխականների Դուստայի խմբի և Կեսարոնական Կոմիտէի ու ամբողջ սոց.-յեղ. կուսակցութեան համերաշխութիւնը և միութիւնը հիմնելու էր ոչ թէ խմբի պաշտօնական կախման և վարչական ու կազմակերպչական ենթարկման վրայ, այլ բարոյական կապակցութեան և ներքին համախոհութեան վրայ, կուսակցութեան պարագլուխների ազդեցիկ հեղինակութեան վրայ և, որ ամենից գլխաւորն է, կուսակցական պատգամաւորների և համակուսակից անհատների համոզմունքների ու տրամադրութիւնների ընդհանրապէս միանմանութեան վրայ։ Սոց.-յեղ. խումբը սոց.-յեղ. կուսակցութեան վերաբերմամբ անկախ և ինքնօրէն (աւտոնոմ) լինելով՝ դաշնակցական պատգամաւորների խմբակը սոց.-յեղափոխականների հետ միանալով և պառլամենտական միացեալ խմբում մի ընդհանուր կարգապահութեան ենթարկւելով՝ սոց.-յեղափոխական կուսակցութեան զուտ կուսակցական մարմինին (Ц. К.-ին) չէր ենթարկւած լինում, որով վերացւում էր այն որոշ չափի անյարմարութիւնը, որ մի կուսակցութեան պատկանող պատգամաւորներ (դաշնակցականները) ենթարկւէին և ստորադրւէին մի այլ կուսակցութեան Կեսարոնական Կոմիտէի իշխանութեանը։ (Դաշնակցական պատգամաւորներս էլ նոյնպիսի անկախութիւն և ինքնօրինութիւն ունենալով մեր կուսակցութեան զեկավար մարմինների վերաբերմամբ, սոց.-յեղափոխական և դաշնակցական պատգամաւորների միանալու գործը խիստ դիւրանում ու պարզ մի խնդիր էր դառնում)։

Պէտք էր որ նաև խմբի մէջ, ներքին կեանքում և յարաբերութիւններում էլ դաշնակցական խմբակը որոշ անկախութիւն ու ազատութիւն ունենար, որպէսզի դաշնակցականների թիւը (մեր պատգամաւորը) սոց.-յեղափոխականների թիւ (մօտ 35 պատգամաւոր) հետ համեմատած խիստ փոքր լինելով, իրենց ձայնը խստօրէն չը խեղդւէր։ Այս նպատակով դաշնակցական խմբակի կապակցումը սոց.-յեղափոխականների խմբին ոչ թէ մի ձուլում էր, այլ որոշ տեսակի յարում։ Դաշնակցական պատգամաւորներն առանձին-առանձին չը ձուլւեցին ընդհանուր խմբում, այլ որոշ խնդիրներում մնացին իրրև մի առանձին խմբակ նրան կից. այսպիսով ստացւեց մի միացեալ խումբ՝ սոց.-յեղափոխականների խմբից և դաշնակցականների խմբակից բաղկացած։

Երեք դաշնակցական պատգամաւորների սրոշ չափով մի առանձին խմբակ, ժարմին լինելը այդ միացեալ խորհուրդ շատ դէպքերում որոշ կերպով արտայայտութիւն էր գտնում։ Օր. խմբի մի քանի սրոնումները յայտարարեցին ոչ թէ «Պետ. Դումայի սոց.-յեղափոխականների խմբի» կողմից, այլ «Պետ. Դումայի սոց.-յեղափոխականների և նրանց յարող դաշնակցական պատգամաւորների խմբի կողմից». նմանապէս խմբի վերջին Ազգը աշխատաւոր ժողովրդին ուղղուած յայտարարուեց «Դումայի սոց.-յեղափոխական և դաշնակցական պատգամաւորների խմբից։ Ուրեմն խումբը թէ իրօք և թէ անունով սոց.-յեղափոխականների խումբ չէր, այլ միացեալ խումբ սոց.-յեղափոխական և դաշնակցական պատգամաւորների։ Խմբի կոմիտէի ընտրութեան ժամանակ որոշուեց, որ կոմիտէն 5 անդամից բաղկանայ, 4-ը սոց.-յեղափոխականներից, մէկը դաշնակցականներից, և առաջին չորսին ընտրեն սոց.-յեղափոխականները, իսկ վերջին մէկի ընտրութիւնը թողին դաշնակցականների խմբակին (ընտրուեց Ս. Տիգրանեանը)։ Նմանապէս Դումայի յանձնաժողովների ընտրութիւնների ժամանակ մեծ մասամբ մի թեկնածու նշանակելու իրաւունքը մեր խմբակին էին տալիս, և մեր կողմից որոշուածը (մեզանից մէկը) այնուհետև՝ իբրև ամբողջ միացեալ խմբի թեկնածու՝ ընտրւում էր Դումայի կողմից յանձնաժողովի անդամ։

Այս բոլոր դէպքը աչքի առաջ ունենալով կարելի է ասել, որ դաշնակցական պատգամաւորներս՝ մեր մէջ մի ամբողջութիւն կազմած լինելով, մօտաւորապէս ոչ թէ ձուլւում էինք սոցիալ-յեղափոխականների խմբի մէջ, այլ աւելի շուտ այդ խմբին համերաշխ գործող մի դաշնակից հանդիսանալով՝ նրա հետ մի դաշնակցական (ֆէդէրատիւ) միութիւն, մի միացեալ խումբ էինք կազմում։

Այս էր մեզ դեկավարող կազմակերպչական սկզբունքը սոց.-յեղափոխականների խմբի հետ Դումայում մեր ունեցած յարաբերութիւններում, որ և աշխատում էինք ըստ կարելոյն իրագործել և ձևակերպել դաշնակցական խմբակի ուրոյն կուսակցականութիւնը որոշ չափով ապահոված լինելու համար։

Ինչպէս յիշեցի որոշ ձևական կանոնագրութեամբ դեռ չեր ձևակերպւած փոխադարձ յարաբերութիւնների, իրաւունքների ու պարտականութիւնների այս եղանակը, և ընդհանրապէս դաշնակ-

ցական և սոցիալ.-յեղափոխական պատգամաւորների եռամսեայ սերտ շփման և անընդհատ համերաշխ ու միասին գործունէութեան ընթացքում փոխադարձ հաստատ վստահութեան, ընկերական համակրութեան և ներքին համախոհութեան զգացմունքներն էին կառավարող հանդիսացողը մեր միութեանը, բան որև է պաշտօնական կանոնադրութիւն կամ ձևական պայմանագրութիւն։ Փոխադարձ ծանօթացման սկզբնական կարճատև շրջանին Դումայում շուտով փոխարինեց ընկերական վստահութեան և սերտ մտերմութեան մի շրջան, երբ երկու կողմից էլ այլևս «օտարի» և «իւրայինի» խտրութիւն երբէք չը դրեց. սոց.-յեղափոխականների կողմից և անունից զանազան յանձնարարութիւններ ստանձնելը, բանակցութիւններ վարելը դաշնակցական պատգամաւորների համար մի սովորական երևոյթ էր դառնում, և մենք, երեք դաշնակցական պատգամաւորներս, մեր համեստ ուժերի ներածի չափ, աշխատում էինք օգտակար լինել թէ մեր ընդհանուր միացեալ խմբին և թէ առանձնապէս սոց.-յեղափոխականներին։

III.

Դումայի պատգամաւորների գործունէութիւնը երեք տարբեր շրջաններում է կատարւում. 1) Դումայի ամբիոնի վրայ, 2) Դումայի յանձնաժողովներում և 3) զանազան կուսակցութիւնների Դումայի ֆրակցիաներում կամ խմբերում։ Այս երեք շրջաններից ամենից քիչ բան է յայտնի հասարակութեանը վերջին երկուսի մասին։

Դումայի յանձնաժողովների նիստերը ժամանակաւոր են լինում. մամուլի ներկայացուցիչները ներկայ չէին գտնուում, այլ միայն յանձնաժողովների անդամներից մէկից-միւսից հարցնելով՝ կցկտուր, երբեմն էլ մինչև իսկ անճիշտ տեղեկութիւններ էին տարածում։

Մինչդեռ յանձնաժողովները նախապատրաստական, բայց կարևոր նշանակութիւն ունէին։

Ինչպէս էլ որ նայելու լինենք Դումայի վրայ՝ արդէօք սովորական օրէնսդրութեան թէ համատարած ագիտացիայի օգտի վերայ, յանձնաժողովների աշխատանքի կարևորութիւնը չի ժխտուի։ Միայն թէ այդ նշանակութեան իմաստը զանազան կերպով

կհասկացուի։ Ի հարկէ սխալ էր կաղէտների հայեացքը Բ. Դումայի յանձնաժողովների կատարելիք գործերի մասին. օրինագծեր ձեռանօրէն մշակելն ու պատրաստելը չէր նրանց գործունէութեան բուն իմաստը, որովհետև շնորհիւ Դումայի և յանձնաժողովների ընդհանրապէս դիմադիր ողղութեան՝ այդ օրինագծերը այնպիսի բովանդակութիւն էին ունենալու որ կառավարութեան խիստ յետադէմ քաղաքականութեան պատճառով երբէք հաստատուելու և գործող օրէնք դառնալու չէին։ Հետևապէս ինչպէս որ նոյն ինքն Դումայի, այնպէս էլ նրա յանձնաժողովների գործը լայն և զօրեղ ագիտացիայի մէջ պէտք էր տեսնել։ Յանձնաժողովները նախապատրաստական աշխատանքն էին կատարում այս ագիտացիոն գործունէութեան համար, որի գլխաւոր տեղը ի հարկէ Դումայի ամբիոնն էր։ Յանձնաժողովների կատարած աշխատանքի շնորհիւ Դումայի ճառախօսութիւնները աւելի պայծառ և բովանդակալից կդառնային անշուշտ հարստանալով փաստացի աւելաւների պաշարով. Դումայի ամբիոնից աւելի առատութեամբ ու ստուգութեամբ կմերկանային ամբողջ ժողովրդի առաջ բիւրոկրատիկ կառավարութեան քաղաքականութեան ու գործունէութեան այլև տիրող օրէնսդրութեան մահացու մեղքերը, աններելի զեղծումները, անտանելի թերութիւններն ու անարդարութիւնը։ Զուրկ չէր յանձնաժողովների աշխատանքը նաև սկզբունքային հետաքրքրականութիւնից։ Զանազան կուսակցութիւնների տարբեր դաւանանքները, թէ ծրագրային և թէ տակտիկային, արդէն այստեղ էին միմեանց ընդհարում, և տարբեր ուղղութիւնների զատումը յանձնաժողովներում հարցերի ամբարկիկտ քննութեան ընթացքում աւելի ու աւելի որոշակի կերպով էր կատարուում։ Բանի որ աջակողմեանները յանձնաժողովներում մեծ մասամբ խիստ թոյլ էին թէ թւով և թէ օրակով, ապա վիճաբանութիւնը ու պայքարը գլխաւորապէս կադէտ և ձախակողմեան (սոցիալիստական) և ուղղութիւնների միջև էր տեղի ունենում, որ և չափազանց նպաստում ու զարկ էր տալիս թէ մէկ և թէ միւս կողմի հայեցակէտերի լիակատար զտմանը։ Երբ օրինագծերը և Դումայում արծարծած զանազան խնդիրները յանձնաժողովներում նախապէս քննուելուց յետոյ Դումայում հանդէս կգային, կաղէտ կուսակցութեան և ձախակողմի աշխարհայեացքների ու տրա-

մագրութիւնների տարբերութիւնն ու հակառակութիւնը աւելի ևս զուտած ու պայծառ կերպով էր արտայայտւում։

Դումայի բազմաթիւ և բազմատեսակ յանձնաժողովները իրենց անդամ-պատգամաւորներից ոչ պակաս ժամանակ էին խլում, ոչ պակաս ուժերի ու ուշադրութեան լարում պահանջում քան Դումայի ամբիոնը։ Կային պատգամաւորներ, որոնք յանձնաժողովներում աւելի դնահատելի, օգտաւէտ և արդասաւոր աշխատանք էին կատարում, քան Դումայի ընդհանուր նիստերում։

Կուսակցական ֆրակցիաների և խմբերի ժողովներում նախապէս ուսումնասիրւում և քննւում էր նոյն կուսակցութեան ուղղութեան տեսակէտից Դումայում առաջ գալիք իւրաքանչիւր խնդիր. նոյն խմբական ժողովում երբեմն որոշւում էր խմբի կողմից և նախաձեռնութեամբ յարուցանել Դումայում այս կամ այն հարցը. նոյն ֆրակցիական ժողովներում առաջուց վճռւում էր խմբի և կուսակցական պատգամաւորների բանելիք դիրքը Դումայում կատարելիք ճառախօսութիւնների և քէֆարկութիւնների ժամանակ. կարևոր և լուրջ խնդիրների դէպքում նոյն այս կուսակցական ժողովում պատրաստւում և ընդունւում էր ֆրակցիայի կողմից Դումային առաջարկելիք ռէզոլիւցիան, և խմբի որոշմամբ ու ընտրութեամբ երբեմն յանձնարարւում էր խմբի որոշ անդամին խօսել Դումայի ամբիոնից կուսակցական ամբողջ ֆրակցիայի կողմից։ Ի հարկէ, խմբական կամ ֆրակցիական կարգապահութեան համաձայն՝ խմբի իւրաքանչիւր անդամ-պատգամաւոր այնուհետև պարտաւորւում էր Դումայում իր ճառերում և ձայնաւորութեան միջոցին վարել խմբի սահմանած դիրեկտիւների համեմատ։

Բացի սոցիալիստ-յեղափոխականների և դաշնակցականների միացեալ խմբի ժողովներին մասնակցելուց, դաշնակցական պատգամաւորները ունենում էին նաև իրենց խմբակի խորհրդակցութիւնները։

Երկրորդ Դումայում գոյութիւն ունէր ինֆորմացիայի (տեղեկատու) բիւրոյ, մի մարմին, ուր երբեմնակի հաւաքւում էին կադէտական, ընդհանրապէս կեսրոնի և ձախակողմեան ֆրակցիաների ներկայացուցիչները փոխադարձաբար տեղեկութիւններ տալու և ստանալու այդ ֆրակցիաների որոշումների և ընդհանրապէս Դումայում անելիք քայլերի մասին։ Վերջերը ձախակող-

մեռնները հակումն էին ցոյց տալիս հրաժարելու որև է ինքնիշխանացիայ ընդունելուց կետրոնի վերաբերմամբ, ինչպէս որ աշակողմի համար հրաժարել էին հենց սկզբից։

Դումայի թէ ընդհանուր նիստերում և թէ յանձնաժողովներում դաշնակցական պատգամաւորների խմբակի մասնակցութիւնը երկու տեսակ բնաւորութիւն ունէր. մէկ՝ ընդհանուր պետական, համայն Ռուսաստանի, երկրորդ՝ յատուկ տեղական, Հարաւային Կովկասի և կամ Ռուսական Հայաստանի, որի ընտրեալներն էին։ Նայած յարուցած և քննելիք հարցի բնաւորութեանը դաշնակցականների մասնակցութիւնը երբեմն էլ միաժամանակ թէ ընդհանուր պետական և թէ տեղական բովանդակութիւն էր ստանում. և այդպէս էլ էին հարցերը մեծ մասամբ։

Նոյնը և սոց.-յեղափոխականների ու դաշնակցականների միացեալ խմբում՝ որոշ խնդիրներում դաշնակցական պատգամաւորները հանդէս էին գալիս իբրև յատկապէս կովկասցի պատգամաւորներ և սոսկ տեղական պէտքերի ու պահանջների արտայայտիչ, իսկ մնացած դէպքերում ընդհակառակը իբրև ընդհանուր պետութեան քաղաքացի և պատգամաւոր։ Խնդիրների և դերերի այս երկու կարգի բաժանումը միացեալ խմբում այն նշանակութիւնն ունէր, որ դաշնակցական խմբակի ֆեդերատիւ դիրքը և որոշ անկախութիւնը երևան էր գալիս առաջին տեսակի դէպքերում։ Այսպէս երբ Դումայում քննւող խնդիրը Հարաւային Կովկասի համար տեղական առանձնայատկութիւն և նշանակութիւն էր ունենում, դաշնակցականների՝ Դումայի ամբիոնի վրայ հանդէս գալը կախւած էր միմիայն դաշնակցական խմբակից. երբ Դումայի ընտրելիք յանձնաժողովի մշակման առարկան Հարաւային Կովկասի համար տեղական ուրոյնութիւն և կարևորութիւն ունեցող մի հարց էր լինում, միացեալ խմբի կողմից առաջարկուելիք թեկնածուներից մէկին որոշում էր դաշնակցական խմբակը (այսպէս եղաւ օր. Մատակարարողական—Ս. Տէր-Աւետիքեան,

Հետեւեալ ծանօթութիւնը պատկանում է 16-րդ երեսին.

*) Մի քանի անգամ ընդհանուր խորհրդակցութիւն տեղի ունեցաւ դաշնակցական պատգամաւորների և միւս հայ կադէտ պատգամաւորների (Գարսի նահանգի—Յ. Աթաբէկեան և Նոր-Նախիջևան քաղաքի-Աճեմեան) յատկապէս հայ ժողովրդին և Հարաւային Կովկասին վերաբերեալ խնդիրների մասին։

հոգի, տեղական գատարանի և տեղական ինքնավարութեան—Ց. Մադաթէլեան—յանձնաժողովների ընտրութիւնը)։ Իսկ ընդհանուր խնդիրների դէպքում դաշնակցականներիս խմբակի առանձնութիւնը վերացուում էր. դաշնակցական պատգամաւորներս խառնըւում էինք սոց.-յեղափոխական պատգամաւորների հետ միասին, ընդհանուր բէլարկութեամբ էինք կատարում որոշումներն ու ընտրութիւններն. և եթէ այս կարգի խնդիրներում ընտրում էին մեզանից մէկն ու մէկին, ապա այդ ընտրութիւնը կատարուում էր արդէն ամբողջ միացեալ խմբի, և ոչ թէ միայն դաշնակցականներիս որոշմամբ, և Դումայի համապատասխան յանձնաժողովի անդամ մեզ ընտրել էին տալիս իբրև ընդհանուր պետական ներկայացուցչի (օր. ժողովրդի լուսաւորութեան, ամնիստիայի և սոցիալ-դէմոկրատների վերջին դատի յանձնաժողովների անդամ այս եղանակով ընտրեցին Ս. Տիգրանեանին)։ Նման տեսակի խնդիրներում երբեմն նոյնպիսի եղանակով յանձնարարուում էր դաշնակցականներից մէկին խօսել Դումայի ամբիոնից ամբողջ միացեալ խմբի կողմից (օր. այսպէս յանձնարարուել էր Մադաթէլեանին խօսել տեղական գատարանի մասին, Ս. Տիգրանեանին—խօսել տեսորբ, ամնիստիայի, ժողովրդական լուսաւորութեան, յանցագործութիւնների զոլասանքը պատժելու օրինագծի մասին)։

—

Համայն պետութեան ընդհանուր քաղաքական ծանր դրութեան նորմիւ, երբ քաղաքացիական ազատութիւնները ոչ միայն, թէկուզ համեստ չափով, տակաւին իրականացած չեն Ռուսաստանում, այլ անորոշ ապագայում իրականացնելիք բաղձանք են հանդիսանում, երբ Պետ. Դումայ ասածդ ոչ միայն պառլամենտի իրաւունքներից զուրկ մի ժողով է, այլ մինչև իսկ բնաւ չէ կարող իւր ներկայ վիճակում մի ապահով ու հաստատուն գոյութիւն ունեցող պետական հիմնարկութիւն համարել, երբ լայնատարած և բազմազգի պետութեան ոչ մի վայր, ոչ մի ազգ դեռ չի վայելում սահմանադրական կարգերի ազատութիւնները, այլ բոլորն էլ աւելի կամ պակաս չափով հեծում են անսահման բիւրոկրատիայի անձայր կամայականութեան անրաժան ու անարդիչ տիրապետութեան տակ՝ իրերի մի այնպիսի վիճակ էստեղծել, որ նոյն իսկ յատուկ ու տեղական ընոյթ ունեցող հարցերը, պետութեան այս կամ այն մասին առանձնապէս վերաբերեալ, անքակտելիօրէն շաղ-

կապված և միախառնված են հանդիսանում համայն պետութեան մէջ եղող միւս բոլոր ազգերին և տարբերին ու վայրերին վերաբերեալ հարցերի հետ։

Քաղաքական բոլէն և կացութիւնը այսպէս լինելով՝ Դաշնակցական պատգամաւորները մինչև իսկ յատկապէս Կովկասին վերաբերեալ խնդիրները քննելիս և լուսաբանելիս բնականաբար ընդհանուր պետական պայմանների և կարգերի հետ պիտի կապէին Հարաւային Կովկասեան ուրոյն դէպքերն ու անցքերը, և ոչ թէ հակադրէին, այլ սերտ կապակցէին Հարաւային Կովկասի վիճակը համայն պետութեան ընդհանուր կացութեան հետ, ցոյց տալով դրանց օրգանապէս շաղկապված և փոխադարձաբար պայմանաւորված լինելը։

Սակայն և այնպէս, ընդհանուր պետական հայեցակէտին առաջնակարգ տեղ և դեր տալով հանդերձ՝ դաշնակցական պատգամաւորները չէին կարող բոլորովին չէզոքանալ Հարաւային Կովկասեան տեղական ինքնուրոյնութեան վերաբերմամբ, ինչպէս որ վարեցին օր. Վրաստանի սոցիալ-դեմոկրատ պատգամաւորները։ Կենդանի գործի մի կուսակցութիւն լինելով, նեղված տառապող աշխատաւոր ժողովրդի ամենայն խաւերի շահերը դրականապէս դարմանելու նպատակին, Դաշնակցութիւնը թելադրում էր իր կուսակցական պատգամաւորներին երբէք աչքաթող չանել տեղական առօրեայ կեանքի օր. մի այնպիսի չարիք, որպիսին էր կովկասեան սովը։ լիակատար ժողովրդապետութեան և ազգերի իրական հաւասարութեան մի կուսակցութեան պատկանելով՝ դաշնակցական պատգամաւորները չէին կարող երբէք անուշադիր թողնել ապակենտրոնացման, երկրային և ազգային ինքնորոշման պահանջները օր. տեղական ինքնավարութեան, դատարանի, ժողովրդի լուսաւորութեան և հողի խնդիրների քննութեան ժամանակ։

Եւ ահա պէտք է յիշատակել, որ տեղական խնդիրները և շահերը շօշափելիս և արծարծելիս դաշնակցական պատգամաւորների հայեցակէտը միշտ ընդհանուր Հարաւային Կովկասեան էր և ոչ թէ զուտ հայկական կամ սոսկ Ռուսական Հայաստանի։ Արդեօք սովի հարցն էր հրապարակ գալիս, թէ հողի խնդիրը, թէ Կովկասին վերաբերեալ մի այլ հարց՝ դաշնակցականները, իբրեւ կուսակցական քաղաքական ծրագրի համա-

ձայն. հանդէս էին գալիս ոչ թէ իբրև հայ պատգամաւորներ լոկ հայ ժողովրդի կամ Ռուսական Հայաստանի ներկայացուցիչ և պաշտպան, այլ որպէս կովկասցի և Հարաւային Կովկասի, իբրև մի միութեան, մի ամբողջական մարմնի, շահերի և կարիքների պաշտպան և թարգման։ Բովանդակ Հարաւային Կովկասի աշխատաւոր ժողովուրդը առանց ազգի և հաւատի խտրութեան՝ ահա դաշնակցական պատգամաւորների տեսակէտը տեղական հարցերում։

Եւ այս կէտում որոշակի կերպով երևան էր գալիս հայ դաշնակցական պատգամաւորների ինքնուրոյն դիրքն ու հայեցակէտը մնալով Հարաւային Կովկասի նահանգներից և քաղաքներից ընտրուած՝ այլ կուսակցութիւնների և ազգութիւնների պատկանող պատգամաւորների հետ համեմատած։

Վրաստանից ընտրուած վրացի սոցիալ-դեմոկրատ պատգամաւորները Թիֆլիս քաղաքից ընտրուած սոց.-դեմոկրատ հայ պատգամաւորի հետ Դումայում խսպառ չէզոքացան տեղական որևէ զուտաւորութիւնից։ Ընդհանրապէս բոլորովին անտես առնելով և արհամարհելով տեղական ուրոյնութեան և ընիկ շրջապատի իրականութեան հայեցակէտը՝ նրանք դիտակցօրէն շեշտում էին միմիայն զուտ ընդհանուր պետական տեսակէտը և լոկ կեսրոնացուցիչ (ցենտրալիզացիայի) տեսակէտով մօտենում նաև տեղական կովկասեան հարցերին։ Հարաւային Կովկասը նրանց համար մի օգանիկ ամբողջութիւն, իրական միութիւն չէր ներկայանում, այլ կարծես բազմաթիւ նահանգների մի շարք՝ անկապ, իրարից իրապէս պատած, և ոչ թէ կեանքում փոխադարձաբար շաղկապուած, այլ լոկ վարչականօրէն պատահարար միացուած՝ բիւրոկրատիական կառավարութեան յարմարութեան համար։ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան կողմից ազգային և ապակենտրոնացման խնդիրների ժխտման սկզբնական մեղքի արդիւնքն էր ի հարկէ Վրաստանի սոցիալ-դեմոկրատ պատգամաւորների այդպիսի դիրքն ու վերաբերմունքը, որը դժգոհութեան ատիթ եղաւ ոչ միայն վրացի ժողովրդի *), այլ նաև նոյն ինքն

*) Մատնանիշ անելով վրացի սոցիալ-դեմոկրատ պատգամաւորների անտարբերութիւնը դէպի Վրաստանի ժողովրդի կարիքները, վրաց «Իսարի» թերթը գրում էր. «չենք կարող լռութեան տալ մի կարևոր հանգամանք, որ չափազանց յաւէլ պատճառում մեզ, այդ այն է, որ մեր երկրի այսպիսի աննախանձելի վիճակի ժամանակ անգամ մենք չունենք մեր երկրից Պետ-

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի Լոնդոնի վերջին համագումարի կողմից. սա մատնանիշ անելով և դատապարտելով երկրորդ Դումայի սոցիալ-դեմոկրատ ֆրակցիայի անուշադիր վերաբերմունքը ազգային և տեղական ինքնօրինության պահանջներին, պարտաւորեցնում էր առաջիկայում աւելի հետաքրքրութիւն և եռանդ նուիրել այդ կենսական խնդիրներին։ Բայց երկրորդ Դումայի սոցիալ-դեմոկրատ ֆրակցիայի հանար արդէն ուշ էր այդ ազդարարումը... Դուման շուտով փակուեց, ֆրակցիան ցրուեց։

Միւս կողմից, Հարաւային Կովկասի կենտրոնական և արևելեան շրջաններից (Ռուսական Հայաստանից և Թաթարստանից) ընտրուած թաթար պատգամաւորները ընդհանրապէս հեռու լինելով ներկայ խնդրի նկատմամբ տեսականօրէն որ և է մտածուած քաղաքական հայեցք ունենալուց, իրօք տրամադրութիւն էին ցոյց տալիս (թերևս անդիտակցաբար) հակառակելու համար Հարաւային Կովկասեան հայեցակէտին և ինքնօրինութեան պահան-

---

Դումայում արժանի ներկայացուցիչներ, մեր ժողովրդի դարդն ու ցաւը հասկացող իսկական պատգամաւորներ։ Նպաստամատոյց կոմիտէի նիստին վրացի սոց.-դեմ. պատգամաւորների բացակայութեան տոիթով Նոյն թերթը հարցնում է. «ուր էին ապա այդ ժամանակ Քութայիսի և Թիֆլիսի պատգամաւորները։ Ամբողջ Վրաստանը Պետ. Դումային տուել է 8 պատգամաւոր. այդ ինչ մի արտակարգ բան էր պատահել, որ ուրեմն էլ կարելոր էին համարել մի ամսով բացակայել Պետերբուրգից (Լոնդոն), այն էլ այնպիսի մի կարևոր ժամանակ։ Դժբախտութիւնը նրանումն է, որ յիշեալ 8 պատգամաւորները իրենց կուսակցական զանազան խնդիրներն աւելի են գերադասում, քան մի ամբողջ երկրի, ամբողջ ժողովրդի կարիքը։ Հակառակ պարագայում, եթէ սրանք իսկական ներկայացուցիչներ լինէին, անշուշտ իրենց ընկերներից մի մասին կը թողնէին Պետերբուրգ հերթական խնդիրները պաշտպանելու։ Սովնամներին օգնելու զորձում բանն այն վիճակին հասցրին, որ Արևելեան Կովկասի ներկայացուցիչները տրիպուած էին իրենց վրայ վերցնել Վրաստանի ժողովրդի շահերի պաշտպանումը։ Լանչխութիի զորձը քննելու ժամանակ ամբոխաւոր եղան, չկարողանալով իրենց իսկական դերում մնալ։ Երբ խօսում էր խաղաղացնելու համար կոչված զորձի տրամադրութիւնների մասին Վրաստանում, մեր սոց.-դեմոկրատական հրապարակ եկաւ. Դումայում ամբողջ աշխարհի առաջ շատ թոյլ կերպով, որից աւելի շահուց կառավարութիւնը...» «Վրաց ժողովրդը անարժան մարդկանց ձեռքն է տուել իր շահերի պաշտպանութիւնը», վերջացնում է «Թարին» («Ժամ» № 7)։ Վրացի թերթերի այս դատաստանը վրացի սոց.-դեմոկրատ պատգամաւորների գործունէութեան մասին ունի չափազանցութեան կէտեր, բայց առաջ բերած փաստերի ճշմարտութիւնը մոռանալ անկարելի է։

ջին, և իրենց թէ կուսակցական կազմակերպումը *), թէ ճառերով ու քայլերով սոսկ մանշեվիկանութեան և թաթարութեան այն էլ գլխաւորապէս ֆէոդալ ու բուրժուայ դասակարգերի, շահերի ու պէսքերի ներկայացուցիչ էի հանդիսանում։

Սոցիալ-դեմոկրատ և մանշեվիկական պատգամաւորների այս տրամադրութեան պատճառով անջատողութեան հանդիպեց դաշնակցականների նախաձեռնութեամբ առաջին անգամ երկրորդ Դուսայում կատարուած փորձը՝ կովկասցի պատգամաւորներին ընդհանուր ժողովի հաւաքել կարծիքներ փոխանակելու, բանակցելու և խորհրդակցելու։ Թէ կովկասեան ինքնօրէնութեան և թէ այդ երկրին վերաբերեալ մի քանի կարեւոր ընդհանուր (օր. զեմստուոյի և առհասարակ կառավարչական և կազմակերպչական) խնդիրների համար անհրաժեշտ էր միմեանց հայեացքների տեղեակ լինելը, և եթէ հնարաւոր լինէր, այդ բնֆօրմեների և պահանջների գոնէ հիմունքների վերաբերմամբ որոշ չափով խօսքի գալը։ Վրաստանի սոցիալ-դեմոկրատները գլուխ չը գրին մեր դիմումին. պարզ երևում էր, որ այս խնդիրը բոլորովին դուրս էր նրանց ուշադրութեան սահմանից։ Կովկասցի մանշեվիկանները թէև չը հրաժարուեցին մեր հրաւէրը ընդունելուց, համաձայնեցին ժողովի գալու և մինչև անգամ երկու անգամ որոշ տեղ և ժամ նշանակեցին, բայց չեկան, և ընդհանրապէս ինչ որ կասկածամիտ անվստահութեամբ խոյս տուին միասին խորհրդակցելուց և բանակցելուց։ Երբ դաշնակցականներս սուժամանակ ձեռք վերցրինք

*) Երկրորդ Դուսայում 34 մանշեվիկան պատգամաւոր կար, որոնցից 6-ը Հարաւ. Կովկասից էին (Երևանի, Գանձակի և Բաքւի նահանգներից. բացի այդ 6-ից երկու մանշեվիկան պատգամաւոր էլ կային Դաղստանի և Զաքաթալի նահանգներից ընտրուած)։ Զը նայելով հայեացքների և դասակարգային շահերի տարբերութեանը, սկզբում բոլորը մի խումբ կազմեցին Դուսայում «Մանշեվիկանների խումբ»։ Խմբի մեծամասնութիւնը բաւականին չափաւոր աշխարհայեացքի տէր պատգամաւորներից էր կազմուած, որոնք եթէ կգէաներին էին յարել և ենթարկուել այդ որոշ ազգային-կրօնական պահանջների ինքնուրոյնութեան հնարին էր, որ անկարելի էր դարձնում Դուսայի չափաւոր աջակողմին միանալը։ Սակայն խմբում կային և աւելի ձախակողմեան տրամադրութեան ներկայացուցիչներ, գլխաւորապէս Թուստատանի մանշեվիկաններից ընտրուած, լուրջ խնդիրներում սրանք անջատւում էին միւս մանշեվիկական պատգամաւորներից ձայնատուութեան ժամին։ Մի ժամանակ խումբը կարծես քայքայելու վրայ էր ներքին տարաձայնութեան պատճառով։ Այս առիթով

այդ բան երևութին ապարդիւն ձեռնարկից. սոցիալ-դեմոկրատ պատգամաւորներից մէկը (Լոմթաթիէ) իր նախաձեռնութեամբ, առանց իր համակուսակից ընկերների համաձայնութեան, ժողովի հրաւիրեց մեզ և թաթար պատգամաւորներին։ Այս անգամ կովկասցի մահմեդականներն եկան. ժողովը կայացաւ։ Բայց էլի գործը գլուխ չեկաւ, և այդ առաջին ժողովը նաև վերջինն եղաւ։

IV.

Դաշնակցական պատգամաւորների գործունէութիւնը Դումայում նկարագրելու համար յարմար կը լինէր աչքի անցկացնել ժամանակագրական հերթով երկրորդ Դումայի պատմութեան ընթացքը՝ յիշատակելով դաշնակցականների ունեցած համեստ մասնակցութիւնը։

Դաշնակցութեան խմբակի անդամները ամբիոն են բարձրացել Դումայի 12 նիստում *), ընդամենը 16 անգամ (Մադաթիէլեանը—6 անգամ, Տէր-Աւետիքեանը—4, Տիգրանեանը—6), անդամ են ընտրել և աշխատել յետագայ 8 յանձնաժողովներում՝ Մադաթիէլեանը 1) Հողի, 2) Տեղական Դատարանի և 3) Տեղական ինքնավարութեան. Տէր-Աւետիքեանը—Մատակարարողական (продовольственная), Տիգրանեանը—1) Ազգի ազատութեան, 2) Ժողովրդի լուսաւորութեան, 3) Անձիսատիայի և 4) Սոցիալ-դեմո-

---

մահմեդական պատգամաւոր Շահթախթինսկին, դժգոհելով իրենց խմբի աւելի արմատական անդամներից, գրում էր «Русь» օրաթերթում (ապրիլի 20-ի համարը). «մեր մուսուլման ֆրակցիան իւր ներկայ կազմով ներքին խոր տարաձայնութեան ու պառակտման պատճառով անընդունակ է գործելու. մենք մուսուլմաններս նոյնպիսի մահկանացուներ ենք, ինչպէս ուրիշները. ուստի մենք էլ, բոլոր մարդկանց նման, միասին արդիւնաւէտ աշխատել կարող ենք միայն այն դէպքում, երբ միացած կլինենք այնպիսի խմբերում, որոնք համերաշխ հասարակական-քաղաքական աշխարհայեացքի տէր անձերից կազմած կլինեն»։ Այս ձիւղաւորումը արդէն սկսել էր կատարուել մահմեդական խմբում, մանաւանդ հողի հարցի դրդմամբ։ Դումայի գործունէութեան ընթացքում աւելի ձախակողմեան ուղղութեան հետևողները անջատուեցին և միացան աշխատաւորականների ու ժողովրդական սոցիալիստների խմբերին։ Կովկասցի մահմեդական պատգամաւորները խմբի աջակողմը և զեկավարները հանդիսանալով՝ մինչև վերջն էլ մնացին մահմեդականների խմբում։

*) Երկրորդ Դումայի բոլոր նիստերի ընդհանուր թիւը 53 էր։

կրատ պատգամաւորներին դատի ենթարկելու յանձնաժողովը-ում։ (Բացի դրանից Տիգրանեանը նախագահ ընտրեց Դումայի IX-րդ Բաժնում (Отдѣлъ)։

Ցեսագայ տողերը թող ցոյց տան մեր քայլերի պատկերը Դումայում։

—

Ընտրութիւնները վաւերացնելու հարցը։ Դումայի հէնց առաջին նիստերից մէկում (հինգերորդ, 6 մարտի), երբ քննւում էր պատգամաւորների ընտրութիւնների օրինաւորութիւնը, հարց ծագեց, թէ ինչ հիման վրայ փոխարքայի կարգադրութեամբ Երևանի ու Դանձակի նահանգական ընտրական ժողովները երկու մասի են բաժանւել ըստ պաւիրակների կրօնի, իսկապէս ազգութեան, և այնուհետև պատգամաւորների ընտրութիւնը առանձին-առանձին կատարել։ Այս հարցը յարուցանողների նպատակը յիշեալ նահանգների ընտրութիւնը բեկանելը, չվաւերացնելը չէր, այլ ստուգելը, արդեօք Կովկասի փոխարքան ունէր իրաւունք պաւիրակների այդպիսի մի բաժանում անելու, թէ այդ նրա կողմից մի ապօրինի հակասահմանադրական միջամտութեան քայլ պէտք է համարել։ Խնդիրն այն է, որ ոչ ընդհանուր ընտրական Պոլոժենիէում, ոչ Կովկասի յատուկ ընտրական օրէնքում այդ բաժանման մասին ոչինչ չկար ասւած, այդ բաժանումը սահմանւած էր կայսերական առանձին հրովարտակով։ Եւ ահա առարկողներն ասում էին, թէ այդպիսի իրաւունք փոխարքային բարձրագոյնս տրւած է եղել միայն առաջին Դումայի ընտրութիւնների համար. իսկ թէ այս անգամւայ (Բ. Դումայի) ընտրութիւնների ժամանակ փոխարքան այդպես իրաւունք չէ ունեցել այդպիսի բաժանում կատարել տալու։

Ընդունելով պաւիրակներին երկու ընտրական կուրիայի բաժանելու կարգը պռոպորցիոնալ ընտրութեան մի որոշ տեսակ, որով գործող անկատար ընտրական կարգերի ժամանակ ապահովւում է նահանգի փոքրաման ազգութեան ներկայացուցչութեան իրաւունքը (թաթարներինը Երևանի և հայերինը Գանձակի նահանգում), դաշնակցական պատգամաւորները պաշտպանեցին յիշեալ նահանգներում երկու առանձին կուրիաներով ընտրութիւն կատարելու ձևը։ Պատգամաւոր Տիգրանեանը ծանօթացնելով Դումային այդ եղանակի հետ, մատնացոյց արեց, որ այդ

բաժանումը ազգարնակութեան և ընտրութեան շահերի տեսակէտից նպատակայարմար մի կարգ է, որ գոյութիւն ունի ժողովրդի ցանկութեան հակառակ, և որ բանի որ այդ առիթով չկայ և ոչ մի բողոք, ոչ մի գանգատ թէ կառավարութեան և թէ մանաւանդ ժողովրդի կողմից, ապա տարօրինակ բան կլինէր եթէ Դուման մերժէր այդ եղանակը և բեկանէր ընտրութիւնը։ Պատգամաւոր Մաղաքէլեանը յիշեցրեց, որ Դուման ձեռագաշտ լինելու չէ և նոյն իսկ սենատից էլ անձուկ մեկնելու չէ օրէնքի իմաստը. որ պէտք է ի նկատի առնել, թէ ինչն է եղել պատճառ պարակներին երկու կուրիայի բաժանելու պատճառն ու նպատակը. պատմական ձախորդ պայմանների արդիւնքների հետ մաքառելն անհրաժեշտ է, և եթէ յիշեալ կարգը չլինէր, այն ժամանակ Երևանի նահանգը կմնար առանց թաթար պատգամաւորի, իսկ Դանձակինը առանց հայ պատգամաւորի. միթէ Դուման կկամենայ զրկել այդ երկու ազգերին յիշեալ նահանգների իրենց ներկայացուցիչներից։

Դուման յետաձգեց այդ երկու նահանգների ընտրութեան քննութեան խնդրի լուծումը յետագայ նիստերից մէկին. բայց մինչև Դումայի փակելը այդ հարցը այլևս հանդէս չեկաւ, և ընտրութեան այդ եղանակի վաւերացման խնդիրը մնաց առկախ... Հին ընտրական օրէնգրութեան վերացմամբ և յունիսի 3-ի նոր «օրէնքի» հրատարակմամբ այդ հարցը և վէճը իրկ պատմական հետաքրքրութիւն կարող է ունենալ այսուհետև *)։

Մասնակարգային գործը։ Դումայի 6-րդ և 7-րդ նիստերում (մարտի 7 և 9) քննւում էր սովեաների օգնութեան գործի համար յատուկ յանձնաժողով ընտրելու խնդիրը։ Ընտրութեան ոչ միայն ոչ որ հակառակ չէր, այլ բոլորը միաբերան շեշտում էին այդ գործի և յանձնաժողովի կարևորութիւնը։ Միայն թէ, մինչդեռ կադէտ պատգամաւորները աշակողմեանների և մենիստը

---

*) Ինչ վերաբերում է նոր «օրէնքին», նրա 26-րդ յոդուածը որոշակի կերպով լուծում է այդ հարցը սահմանելով, որ «Բաղուի, Դանձակի և Երևանի նահանգների ընդհանուր ընտրողական ժողովը երկու մասի է բաժանւում. մէկ մասը կազմում են մահմեդական պատգամաւորները, իսկ միւսը—Քրիստոնեայ պատգամաւորները։ Բարձրանշիալ մասը Պետ. Դումայի մի-մի անդամ է ընտրում իր միջից»։

Սուլիպինի հետ միասին մատակարարողական յանձնաժողովի կոչումը սահմանափակում էին լոկ հաշուետուութեան պաշտօնով, ձախակողմեանները ընդարձակ և հիմնական մի դեր էին ուզում կատարել տալ այդ նպաստամատոյց յանձնաժողովին. այսինքն, որ նա ոչ միայն Պետերբուրգում նստած՝ բիւրոկրատիայի ներկայացրած թղթերն ու հաշիւները քրքրէ ու քննէ, այլ նաև տեղումը, գաւառներում ստուգէ կառավարութեան կատարածը սովի խնդրում, և կազմակերպէ կարօտեալ ժողովրդին նպաստելու կենդանի գործը։ Այսպէս ձեակերպելով իր առաջարկը, ձախակողմը այն համոզմունքով էր զեկուցում, որ այդ է նախ և առաջ առաջիկայ գործի միակ նպատակայարմար և բանաւոր կազմակերպման եղանակը, որը միևնոյն ժամանակ յարմար հնարաւորութիւն է տալիս կենդանի կապ հաստատելու Դումայի և ժողովրդի միջև, այն էլ այսպիսի մի փափուկ, սրտի ուռ գործում։ Վերջապէս, դա զեղեցիկ ասիթներից մէկն էր, ժողովրդի լայն խաւերը կազմակերպելու գործի համար, և ինքնօգնութեան ու ինքնագործութեան կոչելու մասներին։

Այս տեսակէտի վրայ էին կանգնած ձախակողմեանների հետ դաշնակցական պատգամաւորները։ Տիգրանեանը յիշեցնելով Դումային, որ ներկայումս ամբողջ Հարաւային Կովկասում Սև ծովից մինչև Կասպից ծովը շատ գաւառներում սով է, որի մասին զըժբախտաբար ուուսաց մամուլում քիչ բան է գրւում, իր կողմից մի ցուցում արեց կադետներից յանձնաժողովի կազմի մասին։ Նա առաջարկեց, որ Մատակարարողական յանձնաժողովում, որի նպատակը սովեալներին իրական օգնութիւն հասցնելու գործի կենդանի կազմակերպելն է տեղումը, բաւականաչափ գիտակ անդամներ լինեն, տեղեակ այն բոլոր վայրերին, ուր որ Դուման սովի հետ գործ է ունենալու. հետևապէս անհրաժեշտ է, որ Մատակարարողական յանձնաժողովում ըստ կարելոյն շատ լինին սովից տառապող վայրերից եկած պատգամաւորները. օգնութիւն մատակարարելը մի տեխնիքական գործ է, որի եղանակը որոշել կարող են միայն նրանք, ովքեր որ լաւ ծանօթ են տեղական պայմաններին։

Աղաթէլեանը առարկեց կադէտների, առանձնապէս Ռոդիչևի, սահմանափակող առաջարկի դէմ։ Նա մատնանիշ եղաւ, որ կադէտների առաջարկը յենւում է հին կարծիքի վրայ, իբր թէ

գործել կարելի է միայն իշխանութեան ցուցումների և հայեցողութեան համաձայն, որ Դուման ընտրեցան կատարելապէս անճարութիւն է և անկարող է մի բան անել։ Մաղաթէլեանը բացատրեց նաև Անդրկովկասի սովի առանձնայատուկ պատճառները։ «Դուք անբերրիութեան ու տարերային ձախորդութեան հետևանքներից էք խօսում։ Ահա հարիւր տարի է, որ մեր երկիրը նուաճել և միացել է կայսրութեանը։ Մեր Անդրկովկասի կլիման չորային է. սարսափելի անբերրիութիւն ու երաշտներ են լինում։ Մեզանում բերքի կէսը ոռոգման հետ է կապած և միայն մասամբ կախած է օդի խոնաւութիւնից։ Պատահել է, որ մեզանում հացի փութը 7 ռուբլու է հասել, բայց և այնպէս մենք երբէք պետութեան օգնութեան դիմած չենք։ Պետութիւնը մեզ երբէք օգնած չէ. մենք մեր միջոցներով ենք եօլա գնացել։ Այս իրողութիւն է։ Այժմ մենք հարկադրված ենք ձեզ ձեռք մեկնելու և խնդրելու ոչ միայն հաց, այլ նաև յարկ և ապաստարան։

Տէր-Աւետիքեանը Դումայի ուշադրութիւնը դարձրեց, որ Գանձակի նահանգը Անդրկովկասում ամենից շատ է տուժել սովից, որովհետև նա էր եղբայրասպան թշնամութեան, կռիւ և թափառական հալածանքների գլխաւոր ասպարէզը, սարքած բիւրոկրատիայի յանցապարտ ձեռքով։ Ծառախօսը ընդգծում է, որ հայ-թաթարական ընդհարումների հեղինակների միմիայն արժանաւոր ու խստագոյն պատիժը կարող է մեզ բաւարարութիւն տալ և վերջ դնել մեր գանգատներին։ Դաշնակցական պատգամաւորը յիշատակեց, որ սովը նոյնչափ դաժան է նաև Բուքայիսի նահանգի երեք գաւառներում. այնտեղ էլ այժմ սովատանջ շրջանները շուտափոյթ օգնութեան են կարօտ։

Մատակարարողական յանձնաժողովի անդամ ընտրեց դաշնակցական խմբակից Ստ. Տէր-Աւետիքեանը։

Երկու ամիս անցած մատակարարման խնդիրը կրկին հանդէս եկաւ Դումայի ընդհանուր նիստում (37-րդ, մայիսի 11-ին). փինխտարութիւնը դիմել էր Դումային հաստատելու այդ գործում իր կատարած աւելի ծախսերը (17,5000,000 ռ.) և 5,000,000 ռ էլ նորից յատկացնելու սովատանջ ժողովրդին սնունդ և բժշկութիւն հասցնելու համար։ Այս նիստում խօսեց Մաղաթէլեանը։ Նկարագրելով տիրող կարգերը, բիւրոկրատիայի վերաբերմունքը դէպի հասարակական ազէնտները և յատկապէս դէպի սովը, և

առանձնապէս Կովկասի մասին շեշտելով նա ասաց. «Անդրկովկասը առաջ երբէք կառավարական փոխառութիւն չէ ստացել. խիստ հապճգիտ դէպքերում միայն ընչին գումարներ էին նրան շնորհում, և այս տարի չը նայած Կովկասի խիստ կարօտութեանը 173,000,000 բուբլուց ընդամենը 1,000,000 է տրուած Անդրկովկասին։

Մատակարարման գործում թէ յանձնաժողովում և թէ Դուման դուրս դաշնակցական խմբակի կատարածի մասին թող տեղեկացնէ ընկեր պատգամաւոր Ստ. Տէր Աւետիքեանի յետագայ զեկուցումը.

«Երբ ընտրեց մատակարարողական յանձնաժողովը և սկսեց իր գործունէութիւնը, իսկոյն և նէ պարզուեց, որ այդ գործունէութիւնը դրուած է շատ նեղ շրջանակի մէջ, որի սահմաններում էական բան անել յոգուտ սովեալների, անկախ կառավարութիւնից, համարեա անհնարին է։ Յանձնաժողովը իրաւունք չունէր սովատանջ վայրերի հետ անմիջական յարաբերութիւնների մէջ մտնել, ուղարկել այնտեղ իր անդամներից, ծանօթանալ կարիքի չափի ու ծաւալի հետ, տեղի ունեցած դեղծումների հետ, ու կազմակերպել մատակարարման գործը տեղական հասարակական ոյժերի մասնակցութեամբ, ազատ կառավարութեան վերահսկողութիւնից։ Յանձնաժողովը իրաւունք չունէր նոյն իսկ հրաւիրել իր նիստերին կոմիսակի բանիմաց ու ձեռնհաս անձանց, ծանօթ սովատանջ վայրերի հետ, այնտեղ գործած կամ գործող, ծանօթ թէ գոյութիւն ունեցող կարիքներին և թէ մատակարարման գործի տեխնիկային. յանձնաժողովի առաջին երեք նիստին այդպիսի անձինք մասնակցեցին, որոնք գնահատելի տեղեկութիւններ տուին. սակայն կառավարութիւնն այդպիսի բանիմաց մարդկանց մասնակցութիւնն անպայման արգելեց։ Այդպիսով մատակարարական յանձնաժողովը դարձաւ ոչ թէ Ռուսաստանի բազմամիլիոն սովեալներին կանոնաւոր օգնութիւն հասցնելու գործը, սովի դէմ մղող կռիւը ղեկավարող գերագոյն մի մարմին, այլ սովեալների համար ներքին գործերի մինիստրութեան մօտ միջնորդող մի հաստատութիւն, մի մարմին, որը իրաւունք ունէր միմիայն ներքին գործերի մինիստրութեան «զեմսկի» բաժանմունքի, մատակարարողական գործը ղեկավարող հաստատութեան, ուշադրութիւնը դարձնել այս կամ այն սովեալ վայրի վրայ՝ առաջարկելով շու-

տափոյթ օգնութեան հասնել նրան, ուղարկել այսքան կամ այնքան գումար։ Մատակարարողական յանձնաժողովը մինչև Դումայի ցրումը չը կարողացաւ ներքին գործերի մինիստրութիւնից, չը նայած վերջինիս դրական խոստումներին, ստանալ այն փաստաթղթերը, որոնցով կարելի էր լոյս սփռել մատակարարման գործի մօտաւոր անցեալի վրայ, երբ այդ գործի գլուխը ու բոլոր թելերը գտնւում էին Դուրկոյի ու իւրայինների ձեռքին, որոնցից շատերը մնում են չարաբաստիկ մատակարարման գործի զեկավարների դերում... Ինչպէս կարող են թոյլ տալ նրանք, որ այդ լոյսն սփռուի այնպիսի մութ գործերի վրայ, ինչպիսիներն են օր. տասնեակ միլիոնների պայմանագրերը զանազան հացավաճառների հետ կապած մի քանի չինովնիկների ձեռքով՝ սովատանջ վայրերին հաց մատակարարելու, և այդ բոլորը (անցեալ 1906 թ. յուլիսի վերջերից մինչև օրս մատակարարման գործի անունով ծախսւած է պետական գանձարանից 172 միլիոն բուբ.) առանց հասարակութեան, մամուլի, հասարակական հաստատութիւնների վերահսկողութեան, կատարւած է մի քանի մարդկանց ձեռքով կանցելյարիաների խորհրդաւոր մշուշում...

«Լաւ իմանալով, որ Դուման ցրելու է այսօր-վաղը, մեռնելու է իր բոլոր յանձնաժողովների հետ միասին, մինիստրութեան պաշտօնեաները այսօր-վաղն անելով, այնքան ձգձգեցին մատակարարման գործին վերաբերող փաստաթղթերի յանձնումը Դումայի յանձնաժողովին, որ վերջինս իրեն ծնող պառլամենտի հետ միասին փչեց իր վերջին շունչը, ու այդպիսով բազմաթիւ ու բազմապիսի Դուրկոները ազատուեցին իրենց անպատասխանատու շէֆերի հետ միասին անարդանքի սիրնից...

«Սկզբից մինչև վերջը մասնակցելով մատակարարողական յանձնաժողովի պարապմունքներին, միշտ նրա ու նրա նիստերին ներկայ գտնւող ներքին գործերի մինիստրութեան պաշտօնեաների ուշադրութիւնն եմ հրաւիրել Անդրկովկասի սովատանջ վայրերի վրայ, որոնք մինչև Դումայի հրաւիրելը կառավարութեան կողմից աչքաթող եղած, ժողացած են եղել համաբեռ Բացի բերանացի դիմումներից ներկայացրել եմ նաև մի գրաւոր զեկուցում, որի մէջ նկարագրւած է անդրկովկասեան բոլոր սովեալների դրութիւնը առանց ազգութեան ու կրօնի խտրութեան.

նկարագրել եմ նաև Վրաստանում տիրող սովի ու անտեսական քայքայումը։ Յանձնաժողովը, որի մեծամասնութիւնը կազմում էին դպրէներն ու աշակողներն, մինիստրութեան պաշտօնեաների հետ միասին միշտ առարկում էր ինձ, որ իմ դիմումների ու զեկուցման մէջ նկարագրած իրականութիւնն իր ամբողջ ծաւալով չէ հաստատում այն տեղեկութիւններով ու զեկուցումներով, որոնք ստացել ու ստացում են ներքին գործերի մինիստրութեան մէջ Կովկասի փոխարքայից, որը սովի գոյութիւնը Վրաստանում բոլորովին չէ հաստատում։

«Ձախակողմեան պատգամաւորները ինձ հետ միասին առարկում էին, որ աւելի պէտք է հաւատալ պատգամաւորին, երկրի ներկայացուցիչներին, քան ոստիկանական պաշտօնեաների սխալ, տենդենցիոզ տեղեկութիւններին, բայց այդ չէր անցնում։ Յանձնաժողովի մեծամասնութիւնը ու կառավարութեան ներկայացուցիչները ընդունելով, որ իմ դիմումները, իբրև պատգամաւորի այն վայրերին վերաբերուող դիմումներ, որտեղ սովի ու անտեսական քայքայման գոյութիւնը հաստատւում են նաև փոխարքայի դիմումներով, բնականաբար աւելի այժ են տալիս վերջիններիս ու աւելի հանոզիչ դարձնում նրանց կառավարութեան համար, վճռական նշանակութիւն տալիս էին փոխարքայի դիմումներին։

«Կադէտներն իրենց պարզերես էին անում նրանով, որ Կովկասում զեմստուոյի հաստատութիւններ կամ ուրիշ համանման լեգալ կազմակերպութիւններ չը կան, որոնց տեղեկութիւնները իրանց աչքում մեծ դին կունենային. ուստի իրանք, լսելով իմ դիմումները, ստիպւած են ուշադրութեան առնել փոխարքայինը նաև, ու նրանց շաղկապմամբ գալ որոշ եզրակացութիւնների *)։ Այդ ինչպէս ունենալով, յանձնաժողովի մեծամասնութիւնը չընդունեց իմ առաջարկութիւնը (Դաշնակցական խմբակի որոշման համաձայն) Զատկից առաջ սովեալների համար անդառնալի նպաստ բաց թողնելով վեց միլիոն բուրլուց որոշ բաժին յատ-

*) Դեռ մարտ ամսին դիմել էինք Թիֆլիսի Նպաստամատոյց Մասնաժողովին, նրա ճիւղերին այլ և գաւառական մարմիններին փաստացի տեղեկութիւններ և որոշ թիւեր խնդրելով սովի և կարօտութեան չափի այն օգնութեան անհրաժեշտ միջոցների մասին. բայց մինչև վերջն էլ ոչինչ չստացանք։

Ս. Տ.

կացնել առանձնապէս Անդրկովկասի սովեալներին, առարկելով, որ գումարը տրոզդովին տրուում է կեսարոնական բարեգործական նպաստամատոյց կոմիտեի տրամադրութեան տակ, որից կարելի է Անդրկովկասի սովեալների համար բաժին պահանջել։ Ցանձնաժողովի անդամ տրուդովիկ պատգամաւոր Զախարովը իմ գրաւոր զեկուցումը լսելուց յետոյ առաջարկեց, աչքի առաջ ունենալով Անդրկովկասում տեղի ունեցած արհաւիրքները, որոնց պատասխանատուութիւնը ընկնում է գլխաւորապէս կառավարութեան վրայ, ու նրանց հետևած սոսկալի կարիքը՝ ոչ-կովկասցի պատգամաւորներից երկու լիազօր ուղարկել Անդրկովկաս ծանօթանալու համար այնտեղի իրականութեան հետ։ Նրա այդ առաջարկը, որին միացան բոլոր ձախակողմեանները, չընդունեց։ Ցանձնաժողովի նախագահ բժ. Դոլժենկովը յանձն էր առնում իր կամ յանձնաժողովի անունից միջնորդել ներքին գործերի մինիստրութեան առաջ նաև Անդրկովկասի սովեալների համար. ես էլ իմ կողմից առանձնակի միջնորդութիւններ էի անում, հիմնուելով այն խնդիրների վրայ, որոնք անընդհատ ստացուում էին Անդրկովկասի հայ ու թուրք սովատանջ գիւղական համայնքներից։ Այսպէս կամ այնպէս այս միջնորդութիւնները որոշ չափով ազդում էին կառավարութեան վրայ, որը և աշխատում էր փոխարքայի դիմումներին լիովին բաւարարութիւն տալ։ Մինչև Դումայի գումարելը՝ կառավարութիւնը փոխարքայի դիմումներին անընդհատ չափով էր բաւարարութիւն տալիս. մեծ ժամամբ սերժել էր. մինչև Դումայի գումարելը փոխարքային փոխադրել է 252,502 բուբլի, իսկ Դուման գումարելուց յետոյ մինչև նրա գոյութեան վերջը 828,498 ր. այդ գումարի հարիւրեայ 80%-ը փոխադրել է բացառապէս Գանձակի ու Երևանի նահանգների սովեալների համար,

«Կեսարոնական բարեգործական նպաստամատոյց կոմիտէի տրամադրութեան տակ դրած 6 միլիոնից (այդ կոմիտէին, որի մայիսի 7-ի նիստին հրաւիրած էինք ես ու Շահթախտինսկին, ուր վերջում եկան նաև պատգամաւորներ Մաղաթէլեանն ու Աթաբէկեանը, ներկայացրի ես մի գրաւոր զեկուցում կովկասեան սովի մասին. զեկուցումը կրճատումներով տպած է «Բեգ» լրագրի 118-րդ Ն-ում, մայիսի 22-ին) ուղարկել է Անդրկովկաս բաժանելու սովեալներին իրրև անդառնալի նպաստ 140,000 ր.,

որից 8 հազար ր. Գանձակի նահանգի սովեալների համար, 40 հազարը Երևանի ու 20 հազարը Բաքվի ու Թիֆլիսի։ Համաձայն մեզ տված իր պաշտօնական խոստման ու Դումայի Մատակարարողական Յանձնաժողովի միջնորդութեան (մայիսի 20-ից) կետրոնական կոմիտէտը նոյն 6 միլիօնից պէտք է փոխադրէր Անդրկովկաս 260 հազարից մինչև 360 հազար նոյն ձևով նպաստելու սովեալներին։

«Մինչև Դումայի ցրումը կառավարութիւնը, որը քանիցս անգամ մերժել էր Փոխարքային հայ-թուրքական ընդհարումներից ուտված գիւղերի վերաշինման համար պահանջուղ կրեդիտը ու որը փոխեց իր հայեցակէտը մեր տեսակցութիւնից յետոյ (ապրիլի 21-ին) Սաղլիպինի հետ, որոշել էր Դումայից 1,275,000 ռուբլի կրեդիտ պահանջել՝ նպաստելու համար փոխարինարար Գանձակի ու Երևանի նահանգների այն հայ ու թուրք գիւղերին թիւով 211, որոնք վնասել են թուրք-հայկական ընդհարումներից։ Մատակարարողական Յանձնաժողովը, համաձայն իմ զեկուցման, որոշել էր իր կողմից միջնորդել բիւջէտային յանձնաժողովի առաջ, որ վերջինս իր կողմից առաջարկի Դումային այդ գումարը տալ ուտված գիւղերին ոչ թէ փոխարինարար, այլ իբրև անդառնալի նպաստ։ Դումայի ցրումը այդ կարևոր նպաստի հարցը թողեց առանց լուծման։

«Ներքին գործերի մինիստրութիւնը, ուր ուղղված են տեղերից բոլոր խնդիրները (իսկականները, մեծ մասամբ հայերէն կամ թուրքերէն գրած, մեզում են ինձ մոտ. ներկայացրել եմ նրանց բովանդակութիւնը իմ պաշտօնական գրութիւններով), որ սատացել ենք Դումայի գոյութեան ընթացքում Անդրկովկասեան սովատանջ նահանգների (մեծ մասամբ Գանձակի ու Երևանի) զանազան հայ ու թուրք գիւղական համայնքներից, հաստատապէս խոստացել էր Մատակարարողական Յանձնաժողովին (վերջին անգամ պաշտօնապէս խոստում տուց «զեմսկի» բաժանմունքի կառավարչի օգնական Պաւլովը մայիսի 20-ի նիստում) ամենաուշը մինչև յունիսի վերջը փոխադրել Անդրկովկաս մաս-մաս կամաբողջովին փոխարինարար սովեալ գիւղերին նպաստ տալու համար 36,000 ռուբլի։ Այդ խոստումը մինչև Դումայի ցրումը չէր կատարված. կը կատարի արդեօք այսուհետև, այդ կախված է

միմիայն կառավարութեան հայեցողութիւնից ու տրամադրութիւնից։

«Աւելին անել Անդրկովկասի սովեաները համար տիրող պայմանների մէջ—անհնարին էր»։

Հողի խնդիրը։ Ինչպէս բովանդակ Ռուսաստանի ժողովրդի ստուարագոյն մասի կեանքում, այնպէս էլ Բ. Դումայում կետրոնական հարցը—հողի խնդիրն էր։ Արտակարգօրէն ուշադրաւ այդ հարցի կենսական կարևորութիւնը ու ծանրակշիռ լրջութիւնը խորհրդաւոր, ակնկալութիւններով լի տոնածմունքների ու յուզումների անսպառ աղբիւր էր հանդիսանում։

Բացի Դումայի ընտրած հողի բաղմամարդ Ցանձնաժողովից (99 հոգուց) գրեթէ բոլոր ֆրակցիաները կազմել էին իրենց յատուկ (կուսակցական) Հողի Մասնաժողովները։ Այդպիսի մի մասնաժողով կազմուել էր նաև սոց.-յեղափոխականների ու դաշնակցականների Դումայի միացեալ խմբին կից՝ սոց.-յեղ. կուսակցութեան պատկանող մասնագէտ և գիտակ անձերից։ Դաշնակցական խմբակի կողմից այդ մասնաժողովում աշխատում էր պատգամաւոր Սաղաթէլեանը։ Միացեալ խմբակի այդ մասնաժողովի յօրինած Հողի օրինագիծը առաջարկուեց Դումային նոյն խմբի կողմից (օրինագիծը ամբողջութեամբ տպագրուեց «Русь» օրաթերթի № № 121, 122, 3 և 4 մայիսի 1907 ամ։ (Տես Յաւելուածում)։

Սակայն լոկ հողատիրութեան նոր եղանակները ձևակերպող ընդհանուր և հիմնական օրինագծով բաւականանալ չէր կարելի։ Վերին աստիճանի բարդ, կնճռոտ, խճճուած և ծանրակշիռ հողի խնդիրը անհետաձգելի, անյապաղ, բայց արմատական լուծում է պահանջում, որը շտապովի ու վայրիվերոյ չպիտի կատարուէր, այլ ակնածոտ ուշադրութիւն ու խնամոտ բարեխղճութեամբ կատարուած գործնական ուսումնասիրութիւն էր պահանջում։ Մի հարց, որ համայն ազգաբնակութեան ամենակենսական շահերն է շօշափում խորապէս, երկրի միայն կետրոնական Դումայի ձայնաւորութեամբ չպիտի ստանար իւր վճիռը. անհրաժեշտ էր ամբողջ ժողովուրդը հրաւիրել և գործօն ու ազդեցիկ մասնակից դարձնել այդ խնդրի տնօրինմանը։ Անհրաժեշտ էր տեղական կոմիտէներ կազմակերպելը ժողովրդական ընտրութեամբ, որոնք թէ խորհրդաձելու էին այն հիմունքների մասին, որոնց համաձայն պէտք է լուծել հողի խնդիրը, և թէ մշակելու էին այդ

յուծման գործնական միջոցները տեղական առանձնայատուկ պայմաններն աչքի առաջ ունենալով։ Այս մտքով սոց.-յեղ. և դաշնակցականների միացեալ խմբի կողմից մշակեց և Դումային առաջարկեց Հողի տեղական կոմիտէների մի նախագիծ (տես յաւելուածում)։

Հողի խնդրում դաշնակցական խմբակի հայեցակէտն էր՝ սոց.-յեղ. ազգարարային ծրագրի ընդհանուր հիման վրայ արտայայտել և պաշտպան հանդիսանալ Հարաւային Կովկասի աշխատաւոր գիւղացիութեան շահերի առանց ազգի և կրօնի խտրութեան։ Քանի որ վրացի գիւղացիութեան շահերը անշուշտ անտես չէին առնուելու Վրաստանի սոցիալ-դեմոկրատ պատգամաւորներից, որոնք վրացի հողատէր ազնուականութեան հայեցքներն ու շահերը չէին պաշտպանելու, ապա դաշնակցական պատգամաւորների յատուկ ուշադրութեան առարկան եղան Հարաւային Կովկասի և մանաւանդ Ռուսական Հայաստանի հայ և թաթար գիւղացիութիւնը։

Թաթար շինականի շահերի պաշտպանութիւնը յանձն առնելու հարկադրում էր բացի դաշնակցական կուսակցական ծրագրի սկզբունքները նաև նոյն ինքն թաթար գիւղացիութեան յատուկ գրաւոր դիմումները այդ մասին, ուղարկուած դաշնակցական պատգամաւորների անունով։ Ըստ երևութին թաթար հողագործը աւելի վստահութիւն էր տածում դէպի թէև ազգով ու կրօնով իրեն օտար, բայց ամեն հողագործ աշխատաւորի, առանց ազգի ու կրօնի խտրութեան, պաշտպան Դաշնակցութիւնը, քան դէպի իրեն հայազգի ու կրօնակից, բայց հողատէր ազնուականի դասին պատկանող և նոյն այդ դասակարգի շահերը պաշտպանող թաթար պատգամաւորները։ Հետաքրքրական է թաթար գիւղացիութեան՝ դէպի դաշնակցական պատգամաւորները ցոյց տուած այս շրտակ վստահութիւնը հաստատել մահմեդական ազատպատգամաւորների այն կասկածամիտ և վիճերոտ անվստահութեան հետ, որով նրանք մշտապէս վերաբերուում էին դէպի նոյն դաշնակցական պատգամաւորները ու նրանց առաջարկները երկրորդ Դումայում։

Դասակարգային գիտակցութեան արթնացման և թաթար ազգարնակութեան դասակարգային շերտաւորման սկզբնաւորութեան նշաններն են սրանք, որ թելադրում էին թաթար գիւղացիութեան, անտես անելով աւանդական ազգային-կրօնական

ընազդները, անվստահութիւն ու խորթութիւն տածել դէպի «իր» «հարազատ» հողատէր-ազնուականութիւնը։ Այդ անվստահութիւնը ու խորթութիւնը իրեն զգալ տուեց և մասամբ արտայայտուեց իսկ արդէն պատերազմների նահանգական ժողովում պատգամաւորական ընտրութեան ժամանակ *), և պէտք է ասել, որ թաթար շինականի այդ, թերևս տակաւին անգիտակից, ընազդական, բայց որոշ անվստահութիւնը արդարացաւ Դումայում։ Հարաւային Կովկասի թաթար պատգամաւորները (Երևանի և Գանձակի նահանգից ընտրուած) իրենց ճառերում հոդի խնդրում հակա-գիւղացիական ընթացք ցոյց տուին՝ ջերմ հաժակրանքով վերաբերուելով դէպի աղա-հողատէրերի շահերը, որով և ապացուցին, որ իրենք հարազատ ներկայացուցիչը չեն թաթար գիւղացիութեան։ Այս հանգամանքը աւելի ևս ստիպեց դաշնակցական պատգամաւորներին անտէր և անպաշտպան չթողնել Պետ. Դումայում զարաւոր քաղաքական ստրկութեան և մտաւորական շահագործման մատնուած տակաւին անխօս թաթար հողագործի կենսական շահերը։

Հետաքրքրական է այս տեսակէտից համեմատութեան դնել

---

*) Նահանգական ընտրական ժողովի թաթար պատերազմների բաժնում գիւղացիութեան միջից պատգամաւորներ կային, որ ընտրելիք պատգամաւորացուն գիւղացի լինի։ «Մենք բեգերին, աղաներին չենք ուզում, գիւղացին կարող է մեր ցաւերի արտայայտիչը լինել»։ Սակայն թաթար գիւղացի պատերազմների շարքում չկային ռուսախօս զրագէտ անհատներ, որ պատգամաւոր ընտրէին։ Այս ամենով թաթարների մէջ ձայներ էին լսում, թէ պէտք չէ հայ պատերազմներից բաժանել և առանձին կատարել ընտրութիւնը, այլ միասին ընտրել նահանգի բոլոր պատգամաւորներին. և իրենց քէֆերը թաթար գիւղացի պատերազմներից շատերը պատրաստ էին հայ աշխատաւոր պատերազմներին տալու։ Վերջը, երբ ընտրութիւնը երկու առանձին կուրիներով կատարուեց, և թաթարական բաժնում ընտրեց Մահմեդ աղա Շահթախթինսկին՝ թաթար գիւղացիներից նրան յատկապէս ազդարարուեց, որ ընտրում են նրան ոչ թէ որովհետև ազնուական է, այլ ընտրում են շնորհով որ գիւղացի է, միայն թէ այն պայմանով ու յուսով, որ ոչ թէ հողատէր ազնուականութեան, այլ հողագործ գիւղացիութեան շահերը պաշտպանէ։ Յամենայն դէպս «ազգային» պատգամաւոր ընտրելը յօժարակամ և ազատ կերպով տեղի չունեցաւ։ որոշ արտաքին հանգամանքներ և նոյն իսկ ճնշումներ ներգործեցին. այս ճնշումների դէմ բողոք էլ էր եղել թաթարների կողմից, ինչպէս այդ յայտնուեց Դումայում (Տես Стеногр. отчеты Госуд. Думы, II сессія, заседаніе 5-ое, стр. 94).

մահմեդական ֆրակցիայի անդամ Շահթախթինսկու և Խան Խոյսկու ճառերը դաշնակցական պատգամաւորների՝ Սաղաթելեանի և Տէր-Աւետիքեանի՝ ճառերի հետ։

Մինչդեռ դաշնակցական պատգամաւորները շեշտելով դիւղացիութեան պատկանող հողերի սակաւութիւնը, պնդում էին, որ բոլոր հողերը, որոնց թւում նաև կալւածատէրերինը, ստիպողաբար և առանց վարձատրութեան հողագործին պէտք է տալ ի հասարակական վայելումն, թաթար ազգականութեան պատգամաւորները պահանջում էին, որ հողը անպատճառ գնի «արդար վարձատրութեամբ», և ոչ թէ գրաւուի կալւածատէրերի ձեռքից։ Խան Խոյսկին այդպէս էր յայտարարում մինչև իսկ ամբողջ «մուսուլմանական ֆրակցիայի» անունից։ Միւս կողմից Շահթախթինսկին յայտնում էր, որ Երևանի նահանգում հողը կալւածատէրերի ձեռին կուտակւած-ամբարւած չէ, որ գիւղացիութեան հողազրկութիւն առաջ գար. «ամբողջ հողը, ասում էր նա, հողագործ գիւղացի դասակարգի ձեռքն է, և կալւածատէրը, միլքադարը, հողին չէ էլ դիպչում, այլ բաւականանում է միայն պատրաստի բերքի $^{1}/_{30}$-ը ստանալով»։ Մինչդեռ Սաղաթելեանը առաջարկում էր վերացնել բերքից որոշ մաս կալւածատիրոջը բաժին հանելու ճորտատիրական նահապետական սովորոյթը, Շահթախթինսկին պաշտպանում էր այդ կարգի նպատակայարմարութիւնը, պնդում էր, իբրև թէ գիւղացին այս նահանգներում երբէք ճորտ չէ եղել և ի վերջոյ յայտնում, որ «հետևապէս, մուսուլման Անդրկովկասի *) մեր երկրներում հողագործների անձնական իրաւունքների բարւոքման մասին խօսք անգամ լինել չէ կարող, որովհետև այդ կողմից ներկայումս էլ նրանց վիճակը լիովին ապահովւած է»...։

Սակայն միւս կողմից ուշադրութեան արժանի էր Բազի նահանգի թաթար պատգամաւոր Զէյնալովի **) ճառը, երբեմն,

*) Այս անուն տակ Շահթախթինսկին հասկանում է ամբողջ Հարաւային Կովկասը բացի արևմտեան ծայրից, Վրաստանից. ուրեմն «մուսուլման Անդրկովկաս» է անւանում նաև Ռուսական Հայաստանը, այն է Երևանեան նահանգը և Գանձակի նահանգի արևմտեան մասը։

**) Զէյնալովը այն սակաւաթիւ թաթար պատգամաւորներից մէկն էր, որ մի քանի (գլխաւորապէս Ղազանի և Ներքին Ռուսաստանի) մահմեդականների հետ Դումայի մուսուլմանական ֆրակցիայից դուրս էր եկել և անդամակցել աշխատաւորականների (տրուդովիկների) խմբին։

անվստահ ձևով արտասանված, բայց և այնպէս բոլորովին այլ ձգտումներից ներշնչված։ Սա խօսեց իբրև ինքը գիւղացի և գիւղացիութեան կողմից։ «Ով որ ասում է, թէ մենք գիւղացիներս շատ հող ունենք, սուտ է խօսում և չէ ուզում ճշմարիտը խոստովանել.. Եթէ ինչպէս որ ներկայումս կայ, կալւածատէրերի հողը գիւղացիներին չարուի, ամէն մէկ գիւղացու մօտ երկու դեսեատին հող կընկնի Բագւի նահանգում։ Պարզ բան է, որ ուրեմն կալւածատիրական ամբողջ հողը պէտք է գիւղացիներին տալ... Եւ ահա հարց է ծագում, թէ ապա ինչպէս այդ հողը վերցնել կալւածատէրերից և գիւղացիներին տալ... Մեր գիւղացիները այդ հարցին այսպէս են նայում, որ իրենք միևնոյն է կվճարեն, եթէ միջոց ունենան... Արդ տեսնենք, արդեօք միջոց կունենանն վճարելու...» Ապա մի շարք թւաբանական հաշիւներ անելուց յետոյ Զէյնալովը յայտնում է. «Հետևապէս, պարոններ, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ ցանկանալով հանդերձ վճարել կալւածատէրերին հողի համար, մեր գիւղացիները անկարող են այդ անել։ Դրա համար նրանք բնաւ չեն ասում թէ տէր մեզ հողը զօռով. նրանք միայն ասում՝ են՝ գնել հողը մենք անկարող ենք. եթէ ուզում էք մեզ հող տալ, և եթէ ուզում էք որ Բագւի նահանգի գիւղացիները ապրել կարողանան, տէր ձրիաբար...» Եւ ճառախօսը վերջացնում է՝ «Մեր գիւղացիները վճարել անկարող են, նրանց հող է պէտք, և այդ հողը նրանց պէտք է տալ առանց որև է վարձատրութեան, որովհետև վճարել անկարող են....»։

Որքան էլ տատանուող, անորոշ, կարծես ինչ որ երկչոտ խուսափումներով յայտնված լինի այս առաջարկը, բայց և այնպէս ուշագրաւն այն է, որ աշխատաւոր թաթար գիւղացիութեան անվստահ բաղձանքը գալիս էր ձայնակցելու դաշնակցական պատգամաւորների կարուկ որոշութեամբ յայտնված պահանջին, հակառակ թաթար հողատէր ազնուականութեան ոտնձգութիւններին *)։

*) Այս բոլոր փաստերը վերին ստոիճանի յուսատու իրողութիւն են և արժանի ամենալուրջ ուշադրութեան։ Բ. Դումայի այս անցքերը գալիս են լուսաբանելու և բացատրելու այն յաջողութեան հիմքը, որ ունեցան Երևանի և Դանձակի նահանգներում Դաշնակցութեան վերջերս կատարած առաջին փորձերը ոչ միայն մերձենալու, այլ նաև կապակերպելու թաթար աշխատաւոր գիւղացիութիւնը դասակարգային շահերի պաշտպանման նշանաբանի տակ։

Հողի խնդրի մասին սկսած ընդհանուր կարծիքների փոխանակութիւնը փակեց մայիսի 16-ին։ Սակայն Հողի Յանձնաժողովում մշակելուց յետոյ այդ լուրջ և բարդ հարցը կրկին հանդէս էր բերելու Դումայում աւելի հանգամանօրէն ու մաս-մաս, կէտ առ կէտ քննելու ու վճռելու կոնկրէտ օրինագծերի և Յանձնաժողովի եզրակացութիւնների քննադատութեամբ։ Հարաւային Կովկասի հողի խնդիրը և Դաշնակցութեան ընդունած հողի ծրագիրը և հայեցակէտը այն ժամանակ կը պարզէր և կը բացատրէր ցանկալի լիակատարութեամբ։ Իսկ Դաշնակցական պատգամաւորներից հողի խնդրի վրայ արտասանուած երկու ճառը ի հարկէ միայն մասամբ և խիստ ընդհանուր գծերով էին շօշափում խնդիրը և դեռ ևս լիովին չէին արտայայտում հողի ծրագրի ամբողջ բովանդակութիւնը։

Առաջ եմ բերում 16-րդ նիստում (26 մարտի) արտասանուած Սաղաթէլեանի ճառը և 39-րդ նիստում (մայիսի 16-ին) արտասանուած Տէր-Աւետիքեանի ճառը, առաջինը մի քանի չնչին կրճատումներով, երկրորդը ամբողջութեամբ հեղինակի թարգմանութեամբ։

Սաղաթէլեան։ «Ինքնակալութեան երկու բարերախտ ժողովրդեան շնորհիւ պահպանուել է այն հաստատութիւնը, որին ներկայումս վիճակուած է համաշխարհային դեր կատարելու և ոչ թէ լոկ այս կայսրութեան կեանքում։ Այդ հաստատութիւնը այժմ այնպիսի մի ժամանակի է հանդիպել, երբ անպաշտպան չէ մնալու, այլ ընդհակառակը գիտական տեսութիւններով և կազմակերպուած պաշտպանողներից ուժեղացած—պիտի կատարէ իւր համաշխարհային կոչումը։ Ինքնակալութիւնը երկար ժամանակ կարծում էր, թէ ռուս գիւղացիութիւնը անկենդան, անշարժ աշխարհայեացքի տէր մի ժողովուրդ է. և այդ աշխարհայեացքը պահպանելու լաւագոյն միջոց էր համարւում համայնական հողատիրութիւնը, որ խանգարում է գիւղացութեան մէջ դասակարգերի առաջանալուն և հարստութեան մի քանիսի ձեռին ամբարելուն, ուրեմն և հնարաւորութեան որ մի մասը

Արդեօք այդ փորձերը ոչ միայն Դաշնակցութեան, այլ ընդհանրապէս Հայաստանի հայ և թաթար աշխատաւոր ժողովրդի կեանքում մի պատմական դարաշրջան չէ՞ կազմելու բոլորովին այլ հորիզոններ մեր առաջ բանալու, քան ինչ որ տեսնում էր մինչև այժմ մեր ազգաբախտ իրականութեան խաւար դաշտերում։

լուսաւորի և Եւրոպական գաղափարներ իւրացնի։ Ցաւելով պէտք է նկատեմ, որ հողի ազգայնացման (նացիոնալիզացիայի) լայն տեսութիւնը զարգացնելիս, առանձնապէս չեն շեշտում կենդանի ու ողջ մնացած հաստատութիւնը, որի հիման վրայ միայն կարելի է առաջ ընթանալ։ Հումանիստները և գիտութեան ներկայացուցիչները պարզում են անպայման ցանկալի մի տեսութիւն, որ անպատճառ երբ և իցէ իրականանալու է։ Բայց ինչպէ՞ս։ Միթէ նոյն դաժան ընթացքով, որին ենթարկուեց Եւրոպան, այսինքն նախ փոքր տնտեսութեան կործանում, սեփականութեան կեսրոնացում մի քանիների ձեռին, ապա կուի մի նոր երկրատեւ շրջան, կատաղի, թերևս արիւնահեղ կուի՝ պետութեան մէջ տնտեսական հաւասարութիւնը վերականգնելու համար։ Այդ բոլոր սարսափներից պատսպարում է համայնքը և այժմ և եթ, այս պատմական բոպէին նոր դարագլուխ է տալիս և ժամանակ անում մնացած Եւրոպայում։ Ես ընդգծում եմ այդ հաստատութիւնը. քչերը կանգ առան նրա վրայ։ Ես կարծում եմ, որ համայնատիրութեանը վտանգ է սպառնում և այդ ոչ միայն կառավարութեան կողմից։

Ուշադրութիւն դարձրէք, թէ առաջին Դումայից յետոյ ինչպիսի շտապողութեամբ յարձակուեց կառավարութիւնը համայնական հողատիրութեան վրայ։ Միթէ չէ՞ր կարելի սպասել մինչև Բ. Դումայի բացելը։ Բայց շտապեցուած կառավարութիւնը, կանխատեսելով վտանգը, շտապեց քարոզանդ անել այն հաստատութիւնը, որ, իւր տեսակէտով անսահման վտանգներ է սպառնում նրան։ Ի նկատի ունեցէք, որ կայսրութեան կեսրոնական նահանգների ազգաբնակութիւնից 70 տոկոսը համայնատէր են, մնացած մասը կիսով չափ համայնատէր են, իսկ միւսները միայն նորերս են անցել ծիական հողատիրութեան (подворному владѣнію)։ Ուրեմն գրեթէ 70 տոկոս մի բազմութիւն կայ, որին յատուկ չէ հողի սեփականութեան գաղափարը, որը գործնականօրէն և բնականաբար շահագրգռուած է լոկ հողի տարածութիւնը ընդարձակելուն։ Ոչնչացրէք այդ հաստատութիւնը. ստեղծեցէք մանր սեփականութիւն. ինչ տեսակի քաղաքական ձևեր ուզում էք նեիրմուծէք։ Դրանից քիչ կիսոխի ժողովրդի բարեկեցութիւնը։ Ապացոյց Ֆրանսիան։ Կառավարութեան ինչ ձևեր ասես նա չունեցաւ։ Թւում էր թէ բոլոր բարիքները թափուում են Ֆրանսիայի վրայ.

եայց յետոյ այդ բաղաքական բարիքները ասես օդի, լոյսի դեր են սկսում խաղալ, որոնցից բնաւ չէ փոխւում մարդուս տնտեսական վիճակը։ Դրանք պէտք է լինեն։ Բայց բարեկեցութեան աղբիւրը—հողը Ֆրանսիայում այնպէս է բաշխւած, այնպիսի պահպանողական փոքր սեփականատէր գիւղացիների պինդ ձեռքերում է, որ այն մի բուռն մասը յանձինս ինքնազոհ կռւի պատրաստ բանւորների, այն հանճարեղ մարդիկ, որոնք փորձում են լուծել Եւրոպայի տնտեսական հարցերը, երկար տարիներ անզօր են լինելու այդ լուծելու։ Ահա այդ վտանգը կայ նաև մեր առաջ ներկայ մեծ պատմական բոպէին։

Համայնքի վերաբերմամբ ես վտանգ եմ նախազգում, որովհետև ժողովրդական ազատութեան կետրոնը, որը հաւանականօրէն առաջնակարգ դեր է կատարելու այդ հարցի լուծման մէջ, ըստ երևութին չէ համակրում այդ հաստատութեանը։ Ժողովրդի բոլոր կողմնակիցները, ամենքը որոնք մտածում են նրա ապագայի մասին և չեն ուզում, որ ներկայ և ապագայ սերունդները տանջւեն, ինչպէս որ տանջւել է Եւրոպան, պէտք է ամենից առաջ պնդեն ամրողջ ոյժով, որ համայնքը պահւի։ Այդ հաստատութիւնը ընդունակ է զարգանալ և լուծել բոլոր հարցերը։

Ռուսաց կայսրութիւնը ընդարձակելով դաւ Կովկասում և Անդրկովկասում նոյն այդ ձևերը—ժողովրդի բազմութեան գիտակցութեան մէջ հողի սեփականութեան գաղափարի բացակայութիւն և համայնական հողատիրութիւն։ Այդ զուգադիպութեան շնորհիւ մենք, նոր պետութեան իշխանութեան տակ անցնելով,—հողից խլպտ չդրկւեցինք, ինչպէս որ այդ տեղի ունեցաւ Պենջաբում Անգլիայի տիրապետութեան օրով։ Պատմական ստադիայի զուգադիպութեան շնորհիւ Անդրկովկասում մնացին հողատիրութեան եղած ձևերը։ Անդրկովկասի համայնքները կարող են բազմաթիւ ապացոյցներ ընձեռել համայնքը չարաչար մեղադրողների դէմ։ Համայնքը մեղադրում են, որ հողերի ցաքուցրիւ վիճակ է ստեղծում, որ հողաբաժանումներով խանգարում է գիւղատնտեսութեանը։ Անդրկովկասի համայնքը ձևեր է մշակել, որոնք ուղղակի հերքում են այդ մեղադրանքները և ապացուցանում, որ համայնքը մի պինդ գոյացած ձև չէ, այլ ընդունակ է զանազան տիպեր ունենալու, կատարելագործելու, զարգանալու։ Անդրկովկասում շատ համայնքներ կան, ուր հողաբաժանում չէ

լինում. այնտեղ հողաբաժինները, երկար տարիների ընթացքում միևնույն ընտանիքի ձեռին են գտնուում, բայց ամեն բոպէ, երբ հողի սուր կարիք կսկսի, իսկոյն և եթ հողաբաժանում կլինի։ Իսկ ուր որ հողաբաժանումներ կան, եղել են, կամ նոր են ծագել, Ռուսաստանի նման ամեն տարի չեն կատարուում, այլ երկար շրջաններից յետոյ։ Այնտեղ հողաբաժիններից կատարեալ միախառնում, կատարեալ բաժանում, և ապա վիճակահանութիւն չեն կատարում։ Իւրաքանչիւրը իւր հողաբաժինների տէրն է մնում, իսկ գիւղացու ընտանիքի կազմի փոփոխման դէպքում, մօտաւորապէս տասը տարին մի անգամ, հող են կտրուց, այնպէս որ հողաբաժինները մնում են տէրերի ձեռին։ Հետևապէս գիւղատնտեսութեան կարիքներից առաջացած ծախսերը ոչ մի արգելքի հանդիպել չեն կարող հողատիրութեան ձևի կողմից։ Ռուսաստանում, ուր որ հողատիրութիւնը ծխական է, գիւղատնտեսութիւնը աւելի բարձր կանգնած չէ քան այն տեղերինը, ուր որ հողատիրութիւնը համայնական է։ Ներքին նահանգներից մի քանիսում, ուր որ զեմստվոն աւելի լուսամիտ, ժողովրդին նուիրած մարդկանց ձեռին է, ինտենսիւ մնտեսութեան ծագում ենք տեսնում համայնական հողատիրութեան սահմաններում։ Մի իսկ խոչնդոտը, միակ թշնամին ամբողջ ժողովրդի, ինչպէս և համայնքի, հովանաւորեալ տգիտութիւնն էր, ժողովրդին ամեն լուսաւորութիւնից, գիւղատնտեսական կուլտուրայից և տեխնիկայից ապահովագրելն էր. ահա թէ ինչ էր յետ պահում գիւղատնտեսութեան զարգացումը, և ոչ թէ համայնական հողատիրութիւնը։ Եթէ կապալառուն, 10—15 տարով կապալով վերցնելիս, միշտ համաձայն է անագին ծախսեր անել, շինութիւններ կառուցանել սեփականատիրոջ օգտին թողնելու պայմանով, մի թէ համայնատէր հողագործը, որ կարող է 50 տարի օգտուել, չի ուզենայ ծախսեր անել։ Քանի-քանի միջոցներ կան այդ ուղղելու, արւած ծախսերը վարձատրելով։ Ուրեմն համայնքի դէմ եղած բոլոր առարկութիւնները ծագում են ոչ թէ գիւղատնտեսական կուլտուրայի ցանկութիւնից, այլ այն մեծ վտանգից, որ ունի տիրող շրջանների, հողատէրերի ու բուրժուազիայի համար այդ հաստատութիւնը իւր պոտենցիալ յատկութիւնների շնորհիւ։

Հողի մեծ խնդիրը լուծելիս զուտ պէտք է ամեն տեսակ տեղական առանձնայատկութիւններ աչքի առաջ ունենաք։ Այդ կողմից առանձնապէս զատելու է Անդրկովկասը և Կովկասն ընդ-

հանրապէս։ Կովկասը, իւր տեղագրութեամբ, կլիմայով, պատմութեամբ, կենցաղի բազմաթիւ ուրոյնութիւններով և ահագին տարածութեամբ մեծ բազմազանութիւն ու հակասութիւններ է ներկայացնում, որ կայսրութեան մէջ հանդիպել կարող էք մի քանի հազար վերստ անցնելով, իսկ այնտեղ մի 10—5 վերստ տարածութեան վրայ, մինչև իսկ իրար կից ապրող հարևանների մօտ։ Հողի խնդրի լուծումը Դումայից կպահանջէ, յամենայն դէպս ինչպէս էլ որ տեղերում լուծելիս լինի, մեծ ուշադրութիւն և, ես կասեմ, բարեմիտ վերաբերմունք դէպի Անդրկովկասը։ Եթէ այս հարցը Անդրկովկասի համար շաբլոնավարի լուծի, ծանր հետևանքներ և զուր տանջանքներ կպատճառէ մի ամբողջ երկրի։ Հէնց միայն այն ուշադրութեան առէք, որ Անդրկովկասի 5 նահանգներում տասնեկնգ միլիոն տարածութիւնից միայն մօտ 8 միլիոն դեսեատինից հարկ է վերցնում. ուրեմն, ուր է մնում մնացած կէսը։ Մնացածը—ձիւնի, ժայռերի ու անապատների տակ է։ Մինչդեռ ազգաբնակութեան խտութիւնը գրեթէ նոյնն է, ինչ որ սևահող նահանգներում, գիւղացիական հողաբաժինը երկու անգամ ցածր է։ Բանաստեղծի երգած ու տեսքով գեղեցիկ Կովկասն և Անդրկովկասը տաժանակիր ու ծանր աշխատանքի մի երկիր է գիւղացիների համար։ Հողի մի երրորդ մասը Ալպեան շրջանին է հասնում. ուրեմն Կովկասի կլիման ոչ ամենուրեք այնպէս բարեխառն է, ինչպէս որ կարծում են, և ազգաբնակութեան 1/3, եթէ ոչ աւելին, ստիպւած է բնակուել ու աշխատել մի կլիմայում, որ խստութեան կողմից պակաս չէ Անդրբայկալից և Սիբիրից։ Եթէ հողի կարօտութիւնը այնքան աղաղակող է Թուսաստանում, ապա կարող էք երևակայել, թէ ինչ աստիճանի է Անդրկովկասում, ուր 15,000,000 դես. հազիւ 8,500000-ը պէտքական են մշակման, ուր ստիպւած են աշխատել կլիմայական այնպիսի պայմաններում, երբ շատ հովիտներում առանց ջրի ուղղակի ոչինչ չէ կարելի արտադրել։ Պատկերացրէք և մտածեցէք, թէ որպիսի պայմաններում է ապրում ազգաբնակութիւնը, որի ձայնը չէ լսւում, որովհետև չէ կարող անցնել հասնել ձեզ։ Անդրկովկասը ապրում էր և ապրում է առանձնապէս ծանր պայմաններում։ Տարի ու կիսւայ ընթացքում կանգ էին առել մինչև անգամ ռուսաց օրէնքները. ամեն մարդ կարող էր սպանել, ոչնչացնել, այրել որքան ուզենար, և այդ թոյլ էր տւած մինչևի ահագին ընդ-

հարուածները։ Աւելացրէք կառավարութեան ուղղակի թշնամի վերաբերմունքը դէպի լուսաւորութիւնը և առանձին կասկածոտութիւնը որ չլինի թէ այդ լուսաւորութիւնը սեպարատիզմ առաջ բերէ, որը բնական պատճառներով չէր կարող վտանգաւոր լինել կայսրութեան համար։ 1,200,000 հոգուց բաղկացած ազգի համար ճնշումների ամբողջ սիստէմ էր ստեղծւում, առաջ էին բերում ամեն տեսակ սարսափներ կասկածած սեպարատիզմը ոչնչացնելու համար։ Արդեօք գիտէք, հետաքրքիր էք իշխան Գոլիցինի գործունէութեանը։ Այնպիսի բնակարութեան էր նա հասնում, որ Ասիայումն իսկ հաղագիտա է։

Կովկասի նուաճման ժամանակից ինչ սահմաններում որ էր հողը, նոյնն էլ մնացել է. ոչ միայն տեղը փոխել, գաղթել սեփական նախաձեռնութեամբ, իւր հաշուով—չէր թոյլ տրւում նոյն իսկ ոտոգել անապատները. այդ ամենի վրայ արգելք էր դրուած։ Կարսի նահանգը Անդրկովկասին միացնելուց յետոյ, թուրքերի հեռանալու պատճառով այնտեղ մեծ տարածութիւններ ազատ մնացին. բայց այդ երկրի վրայ արգելք դրին, որովհետև կառավարութիւնը մեծ-մեծ գաղափարներով էր զբաղուած—գաղթականութեամբ երկիրը ասիմիլացիայի ենթարկելու։ Ասիմիլացիայի համար իբրև գործիք շատ միջոցներ էին ընտրւում, ի միջի այլոց նաև հողի հարցը, որը այնտեղ քաղաքական բնաւորութիւն ստացաւ։ Դէպի Կովկաս արհեստական գաղթականութիւն էին ստեղծել զուտ քաղաքական միտումներով, և չէին խնայում ոչ ռուս գաղթականներին, ոչ ընիկներին։ Եռնկարագրեցի, որ Անդրկովկասի ազգաբնակութեան խտութիւնը սահող նահանգներին է հաւասար, քառակուսի վերստին 22 հոգի է ընկնում Անդրկովկասում, իսկ Երևանի նահանգում մինչև 30, մինչդեռ կայսրութեան մէջ, ինչպէս գիտէք,—5, իսկ Սիբիրում նոյն իսկ $^1/_2$ մարդ։ Այս տեսակ կլիմայի, այսպիսի տեղադրութեան, այսպիսի հողի կարօտութիւն ունեցող երկրում հնարաւոր զտան Ռուսաստանից ազգաբնակութեան աւելորդը գաղթեցնել, ցնցող դէպքերը էին տեղի ունենում, ցնցող նոյն իսկ գաղթականների համար։ Գաղթականներին բնակեցնում էին այնպիսի տեղերում, ուր մալարիան, որին սովոր էին ընիկները, անխնայ կոտորում էր նրանց։ Այն ժամանակւայ պատրիոտները, երևի այժմեանները էլ նոյնպէս են մտածում, ասում էին, ՁԼաս չունի, մի սերունդ

կկորչի, միւսը կը սովորի ու կհաստատուի։ Իսկ մի քանի վայրերում, ուր օրինակ մահմեդական թափառականները (քոչորները) հողագործութեան անցնելու վրայ էին, հարդեր էին շինել, այսինքն արևստական արտեղան ոռոգում, ծախսելով 8000 ռուբլի, նրանց դէպի Արաքսի ափերը քշեցին, իսկ նրանց տեղը գաղթականներ բնակեցրին, որոնց ի հարկէ քիչ-քիչ կոտորելու է մայրիան։ Երբ դուխարորները, չտեսնուած դաժան հալածանքներից յետոյ, որ միջին դարերն էին յիշեցնում, այդ խաղաղ բարի մարդիկը ստիպուած էին թողնել իրենց ծննդավայրը և Ամերիկայ տեղափոխուել, Ախալքալաքի գաւառում ազատ տարածութիւն մնաց։ Դրան ևս արգելք դրին։ Կառավարութիւնը ուզում էր ամրացնել կայսրութեան սահմանը։ Այդ ամրացումը վերջ ի վերջոյ արտայայտուեց նրանով, որ խիստ զրգռեցին տեղական ազգաբնակութիւնը. այդ կերպ կառավարութիւնը հասաւ այն արդիւնքին, որպիսին միշտ հասել է—բացասական։ Նրա գործունէութեանը ներկայումս պատմութիւնը արդէն տուել է իւր դատավճիռը։

Հողի խնդրի լուծմամբ զբաղուելիս չէ կարելի առանձին ուշադրութիւն չընծայել ծայրագաւառներին, և այդ խնդրի լուծումը պատահականութեան կամ շաբլոնի ենթարկել։ Մեր երկրում մի բան հետաքրքրաշարժ է։ Մինչ Ռուսաստանում ճորտատիրութեանը բոլորովին վերջ է տրուած Ալէքսանդր Բ. կայսրի օրով առանձին պայմաններով վերջ ի վերջոյ գիւղացիներին հողից զրկելով, Անդրկովկասում պահպանուած են կիսաճորտատիրական իրաւունքները։ Անդրկովկասում ծանօթ հայրենի տեսարանների կարող էք հանդիպել, որ կարելի է խիստ դուր գան կալւածատէրերին, որոնք ուզում են վերակենդանացնել պապերի ժամանակները։ Օրինակ. գիւղացին հաւաքել է ցորենը. նա չէ կարող իւր կալը տանել. դեռ պէտք է գայ կալւածատիրոջ ներկայացուցիչը։ Սա այլ տեսակի կալւածատէր է, որը ձերինին նման չէ, նա յիշեցնում է ձեր նախկին կալւածատէրին։ Պէտք է չափեն բերքը. յետոյ կալւածատէրին հանող մասը գիւղացու սայլով պէտք է տարուի նրա ամբարը, և ապա միայն գիւղացին կարող է իւրը կալը տանել և կալսել։ Այստեղ դեռ ևս պահպանուած են կալւածատիրական առանձին իրաւունքները եկամուտների, բերքի և գիւղատնտեսական այլ արդիւնքների, կաթնատնտեսութեան վերաբերմամբ և այլն։

Այդ իրաւունքները խիստ բազմազան են նայած տեղին։ Կալւածատիրոջ մասը լինում է $^1/_4$ մինչև $^1/_{10}$. օր. Երևանի նահանգում վճարում են եկամուտի $^1/_{30}$. ասում եմ «եկամուտի» և ոչ թէ բերքի, որովհետև միայն գիւղատնտեսական արդիւնքներից չէ որ վերցուում է այդ բաժինը։ Գանձակի նահանգում—$^1/_{10}$։ Վրաստանում ճորտատիրութեան վերացմամբ այդ մնացորդը պահպանուել է, այնտեղ $^1/_4$ է։ Այս ձևերը կազմում են գլխաւոր տիպերը։ Անդրկովկասի մեծագոյն մասում տիրում են ճորտատիրական իրաւունքի մնացորդները։ Գիւղացիները տակաւին ճնշուած են ոչ միայն նիւթապէս, այլ նոյն իսկ իրենց գործունէութեան մէջ։ Վերջ ի վերջոյ, կարելի է ասել, այս զուտ անձնական իրաւունքի մի սահմանափակում է։ Հարց է ծագում, ինչպէս է առաջ եկել այդ իրաւունքը. Սոց.-դեմոկրատների ներկայացուցիչը շատ պայծառ և ճիշտ ցոյց տուեց կալւածատիրական իրաւունքի աղբիւրը բուն Ռուսաստանի վերաբերմամբ։ Անդրկովկասում նրանց ծագումը թերևս էլ աւելի վատթար աղբիւրից լինի։ Տեղական ֆէոդալների, խանների, մշտական կոիւների և նաձողների արշաւանքների ժամանակ, նրանք նուիրում էին, ում ուզենային, նուիրում էին թէ ազգարնակութիւնը, թէ հողը, պարսկական սովորոյթի իրաւունքով. հարստահարումն էլ երբեմն սովորոյթի ձև է ընդունում։ Պարսկաստանի տիրապետութեան օրով այդ բռնութիւնը այսպիսի ձև էր ստացել. ոչ թէ հող էին տալիս, այլ գիւղից եկամուտ ստանալու իրաւունք. և հասկանալի է թէ ինչու։ Ի՞նչ է նշանակում հող տալ։ Եթէ կալւածատէրը պէտք է հողը մշակէր բանուորների ձեռքով, նա ոչինչ չէր ստանայ։ Աւելի լաւ չէ՞ր լինի զուտ եկամուտի իրաւունք տալ, գիւղացուն թողնելով այնքան, որ նա կարողանար ապրել, իսկ եկամուտի մնացած մասը յանձնուում էր կալւածատիրոջ։ Այս իրաւունքը Պարսկաստանում մշտական չէր։ Այդ իրաւունքը ստանում էին պաշտօնէութեան, ծառայութեան համար, քանի որ մնում են պաշտօնավարութեան մէջ. բայց Անդրկովկասը նաձևելուց յետոյ մեր կառավարութիւնը ուժեղացրեց այդ իրաւունքը և ճանաչեց կալւածատէրերին հաւասար Ռուսաստանի կալւածատէրերին, ընդարձակեց նրանց իրաւունքները, տարածեց նաև հողի խորքերի վրայ (հանքի)։ Այս բարդ, խառնաշփոթ իրաւունքը տիրում է այնտեղ և մինչև այժմ։ Հողի հետ ոչ մի յարա-

բերութիւն չունենալով, եկամուտի մասի տերը լինելով, կալուածատէրերը ճնշում են գիւղացիներին ամէն բանում։ Այդ իրաւունքները մի այնպիսի արխայիզմ, հնացած կարգ են հանդիսանում, որ ոչ մի կերպ չեն հաշտւում բաղաքակիրթ պետութեան դաղափարի հետ։ Առանց սպասելու հողի խնդրի լուծմանը, որ ամբողջ կայսրութեան մէջ արտայայտւում է հողատիրութեան տարածութիւնն ընդարձակելու ձգտմամբ, Անդրկովկասում այս կիսաճորտատիրական յարաբերութիւնները պէտք է անյապաղ ոչնչացնել, այն էլ առանց որև է վարձատրութեան, որովհետև կալուածատէրերը իսկապէս ոչ մի բարոյական իրաւունք երբէք չեն ունեցել այդ հողերի վրայ։ Դրանք պարգևատրական ծագում ունեն, այն ևս անհիմն, և ներկայումս հանդիսանում են իբր զուտ ճորտատիրական յարաբերութիւններ։

Այս հողի խնդիրը Անդրկովկասում լուծելիս պէտք է ի նկատի ունենաք դարձեալ մի էական հանգամանք այդ երկրի նկատմամբ, ինչպէս և ընդհանրապէս այն ծայրագաւառների նկատմամբ, ուր շոգ կլիմայ է։ Հողի հասկացողութեան հետ կապւած է մշակման ընդունակ, պտղաբեր հողի դաղափարը։ Ասիայում հողը առանց ջրի մի անտարբեր առարկայ է գիւղատնտեսութեան տեսակէտից. չեմ ասում Ալպեան շրջանի մասին, որ մեր երկրում նշանաւոր տարածութիւն է գրաւում։ Հետևապէս հողի խնդրի հետ մեզանում Անդրկովկասում անպայման կապւած է ջրի, ոռոգման հարցը։ Ինչպէ՞ս կարող է այդ լուծել տեղական ազգաբնակութիւնը։ Տալ նրանց միայն հող, եթէ կայ անապատ տեղ, (այնտեղ, ուր որ հողը չէ ջրւում—անապատ է), կնշանակէր ոչինչ չտալ։ Ուր որ ջրովի հող կայ, արդէն բռնած է, և թէ ինչ աստիճան խիտ երևում է նրանից որ 1886 թ. նոյեմբերի հաշուառման հողաբաժնի չափը հասնում էր 0,97 դես.։ Որովհետև ազգաբնակութիւնը կրկնապատկւել է, ապա այդ հողաբաժինը պէտք է երկուսի բաժանել։ Մէկ խօսքով ուր որ հողը ջրելու հնար է եղել, մշակւած է. մնում է ուրեմն իբրև հողի բաւարարութիւն տալու աղբիւր անապատը և այն տեղերը որոնց վրայ կառավարութիւնը արգելք է դրել։ Բայց այդ արգելւած տեղերը չեն կարող ազգաբնակութեան քիչ թէ շատ նշանաւոր մասին բաւարարութիւն տալ։ Հարկաւոր է գլխաւորապէս ոռոգման շինա-

բարութեան դիմել։ Այս կողմից ընորոշ է, թէ ինչ դեր է կատարել մեր պետութիւնը, որքան յետ է մնացել նա նոյն իսկ տեղական ասիական նախկին բռնակալութիւններից։ Բաւականին տարածութեամբ հողեր մշակւած են Երևանեան նահանգում շնորհիւ խանների տիրապետութեան ժամանակ կառուցւած ջրմուղների։ 1844 թւին Բիլէ և Դարի անգլիացի ճարտարապետները հաշուել էին, որ կարելի է Անդրկովկասում ոռոգել 3,000000 դեսեատին հող։ Պէտք է ասել, որ այդ կատարւել էր միակ քաղաքակիրթ բիւրոկրատի օրով, որ եղել է Կովկասում, նրանից յետոյ էլ չեղան։ 3,000000 դեսեատինից այժմ ոռոգւած կայ միայն 10,000 դես. այն էլ արգելք դրելով տեղական ազգաբնակութեան համար։ Ես դարձնում եմ ձեր ուշադրութիւնը ոռոգման խնդրի վրայ նրա համար, որ երբ ազգաբնակութեան հողի բաւարարութիւն տալու կլինէք, պիտանի հող պիտի տաք. չէ որ հարցը պիտանի հողի մասին է և ոչ թէ սահմանակ հողի։ Մեզանում որպէս զի հողը պիտանի դառնայ, պէտք է ջրւի. իսկ մնացած տարածութիւնները ջրելու համար հարկաւոր են լուրջ կառուցումներ, որոնք տեղական ազգաբնակութեան ուժից վեր են։ Երբ այստեղ հողի բաւարարութիւն կստանան, այնտեղ առանց յինչպէս կառուցումների գիւղացիները կմնան անհող. տեղական ազգաբնակութեան միջոցներով, գտնէ մի քանի շրջանների, անհնար է այդ կառուցումները գլուխ բերել։ Անդրկովկասի վերաբերմամբ, կարծում եմ, նոյն և Տուրկեստանի համար, հողի խնդրից չէ կարելի անջատել ջրի խնդիրը։

Այս բոլորը յանձնարարելով ձեր ուշադրութեան, ես ի վերջոյ պէտք է յայտնեմ, թէ ինչ են տեղական ազգաբնակութեան սպասելիքները։ Տեղական ազգաբնակութիւնը հաւատում է ազատագրական շարժման ապագային, հաւատում է առաջադէմ կուսակցութիւնների դերին ու գործունէութեանը, հաւատում է կենսական խնդիրների լուծմանը, հաւատում է որ այդ բոլորը իրականանալու է, ինչպիսի արգելքներ էլ որ դրւելու լինեն պահպանողական տարրերի և բիւրոկրատիայի կողմից»։

Տէր Աւետիքեան։ «Ահա գրեթէ երկու ամիս է արդէն ինչ այստեղ Դուսայում քննադատւում է հողի խնդիրը որը այսքան երկար ժամանակամիջոցի ընթացքում քննադատւեց իր բոլոր մանրամասնութիւններով։ Բոլոր կուսակցութիւններն էլ արտայայ-

տեցին արդէն իրենց հայեացքները. իւրաքանչիւրի հայեցակէտն էլ պարզուեց բաւականին, ուստի չեմ ընդարձակելու իմ ասելիքները։ Մենք ժողովուել ենք այստեղ ոչ թէ երկար ու բարակ գիտական դատաբանութիւններ կարդալու հողի խնդրի մասին, այլ մը-շակելու այդ հարցի որոշակի վճիռը, այնպիսի մի վճիռ, որն ամբողջովին համապատասխան լինի աշխատաւոր ժողովրդի շահերին քանի որ աշխատաւոր ժողովուրդն է ամբողջ կայսրութեան ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը։ Միմիայն աշխատաւոր ժողովուրդը, գիւղացիութիւնն է, որ դարերի ընթացքում իւր արիւնով ու իւր տանջանքներով ստեղծել ու ընդարձակել է ռուսաց պետութիւնը, այն անընդգրկելի տարածութիւնը, որը միշտ գոյութիւն է ունեցել ու այժմս էլ գոյութիւն ունի աննշան, բայց իր ազդեցութեամբ, իշխանութեամբ ու բուռնցքներով ուժեղ փոքրամասնութեան երջանկութեան համար, ազնւականութեան երջանկութեան համար, այլ ոչ գիւղացիութեան։ Հողի խնդրի լուծման ժամանակ ժողովրդի հաշուով մեղմ, շւայտ կեանք վարող փոքրամասնութեան, ազնւականութեան շահերը պէտք է բռնեն ամենայետին տեղը։ Մեզ, աշխատաւոր ժողովրդի ներկայացուցիչներիս, գիւղացիութեան ներկայացուցիչներին, գիւղացիութիւն, որը նայում է հողի վրա, ինչպէս Աստծու ընդհանրական պարգևի, որ լոյսի, օդի ու ջրի հետ համահաւասար պէտք է լինի ընդհանրական սեփականութիւն, այդ հարցի լուծումը թւում է շատ հեշտ, շատ պարզ և հէնց այդպէս էլ պէտք է ընդունել սկզբունքով այդ հարցի լուծումը, այն է՝ հողը ընդհանրական համայնական սեփականատիրութեան հիմքերի վրա պէտք է պատկանի բոլոր աշխատաւորներին, այսինքն աշխատաւոր ժողովրդին և ուրիշ ոչ ոքի։ Եւ ահա այն հողերը, որոնք ներկայումս չեն գտնւում աշխատաւոր մասսաների տրամադրութեան տակ, որոնցից նրանք չեն գտնում, պէտք է անցնեն աշխատաւոր ժողովրդի ձեռքը ընդհանրական համայնական սեփականատիրութեան հիմքերի վրա. ապա թէ ոչ ժողովուրդը, որը դարերի ընթացքում շատ անգամ է վճարել հողի գինը իր արեան վտակներով, կիմանայ կազմակերպել ու ոյժով դրաւել, վերցնել ոչ միայն հողը, այլ և ուրիշ շատ խիստ թանկագին բաներ... (Աղմուկ աջակողմում)... Կիմանայ իր կազմակերպած ոյժերով ձեռք բերել այն բոլոր բարիքները, որոնց տիրանալուն ձգտում է անզսպելի կերպով։

Նախագահ՝ Պ. հանաւոր, ձեզ կարգի եմ հրաւիրում. չէ կարելի խօսել սպառնալիքների մասին։

Տէր-Աւ.։ Ճիշտ այդպէս էլ պէտք է լուծի հողային հարցը մեզանում Անդրկովկասում, որտեղ լաւագոյն պիտանի հողերի զանւում է կալւածատէրերի ու «ուղեկնի» վարչութեան տիրապետութեան տակ, վանքերի, եկեղեցիների ու մզկիթների սեփականութիւնն է, որտեղ հողային սողը այդ պատճառով, մանաւանդ Գանձակի, Երևանի ու Քութայիսի նահանգների գիւղացիութեան մէջ, աւելի աղաղակող է, քան Ռուսաստանի որ և է մի ուրիշ մասում։ Մեր անդրկովկասեան լենդ-լորդերը, հողատէր ազնուականները, եղբայրակից ռուս սեփականատէրերի նման իրենց իրաւունքները դէպի հողը նոյնպէս սրբազան են յայտարարում, վատ իմանալով Կովկասի անցեալ պատմութիւնը, վատ իմանալով, թէ ինչու համար, ինչ ծառայութիւնների շնորհիւ են ստացել նրանք այդ հողերը Կովկասի նախկին տիրապետողներից, ոչ խոշոր ինքնակալներից, բայց շատ խոշոր քմահաճոյքի տէր մարդկանցից... Այդ տիրապետողների օրով սակաւ չէին այնպիսի դէպքեր, երբ հողի հազարաւոր դեսեատիններ նուիրում էին այս կամ այն սիրելուն վարպետօրէն պարած լեզգինկայի համար կամ լաւ երգած «Մրաւալ-ժամիերգ»-ի... Մեր մելիքները, բէկերը, թաւադները, ազնուականները, աղալարներն ու խանները իրենց ձեռքով ստրկացրած գիւղացիութեան առաջ ուրիշ ծառայութիւններով պարծենալ չեն կարող...

Այդպիսի միջոցներով ձեռք բերած հողային իրաւունքները Կովկասում հաստատուած ռուս իշխանութեան կողմից ճանաչուեցին, թէև ոչ իսկոյն և եթ երկիրը նուաճելուց յետոյ. մինչև 40-ական թուականների կէսը գրագրութիւն է կատարւում այդ հարցի մասին։ Կալւածատէրերի իրաւունքները օրինաւոր ճանաչելուն ընդդիմանում էր ամենից շատ Երսօլովը, բայց երբ փոխարքայ է նշանակւում իշխան Վօրոնցովը, 40-նական թուականների կիսին, կառավարութեան վերաբերումը դէպի տեղական ազնուականները կտրուկ կերպով փոխւում է յօգուտ նրանց։ Թոյլ է տրւում հողերի գրաւումն իբրև մասնաւոր սեփականութիւն, որը տեւում է մինչև անցեալ դարի վերջը, իսկ Անդրկովկասի մի քանի խուլ անկիւններում, որպիսիներն են Նուխիի ու Արեշի գաւառները, հողերի գրաւումը կատարւում է հէնց այսօր էլ։ Իշխան Վօրոնցովը, որն այն ժամանակւայ անգլիական կարգերի երկրպագու էր.

մանաւանդ անգլիական ազնւականութեան երկրպագու, աշխատում էր անդրկովկասեան ազնւականութիւնից ստեղծել անգլիական լենդ-լորդերի դասակարգի պէս մի բան, հաստատ համոզուած լինելով, որ այդ դասակարգը կը լինի եւրոպական քաղաքականութեան, եւրոպական կուլտուրայի ներմուծողը մի երկրում, որը այն ժամանակ կուլտուրական զարգացման ստոր աստիճանի վրա էր կանգնած։ Բայց նա այդ բանում չարաչար սխալուեց, ու նրա ստեղծած դասակարգը հանդիսացաւ անգործ կենսուրախ մարդկանց մի դասակարգ, որն իւրացրեց եւրոպական արտաքինը ու եւրոպական սովորութիւնները՝ ոչնչացնելու այնպիսի հարստութիւններ, որոնք ձեռք չեն բերուած ու ձեռք չեն բերւում սեփական աշխատանքով...Իրենց կալուածները նրանք քայքայեցին, գրաւ դրին կրկնակի, եռակի անգամ ու վաշխառու—կապալառուների հետ միասին իրրև մի անտանելի բեռը ընկան գիւղացիութեան շլնքի վրա, որի արիւնը մինչև օրս ծծում են դեռ... Կովկասը հողային հարցի լուծման է կարօտ ինչպէս և ամբողջ Ռուսաստանը։

Այստեղ կովկասեան պատգամաւորներից մի քանիսը խօսեցին հողերի ոռոգման ծայրայեղ անհրաժեշտութեան մասին Կովկասում։ Այդ իսկապէս առաջնակարգ կենսական պահանջ է մեր երկրի համար. լաւ կազմակերպած ոռոգումը, ջրի առատ մատակարարումը կարող է կրկնապատկել մշակելի պտղաւէտ հողերի տարածութիւնը։ Նոյնպիսի կենսական պահանջ է մեր երկրի հաւար գաղթականութեան հոսանքի դադարեցումը ներքին Ռուսաստանից դէպի Անդրկովկաս, քանի որ գաղթականների բազմանալը աւելի ու աւելի զգալի է դարձնում առանց այդ էլ սարսափելի սակաւահողութիւնը. ռուս գաղթականները, ինչպէս յայտնի է, ինչպէս այստեղ ասել է արդէն, չեն կարողանում տանել այնտեղի կլիմայ, մեռնում են հարիւրներով։ Բացի այդ գաղթականութիւնը, որը կազմակերպւած է եղել տեղական (ընիկ կովկասեան) տարրերը ռուսացնելու նպատակով։ բերում է հակառակ հետևանքների, այն է՝ տեղական ազգաբնակութեան խաւերում զայրոյթ է յարուցանում, զայրոյթ, ուղղւած ոչ թէ Կովկաս գաղթող ռուս գիւղացիների դէմ, որոնց մեր գիւղացիները հաշւում են իրենց եղբայրներ, այլ այն պարոնների դէմ, որոնք գաղթականներով օգտւում են իրրև տեղացիներին ռուսացնելու գործիքներով, ռուսացման քաղաքականութեան նպաստող տարրով...

Այստեղ Կովկասի ներկայացուցիչներից պատգամաւորներ Շահթախթինսկին ու Խան Խոյսկին յայտարարեցին, որ իրանք հողային հարցի այնպիսի լուծման կողմնակից են, որպիսին առաջարկւում է կադետների կուսակցութեան կողմից, այսինքն կողմնակից են հողի գնման արդարացի գնահատման հիմունքների վրայ։ Ինչպէս մէկը Կովկասի ներկայացուցիչներից նրանց հետ համաձայնւել չեմ կարող։ Ես Կովկասի ամբողջ գիւղացիութեան անունից, առանց ազգութեան ու կրօնի խտրութեան, յայտարարում եմ, որ մեր գիւղական ժողովուրդը ձգտում է հողի խնդրի նոյնպիսի լուծման, ինչպիսին որ ձգտում է գիւղացիութիւնը մնացած ամբողջ Ռուսաստանի։ Կովկասի գիւղացիութիւնը իր մինչև այժմ խեղդւած ձայնը միացնում է ռուս գիւղացիութեան հզօր ձայնին, այն ձայնին, որը ազդու ու խիզախ քանիցս անգամ հնչեց այս ամբիոնից ի դժգոհութիւն մինիստրների խորհրդի պ. նախագահի։ Վճռական վայրկեանին Կովկասի ամբողջ գիւղացիութիւնը ձեռք ձեռքի տւած կը գնայ իւր մեծ եղբայր ռուս գիւղացիութեան հետ ու ձեռք կը բերի այդպիսով թէ հող, թէ ազատութիւն, ձեռք կը բերի թէ մարդկային իրաւունքներ և թէ մարդավայել կեանքի գոյութեան պայմաններ» (ծափահ. ձախակողմում)։

Հողի խնդրի գործում թէ Դումայի և թէ միացեալ կուսակցական խմբի յատուկ յանձնաժողովներում Դաշնակցական խմբակի ներկայացուցչի ունեցած մասնակցութեան մասին թող տեղեկացնէ յանձնաժողովների անդամ-պատգամաւոր Յ. Սաղաթելեանի յետագայ զեկուցումը։

«Կարեւորագոյն հարցը Բ. Դումայի համար հողայինն էր։ Դա կազմում էր դրա ոյժը և դա եղաւ նրա կորստեան պատճառը։ Սոց.-դեմոկրատների դէմ յարուցւած մեղադրանքը, որը կառավարութիւնը դարձրեց Դուման արձակելու պատրուակ, ինքնըստինքեան չնչին դէպք էր, արհեստօրէն փքացրած, դուրս գալու համար այն կրիզիսից, որը սկսել էր առաջ բերել հողի հարցը։ Ահռելի հսկայ կայսրութեան ժողովուրդը աչքերը յառած դէպի Դուման սպասում էր սրա որոշման հողի հարցի մասին. և ինչքան էլ որ չափաւոր լինէր այդ վճիռը, մահացու էր լինելու կալւածատէրերի և կառավարութեան համար։

«Երկու կողմերն էլ զգում էին, թէ ինչումն է նրանց ոյժը և վտանգը։ Ինչքան էլ որ ակնյայտնի էր, որ Դումայի ոչ մի օրի-

նագիծ բուն ժողովրդական ոգով կենդանի չէր կարող անցնել Պետական Խորհրդի միջով, նամանաւանդ հողի օրինագիծը, Պետ. Դուման տաղնապով շտապում էր արագացնել նրա իրագործումը, լաւ իմանալով, որ Դումայի արձակումը անխուսափելի է, մինչդեռ անհրաժեշտ էր ազատարար շարժման յաղթանակի տեսակէտից ցոյց տալու ժողովրդին, թէ Դուման ինչպէս է նայում նրա համար մահու և կենաց նշանակութիւն ունեցող հարցի վրայ, և ինչպէս էր կամենում լուծել այդ։

«Հետևաբար, չնայելով բազմաթիւ սուր հարցապնդումների և այլ օրինագծերի, բոլոր կուսակցութիւնները զբաղուած էին գլխաւորապէս հողի հարցով, մրցում էին փոխադարձ այդ հարցի շուրջը և յատուկ կուսակցական յանձնաժողովներ էին կազմել այդ հարցի մշակման և իրենց հայեցքների համաձայն օրինագիծ կազմելու համար։

«Հարկաւոր է արդեօք նկատել, որ ոչ մի կուսակցութիւն այնպէս չէր նուիրուած այդ հարցին ինչպէս ս.-դ.-ներինը։ Մինչդեռ սոց.-դեմոկրատ կուսակցութիւնը բոլորովին գերի դարձած իւր գոգմատիզմին, որի համաձայն գիւղացին ևս բուրժուա է համարւում, ինչ որ ֆանտաստիկ ձևով (մունիցիպալիզացիա *), ուզում էր քողարկել իւր իսկական վերաբերմունքը դէպի հողագործ գիւղացիութեան պահանջը, կադետները ընդունելով գիւղացիներին պատկանած հողի տարածութեան ընդարձակման կարևորութիւնը, նոյն իսկ ստիպողական եղանակով, անտարբեր էին դէպի հողատիրութեան ձևերը, միայն սոցիալիստ յեղափոխականների խումբն էր, որ ձգտում էր հողի խնդրի արմատական լուծման։ «Սոց.-յեղ. և դաշնակց. միացեալ խումբը» առանձին մասնաժողով ընտրեց հողի օրինագիծ մշակելու համար։ Մասնաժողովը երկար ժամանակ զբաղուեց այդ օրինագծով **), որը պիտի առաջարկուէր Դումային, և առաջարկուեց իսկ խմբի կողմից։ Կուսակ-

*) «Սոց.-դեմոկրատները ընդունելով մասնաւոր սեփականութիւն հողի վերաբերմամբ, միևնոյն ժամանակ առաջարկում են դրան ժառող մի ձև—հողերը պիտի պատկանեն առանձին ինքնավարական շրջանների։ Նկատողութեան արժանի է և այն, որ նրանք չեն ընդունում պետութեան գերագոյն իրաւունքը՝ ընդհանուր հաւասարութիւն մուծել և պաշտպանել հողատիրութեան վերաբերմամբ։

**) Տես վերջը՝ Ցաւելուածների բաժնում։ Ս. Տ.

ցական մանաժողովում հաւասար մասնակցութիւնը հողի գոյութեան միակ աղբիւրի վերաբերմամբ ընդունելով իբրև ամենալլխաւոր սկզբունք, ես ջերմ պաշտպանեցի պետութեան գերագոյն իրաւունքը հողի բաշխման և հողատիրական կարգերը հաստատելու և պաշտպանելու գործում, ի հարկէ ի դէմս ժողովրդավար սահմանադրական մարմինների, որովհետև շնորհիւ հողի յատկութեան և քանակութեան տարբերութեան, միւս կողմից պետութեան կազմի բազմազանութեան պատճառով, այդ հարցում գաւառային ինքնավարութիւնների կամ առանձին ազգերի լիազօրութիւնը անխուսափելի կերպով առաջ կբերէր եսական ձգտումներ և որոշ չափով անխուսափելի կդարձնէր նոյն չարիքը—անհաւասարութիւն հողատիրութեան մէջ։ Ապա մեր պետութեան մէջ պատմականօրէն առաջ եկած և իրապէս գոյութիւն ունեցող հաւասար հողատիրութեան ձևը—համայնական հողատիրութիւնը—համարելով անգնահատելի մի ընկերվարական կարգ, մինչդեռ հաւասարութեան վերաբերող թէօրիաներից ոչ մէկը դեռ փորձի չէ ենթարկւած և մարմնացած, ես պաշտպանում էի այն միտքը, որ այդ ձևը անհրաժեշտ կատարելագործումներով, որոնք պահանջւում են կուլտուրական և գիւղատնտեսական յառաջադիմութեան տեսակէտից *), պիտի դարձնել հիմնաքարը ցանկալի հողատիրութեան։

Դումայի հողի յանձնաժողովում շնորհիւ ծայրայեղօրէն հակադիր կուսակցութիւններից բաղկացած լինելուն՝ հողի հարցը դրւեց ամենաընդհանուր ձևով, թէ որպիսի հողեր և ինչ ձևով պէտք է ձեռք բերել գիւղական դասակարգի հողի կարիքը լրացնելու համար և արդեօք պարտադիր միջոցաւ թէ ոչ. չշոշափւեց վարձադրելու հարցը։

Ինձ առիթ եղաւ մի քանի անգամ խօսելու Դումայի այս յանձնաժողովում. ես պաշտպանում էի նացիոնալիզացիայի սկզբունքը պետութեան ամբողջ հողի վերաբերմամբ և պարտադիր համայնական հողատիրութիւն իւրաքանչիւր համայնքի շրջանում.

*) Այս կուսակցական հողի Մանաժողովում Դաշնակցական պատգամաւորը յատուկ ուշադրութեան առարկայ էր դարձրել մեր երկրի գիւղատնտեսական և կլիմայական առանձնայատուկ պայմանների շնորհիւ խիստ կարևորութիւն ունեցող ջրատիրութեան կարգերի ուսումնական շինարարման հնդիրները, որ և ինչպէս է առնւել Մանաժողովի մշակած օրինագծում։ Ս. Տ.

ծանրանալով այն ակնյայտնի իրողութեան վրայ, որ եթէ նոյն իսկ իդէալական ձևով հաւասար բաժանուին հողերը, բայց չընդունուի նացիոնալիզացիայի սկզբունքը և պարտադիր համայնական հողատիրութեան կարգը, հողերի վերստին կետրոնացումը և մասսաների հողազրկութիւնը անխուսափելի է։

«Երկար վիճաբանութիւններից յետոյ աշխատաւորականների, կադետների, սոցիալիստ յեղափոխականների և ժողովրդական սոցիալիստների միացած ձայներով որոշուեց պարտադիր գրաւում, յետաձգելով վարձատրութեան հարցը։ Արքունական, պետական և վանքական հողերի մասին որոշուեց, որ առանց վարձատրութեան յատկացուին հողագործ ժողովրդին։

«Ապա քննութեան ենթարկուեց այս հարցը—արդեօք ձեռք բերուած հողերից պէ՞տք է հողի մի ընդհանուր ֆոնդ կազմուի, որը հաւասարութեան սկզբունքի համաձայն բաժանուի ժողովրդին, թէ գրաւումը և բախշումը պիտի կատարուի ըստ տեղի և ըստ պահանջի։ Մեծամասնութեամբ մերժուեց ընդհանուր ֆոնդ կազմելու գաղափարը։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այս հարցը քէէարկելիս սոցիալ-դեմոկրատները միացան կադետներին և ոչ ձախակողմեաններին։ Հետաքրքիր էր և նկատողութեան արժանի աշխատաւորականներից բուն գիւղացի պատգամաւորների ընդհանուր վերաբերմունքը հողի հարցի պատճառով ծագած վիճաբանութիւններին։ Նրանք ձանձրանում էին, երբ միւս կուսակցութիւնները, նոյն իսկ ձախակողմեանները ձգտում էին լուսաբանել խնդիրը պետական, տնտեսական և այլ տեսակէտներից։ Նրանք շտապեցնում էին մասնաժողովը անմիջապէս դիմել խնդրին և որոշել պարտադիր գրաւում։ Հողի ստիպողական գրաւման սկզբունքը Ցանձնաժողովում ընդունելուց յետոյ փակեցին երկրորդ Դուման։

Հողի Ցանձնաժողովում ես հարց յարուցի, թէ ի՞նչպէս պիտի վարուել այն կալուածքների վերաբերմամբ, որոնք կազմում են առանձին ազգերի սեպհականութիւն, օրինակ հայ ազգի կալուածքները, որոնց նա տիրում է ի դէմս իւր ազգային եկեղեցական ինքնավար կազմակերպութեան, և եկամուտները ծախսում է հանրօգուտ հաստատութիւնների վրայ. չպիտի համարել արդեօք այդ համայնացման լաւագոյն տեսակը։ Այդ հարցն էլ ի թիւս այլոց Դուման փակուեցաւ մեաց առանց որոշման։

Թաղմական դաշտային դատարանների վերացման հարցի առիթով խօսեց Տէր-Աւետիքեանը (9-րդ նիստ, մարտի 13-ին). մատնացոյց անելով կառավարութեան հակաազատագրական քաղաքականութիւնը, կանգ առաւ գլխաւորապէս այն բանի վրայ, որ իւր այդ քաղաքականութեամբ ինքնակալ բիւրոկրատիան կռուում կոփում է ժողովրդական մասսաներում յեղափոխական ոգին, նպաստում է ազատագրական շարժման յաղթական ընթացքին, որը ոչ այնքան հեռաւոր ապագայում կը տապալի հին բռնակալ ռէժիմը իր փթած կարգերով, եթէ կառավարութիւնը օր առաջ չը խնայարհի ժողովրդի պահանջների առաջին։

Պետական ելեմուտը։ Բիւջէն պաշտպանների զործունէութեան այն առարկաներից է, որ իսկապէս մէկ հարց չէ, այլ խիստ բազմաթիւ և բազմատեսակ խնդիրների մի կենճռոտ հանդոյց։ Այն ընդհանուր օղակը, որը այդ բոլոր խնդիրները միացնում է բիւջէ կոչած ամբողջութեան մէջ, բնաւ չէ վերացնում այդ ամբողջութեան բաղկացուցիչ մասերից իւրաքանչիւրի առանձնայատուկ որպիսութիւնը։ Թող այդ բոլոր խնդիրները ի մի հաւաքուած լինին ֆինանսական տեսակէտով, բայց չէ՞ որ պետական տնտեսութեան իւրաքանչիւր ելքի և մուտքի յօդուածի իմաստն հասկանալու և քննադատելու համար պէտք է պետութեան և ժողովրդի կեանքի համապատասխան շրջանից լիակատար տեղեկութիւն ունենալ։ Առանց այդ տեղեկութիւնների բիւջէյի բոլոր գումարները (100 հազարաւոր, միլիոնաւոր և միլիարդաւոր քանակով) անիմաստ, մեռած տառեր կնանդիսանան, փոխանակ կենդանի կեանքի պերճախօս պատկերը ներկայացնելու։

Կառավարութեան կողմից ներկայացած բիւջէյի մի այդպիսի իրազեկ, փաստացի և բովանդակալից քննութիւնը և քննադատութիւնը կարող էր կատարել միմիայն յատուկ Յանձնաժողովում նախապէս ելեմուտը իւր բոլոր մասերով մանրադնին ուսումնասիրութեան ենթարկելուց յետոյ *)։ Իսկ սկզբնական քննութիւնը, որ տեղի ունեցաւ Բ. Դումայում, ի հարկէ կառա-

*) Այդ քննութիւնն ու քննադատութիւնը ոչ՝ պատասխանատու կառավարութեան համար խիստ անցանկալի մի երեոյթ լինելով՝ մինիստրութիւնը ոչ մի հնարաւոր և մինչև իսկ ապօրինի միջոցի առաջ կանգ չառաւ այդ իրեն անհաճոյ և ոչ ձեռնտու զործին խանգարելու համար Դումայի ընտրած ելեմտի Յանձնաժողովներում։

վարութեան ֆինանսական քաղաքականութեան, որ նոյն կառավարութեան ընդհանուր քաղաքականութեան արտացոլումն է, ընդհանուր քննադատութիւնը և անխնայ դատափետումը պիտի լինէր։ Այս սկզբնական քննադատութեան շրջանում արտասանուած՝ Տէր-Աւետիքեանի ճառը հէնց այդպիսի բովանդակութիւն ունէր, գլխաւորապէս Կովկասին վերաբերելով։ Բնորոշելով պետական ներկայ ելևմուտը իբրև աշխատաւոր մասսաներին կողոպտելու համար նախատեսուած մի սիստէմ, նա Դումայի ուշադրութիւնը հրաւիրեց հարկերի այն անտանելի ծանրութեան վրայ, որը գոյութիւն ունի Կովկասում. ընդգծեց Կովկասեան իշխանութեան կամայականութեամբ կատարուող ապարդիւն ծախսերը, և հատաձայն ձախակողմեան ֆրակցիաների որոշման՝ ճառի վերջում առաջարկեց կառավարութեան ներկայացրած ելևմտացոյցը չընդունել ու չէջ յանձնել նոյն իսկ բիւջէի Յանձնաժողովների նախնական քննութեան։

Հարաւային Կովկասն իբրև մի աֆտոնոմ միութիւն ընդունելու սկզբունքին հետևող կուսակցութեան համար պարտադիր մի քայլ էր պետական ընդհանուր բիւջէի քննադատութեան ժամանակ դատել հատուկ պետութեան ելևմտից Հարաւային Կովկասի յատուկ սեփական ելևմուտը, պարզելու համար Հարաւ. Կովկասի դիրքը և դերը բովանդակ պետութեան ֆինանսներում, թէ ինչ է տալիս (մուտք) և ինչ է ստանում (ելք) այս երկիրը պետութեան մնտեսութեան ապարէզում։ Համայն Ռուսաստանի և Կովկասի (կամ Հարաւ. Կովկասի) ներկայ և ապագայ ֆինանսական փոխադարձ յարաբերութիւնները պարզող լիակատար տեղեկութիւններ ունենալը (որ ներկայումս բացակայում է) անհրաժեշտ է նոյն ինքն ինքնօրէն միութեան (Հարաւ. Կովկասի) դիմագիծը որոշելու համար, քանի որ ինքնօրէն մի երկրի կեցպարանքը անշուշտ նրա միայն կլիմայի, ազգաբնակութեան և աշխարհագրական ու վարչական սահմանագծերով չէ որոշում, այլ նաև սեփական ելևմուտքի պարունակով։ Ներկայումս խնդրի այս կողմը բոլորովին անյայտ է, քանի որ Հարաւային Կովկասի ֆինանսական կեանքի տեսակները, անբաժան մասն կազմելով համայն պետութեան ընդհանուր բիւջէի, մուծուած և խառնուած են պետութեան միւս մասերի համապատասխան ելքերի և

մուտքերի հետ։ Հարաւային Կովկասի ֆինանսական դերն ու որպիսութիւնը ընդհանուր պետութեան ներկայ բիւջեյում երևան հանելուց յետոյ, այնուհետև նոյն երկրի աֆտոնոմիայի ծրագրի համեմատ, պէտք էր թւերով որոշել, թէ ապագայում Հարաւային Կովկասից ստացուող մուտքի և Հարաւ. Կովկասի վրայ ծախսուող ելքի որ մասերը պիտի շարունակեն մնալ ընդհանուր պետական իշխանութեան տրամադրութեան տակ, և որ մասերը յատկացնելու և յանձնելու են տեղական սեփական բիւջէին և տեղական ինքնօրէն միութեան սեփական իշխանութեան։... Մի շարք բարդ և մանրակրկիտ ուսումնասիրութիւնների խնդիր, որի կատարմանը դեռ նոր պէտք էր ձեռնարկել և որ կանգ առաւ Դումայի ցրելով։

Դումայի 23-րդ նիստում քննւում էր՝ ժանդարմների գլխաւոր գենեռալ Տաուբէին արտակարգ լիազօրութիւններով՝ գործադուլի առիթով Բաքու ուղարկելու մասին կառավարութեան առաջարկելիք հարցադրումը։ Մօսկց Սադաթելեանը և Բաքւի նախկին գործադուլների հիման վրա ցոյց տուց թէ ինչպէս է վերաբերուում բիւրոկրատիան աշխատանքի և կապիտալի խաղաղ տնտեսական պայքարին, թէ ինչպիսի վայրենի եղանակով միջամուխ է լինում և իւր բռնութիւններով որպիսի սոսկալի հետևանքներ առաջացնում։ «Դաան փորձը պէտք է բոլորիդ համոզած լինի, թէ ինչեր են առաջացնում այդ գենեռալները արտակարգ լիազօրութիւններով ուղարկւած, որ նրանց հետքերը շատ անգամ հրդեհ ու կախաղաններ են լինում։ Ներկայ դէպքում կառավարութեան միջամտելու նպատակը իմանալու համար պէտք է դիմել անցեալին, Բաքւի գործադուլի մոտիկ անցեալին։ Ես ականատես եմ եղել մի քանի գործադուլների, և թոյլ եմ տալիս պարզել ձեր առաջ, որ իշխանութիւնների միջամտելը այդ դէպքերում արդիւնաւորութիւնը հովանաւորելու ցանկութիւնից չէ բղխում։ Իշխանութիւնները անտես են առնում նոյն իսկ պետական գանձարանի շահերը երբ նրանց թւում է, որ այդ շարժումներում քաղաքական վտանգ կայ։ Բաքւի հէնց առաջին գործադուլից առաջ այնտեղ ուղարկել էին Էլի ժանդարմի գենեռալ Ֆոն Վալին։ Գործադուլը խաղաղ էր ընթանում. բայց այն ժամանակ, երբ ազատութեան դեռ ոչ մի նշոյլ չկար, գործադուլը մի սոսկալի երեւոյթ էր թւում, և ահա Բաքու ահագին թւով զօրք ուղարկեցին։

Բարձր իշխանությունների դժբախտությունից, այն ժամանակայ Բաքվի նահանգապետ գենեռալ Օդինցովը մարդավարի մարդ դուրս եկաւ, և ամեն միջոց գործ դրեց որ և է արիւնհեղութեան առաջն առնելու։ Բանւորների և գործարանատէրերի միջև բանակցութիւններ սկսեցին։ Այն ինչ գործարանատէրերին մի քանի անգամ առաջարկում էին, թէ «մենք կարող ենք զօրքի միջոցով ստիպել բանւորներին, որ գործի կանգնեն»։ Բայց գործարանատէրերը, որոնք այս դէպքում իրենց նիւթական շահերի համար էին վախենում, չուզեցան այդպիսի գնով հասնել հետեւանքների, որոնք անխուսափելի կլինէին այդպիսի հանգամանքներում։ Բայց իշխանութիւնը, որը միշտ և ամենուրեք միայն մի գաղափարի է հետամտում, մի ցաւով է բռնւած՝ «հալածել յեղափոխութիւնը», այդ իշխանութիւնը գործադրելը իբրև յեղափոխական շարժում նկատեց և ճնշել ուզեցաւ։ Ահա թէ ինչ նպատակով է իշխանութիւնը միջամուխ լինում գործադրելին։ Մի քանի գործարաններում գայթակղեցին և ընդունեցին կոզակներին, երբ բանւորների մի մասը արդէն վերսկսել էր աշխատանքը, իսկ միւս մասը գալիս էր բանակցելու, բայց բանակցելը արգելւած էր։ Սկսեցին կոզակների բռնութիւնները և մարդասպանութեան դէպքեր եղան։ Ահա այդ ժամանակ սարսափելի վտանգ առաջ եկաւ։ Հրդեհը լուսաւորեց Բաքուն ու բոլոր շրջակայքը։ Մի քանի բանւորներ կրակ էին գցել նաւթահանքերը, և հէնց այնտեղ, ուր կատարւել էին բռնութիւնները։ 1905 թւի գործադուլի ժամանակ Բաքւում գենեռալ-նահանգապետ էր գենեռալ Ամիլախվարին։ Սա էլ ընդունելով, որ այդ բոլորը յեղափոխական շարժում է, որի համար իշխանութիւնները պէտք է զոհաբերեն բոլոր պետական շահերը, կատարեց այն ամենը, ինչ որ թելադրել էր Ֆոն Վալը։ Բանն այն է որ երբ Ֆոն Վալը Բաքւում միջոցներ էր որոնում «վտանգաւոր շարժումը» ճնշելու համար, և նկատել էր, որ բանւորները մեծ մասամբ մի կրօնի են պատկանում, դիմել էր Օդինցովին ասելով՝ «միթէ այստեղ թաթարներ չկան»։ Այս խորհուրդը յետոյ նահանգապետ Նակաշիձէն ի կատար ածեց։ Եւ ինչ էք կարծում, ինչ արեց գէն. Ամիլախվարին երկրորդ գործադուլի ժամանակ։ Նա ակնյայտնի բռնութեան դիմեց, զէնք գործադրեց, բայց ոչ զօրքի ձեռքով։ Նա կատարեց Պետերբուրգից ուղարկած Ֆոն Վալի գաղափարը. նա թոյլ

տուեց, որ նաւթահանքերի հարևան թաթար գիւղացիները զէնք կրեն, յետոյ թոյլ տուեց, որ մասնակցեն բանւորների խորհրդակցութեանը և իւր դրդմամբ նրանք բռնի կերպով ստիպեցին իրենց մահմեդականներին գործի կանգնել։ 1905 թ. Համագումարում իրենք նաւթարդիւնաբերողները խնդրում էին մինիստր Կոկովցևից, որը պաշտպանեց նրանց կարծիքը, իսկ սրան հօ չէ՞ կարելի ազատամտութեան մէջ կասկածել, որ գործադուլները եթէ կոպիտ արտայայտութիւն են ընդունում, ապա այն բանի շնորհիւ, որ բանւորների միութիւններ չեն թոյլ տրւում, չեն թոյլ տրւում համաձայնութեան հաշտարար կամերաներ բանւորների և գործարանատէրերի խաղաղ բանակցութիւնների համար»։

—

Դումայի 33-ը նիստում (մայիսի 4-ին) քննադատւում էր ժողովրդի լուսաւորութեան մինիստրութեան քաղաքականութիւնն ու գործունէութիւնը և զարոցական գործի վիճակը թէ ընդհանրապէս բովանդակ Ռուսաստանում և թէ առանձին ծայրագաւառներում։ Խօսեց Տիգրանեանը, որը սոցիալիստ-յեղափոխականների ու դաշնակցականների միացեալ խմբի յանձնարարութեամբ ու կողմից լուսաբանեց և մերկացրեց բիւրոկրատիկ կառավարութեան ուսումնարանական քաղաքականութեան բնոյթը, ապա կանգ առաւ առանձնապէս Կովկասի Ուսումնարանական Շրջանի և Հայոց դրպրոցների խնդրի վրայ, և վերջապէս մի ամփոփ ծրագիր առաջարկեց այն հիմնական սկզբունքների, որոնց պէտք է հետեւէ Դումայի ընտրելիք Ուսումնարանական Յանձնաժողովը։ Առաջ եմ բերում այդ ճառը մի քանի աննշան կրճատումներով։

«Երբ Պետ. Դուման զննում էր պետական եկամտի նախահաշիւը, ճառախօսները մասնաւորապէս էին լինում, որ ամեն պետութեան մէջ բիւջէն կառավարական ամբողջ քաղաքականութեան արտացոլումն է, և որ բիւջէն քննելով, միաժամանակ պարզում ենք ոչ միայն երկրի յատկապէս ֆինանսական վիճակը, այլ և պետական գործունէութեան ամբողջ մեխանիզմը, ամբողջ բովանդակութիւնը։ Եւ այժմ, երբ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ներկայացրած օրինագծերի սահմանով քննում ենք ընդհանրապէս դպրոցների ու ուսումնարանական գործի վիճակի խնդիրը երկրում, ես ուզում եմ մասնաւորապէս նշել, որ այդ գործն էլ, այդ խնդիրն էլ կարող են հիանալի պայծառ հայելի ծառա-

յել, թէ ինչ է ընդհանրապէս կառավարութեան քաղաքականութիւնը, որովհետև դպրոցական ռէժիմը և դպրոցների կացութիւնը երկրում ամենասերտ կերպով կապակցած է ընդհանուր քաղաքական ռէժիմի հետ։

Երբ խօսում են դպրոցի մասին, բնականօրէն աչքի առաջ են ունենում լուսաւորութիւնը, հոգու լուսաւորումը։ Լուսաւորութիւն ասելով միշտ հասկանում են քաղաքակրթութեան ամբողջութիւնը իւր բաղմակողմանի լրութեամբ, և բնականօրէն դպրոցը, իսկական դպրոցը, իբրև լուսաւորման գործիք, ժողովրդին հոգևոր քաղաքակրթութեան հաղորդելու գործիքն է։ Ինչպէս առանձին անհատի, այնպէս էլ անձերի բազմութեան, ժողովրդի կեանքում լուսաւորութիւնը ու քաղաքակրթութիւնը առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի շահ և ինքնանպատակ են հանդիսանում։ Ժողովրդի կեանքում քիչ կան այնպիսի շահեր, որոնք այնչափ ինքնակախ և ինքնուրոյն հանդիսանային, որքան լուսաւորութեան ու քաղաքակրթութեան խնդիրներն են, որովհետև մինչև իսկ տնտեսական բարեկեցութիւնը չէ՞ որ արժէքաւոր ու թանկագին է ոչ թէ ինքն ըստ ինքեան, այլ որպէս անհրաժեշտ միջոց ուրիշ նպատակների հասնելու, որոնցից առաջինը ժողովրդի լուսաւորութիւնն է։ Մինչդեռ ժամանակ այդ շահը հանրական է, ամենքի շահն է, և չէ կարող լինել մէկը, որին խորթ լինէր լուսաւորելու շահը. ուստի ժողովրդավար (դեմոկրատիկ) երկրներում բնականօրէն դպրոցների վիճակն այնպէս է, որ ծառայում են ամբողջ ազգաբնակութեանը և լուսաւորութիւն են մատակարարում, քաղաքակրթութեան են հաղորդակցում ամբողջ ազգաբնակութիւնը անխտիր։ Իսկ այն երկրներում, ուր որ քաղաքական կազմակերպութիւնը ժողովրդավար չէ, ուր որ արտօնեալ դասակարգեր ու խմբեր կան ամեն ինչ իրենց օգտին շահագործող, բնականաբար դպրոցն էլ այն վիճակում չէ, ինչ որ ունի ժողովրդավար երկրներում։ Մեզանում, Ռուսաստանում այդ կողմից խիստ բնորոշ է դպրոցի վիճակը։

Նախ և առաջ, քիչ թէ շատ կանոնաւոր ուսումնարաններ գոյութիւն ունեն միմիայն արտօնեալ դասակարգերի համար, և իսկական ժողովրդական դպրոց իրօք գոյութիւն չունի, որովհետև ժողովրդական կոչած դպրոցները աւելի անունով քան իրօք գոյութիւն ունեն։ Եթէ կառավարութիւնը հետևողական լինէր,

այս բիւրոկրատիկ անպատասխանատու կառավարութիւնը, այդ անուանական դպրոցներն էլ չէր պահի։ Եթէ պահում է, թէկուզ անուանաբար, ապա նախ և առաջ որոշ ժողովրդական պահանջների ճնշման տակ։ Մէկ կողմից, կարծես բաշելով ժողովրդի պահանջներից, կառավարութիւնը ստիպուած է այսպէս թէ այնպէս, թէկուզ անունով, ունենալ գոնէ սակաւաթիւ ժողովրդական դպրոցներ։ Միւս կողմից, կառավարութիւնը, թէպէտև ոչ պատասխանատու, թէպէտև բիւրոկրատիկ, բայց քաղաքակրթիչ տիտղոսը կրելու յաւակնութիւն ունեցող կառավարութիւնը, ի հարկէ չէր կարող բնաւ դպրոց չունենալ, չէր կարող իւր մինիստրութիւնների շարքում ժողովրդի լուսաւորութեան մինիստրութիւն կոչողը չունենալ, թէկուզ քաղաքակիրթ Եւրոպայից բաշելով։

Բայց որովհետև վերջ ի վերջոյ բիւրոկրատիկ կառավարութիւնը ժողովրդի լուսաւորման և ժողովրդական դպրոցների գոյութեան մէջ շահագրգռուած չէ, ապա այդ դպրոցն էլ այն ողորմելի վիճակը պիտի ունենայ, ինչ որ ունի, և որովհետև կառավարութիւնը շահ ունի, որ արտօնեալ դասակարգերի արտօնութիւնները ապահովուած լինին և որ ժողովրդական մասսաները, այդ արտօնեալ դասակարգից շահագործուող ու ստրկացուող, անմոռուն ու կրաւորաբար համաձայնեն ու հաշտուեն իրենց վիճակին, ապա դպրոցներ բանալով, կառավարութիւնը միևնոյն ժամանակ դրանց բոլորովին որոշ պահանջներ էր դնում։ Այդ պահանջները ոչինչ առընչութիւն չունեն լուսաւորութեան ու քաղաքակրթութեան հետ։ Կառավարութիւնը ժողովրդական դպրոցների վրայ նայում է ոչ թէ իբրև քաղաքակրթութեան և լուսաւորութեան գործիքի վրայ, այլ որպէս ժողովրդի ողին ստրկացնելու գործիքի վրայ, մի ստրկացման, որի վրայ կարող է հիմնուել տնտեսական շահագործումը և քաղաքական ստրկացումը ամբողջ ժողովրդի (ծափահարութիւններ ձախ կողմից)։ (Աջ կողմից կանչում են՝ «դատարկ խօսք»)։ Աջակողմեանների համար այդ դատարկ բան է, իսկ ժողովրդի համար կենսական պահանջ է (ծափահարութիւններ ձախ կողմից)։

Այսպիսով դպրոցական գործը երկրում չունի այն ինքնակախութիւնը, որ պէտք է ունենար, եթէ կառավարութիւնը իրօք դպրոցների վրայ նայէր իբրև դպրոցի, լուսաւորութեան գործի-

բի վերայ։ Մինչդեռ այդ սոսրակարգ ծառայական վիճակը ազդում է նաև դպրոցները վարող տեսչության վերայ։ Այդ տմենքին յայտնի է. ժողովրդի լուսաւորության մինիստրությունը միշտ էլ ծառայական է եղել, միւս բոլոր մինիստրություններից ամենասոսրակարգը և յետինը։ Ժողովրդ. լուսաւ. մինիստրությունը չէ ունեցել իւր սեփական ուսումնարանական, այսպէս ասած, մանկավարժական քաղաքականությունը։ Նա միշտ հանդիսացել է աւելի որպէս ներքին գործերի մինիստրության առանձին բաժանմունքը և իրեն պարտաւոր է համարել անխօս ի կատար ածել դպրոցում այն կարգադրությունները ու ցուցումները, որ հաճելի էին ներքին գործերի կամ այլապէս ասած ոստիկանության մինիստրությանը։ Ուսումնարանական տեսչությունը միշտ վերջ ի վերջոյ հանդէս էր գալիս իբրև ոստիկանության տեսչություն, և ոչ թէ մանկավարժական գործունէության տեսչություն։

Այդպէս էր ժողով. լուս. մինիստրությունը մինչև այժմ, և մենք ոչ մի հիմք չունենք կարծելու, որ ներկայ կաբինետի օրով որ և է բան էապէս փոխուել է դպրոցական քաղաքականության ուղղության մէջ։ Մինիստրությունը բնաւ շահախնդրած չէ, որ դպրոցները բազմանան և լաւանան։ Եթէ հարկ լինէր հաստատելու ուսումնարանական տեսչության անանկությունը, կարելի կըլինէր շատ քիչ փաստերով շատանալ, որովհետև յուսով եմ բոլորիդ բազմաթիւ փաստեր են յայտնի։ Բիւրոկրատիկ կառավարության սահմանադրական գոյության ժամանակամիջոցում ժող. լուս. մինիստրությունը մինչև այժմ հանդէս չէ եկել դպրոցների բարեփոխման ոչ մի քիչ թէ շատ լայն մտածած ծրագրով։ Մինիստրության միայն մի օրինագիծը կարող է որոշ հետաքրքրությունն ու արժէք ներկայացնել—հանրական ուսում ներմուծելու օրինագիծը։ Բայց եթէ հանրական ուսում մտցնելը յիրաւի խոշոր գործ է, ապա դպրոցները բազմացնելուց զատ պէտք է մտածել նաև նրանց բարեկարգման մասին։ Եթէ ներկայումս ամբողջ երկրում դպրոցական կանոնը բոլորովին անկանոն է և խորապէս անբաւարար, ապա պէտք է հոգ տանենք ոչ միայն հանրական ուսում մտցնելու մասին, այլ նաև՝ որ կանոնաւոր և բարեկարգ ուսուցումն ներմուծենք և հեռացնենք այն անկարգությունը, այն քաոսը, որը տիրում է ներկայումս կառավարության բոլոր դպրոցներում։ Արդեօք կարելի է ասասել, որ ներկայ կա-

ռավարութեան և ներկայ ժող. լուս. մինիստրութեան օրով այս շրջանում որ և է դրական բան կատարեն։ Ուսումնարանական իշխանութեան ոգին բնորոշելու համար ես ժամանակիս կլինիմ վերջերս հրատարակած շրջաբերականի վրայ փոխադրման քննութիւնների վերականգնման մասին, և ժամանակաւոր քննութեան ենթարկելով, կփորձեմ ցոյց տալ, թէ ինչ ասելիք ոչ մի վստահութեան արժանի չէ այն մինիստրը, որը ժողովրդի լուսաւորման գործի գլուխ է կանգնած։ Ի՞նչը դրդեց այդ շրջաբերականը հրատարակելու։ Այն, որ անհրաժեշտ է բարձրացնել կարգապահութիւնը և բարւոքել ուսումնական մասը։

Մինիստրութեան համոզմունքն էր, որ դպրոցում կարգապահութիւնը բարձրացնելու համար պէտք է փոխադրման քննութիւնները վերականգնել։ Բայց ինչ կապ կայ փոխադրման քննութիւնների ու դպրոցում կարգապահութիւնը վերականգնելու միջև. ոչ մի կապ։ Յիրաւի, ոչ մի ամենավարժ իրաւիկ չէ կարող ասածել, որ դպրոցում կարգապահութիւնը վերականգնելու համար պէտք է աշակերտներին փոխադրել նախապէս քննութեան ենթարկելով։ Կարգապահութիւնը ու քննութիւնները ոչինչ ընդհանուր բան չունին։ Երբ դպրոցում կարգապահութիւն մտցնելու մասին խօսք է լինում, նախ և առաջ պէտք է հասկանալ, թէ ինչ բան է կարգապահութիւնը դպրոցում։ Մենք գիտենք, թէ ինչ կերպ է հասկանում այդ կարգապահութիւնը ժող. լուս. մինիստրութիւնը։ Պարզ է, որ դպրոցում ուրիշ կարգապահութիւն պիտի լինի, քան օր. զօրքում կամ այլ տեղերում եղածը։ Կարգապահութիւն ասելով մինիստրութիւնը ուզում է հասկանալ աշակերտների կատարելապէս կրաւորական վերաբերմունքը ամեն բանի, իրենց վիճակին, թէ ինչպէս և ինչ են իրենց սովորեցնում։ Անհատականութեան, ինքնակախութեան, ինքնագործութեան աւելն մի արտայայտութիւն աշակերտի կողմից մինիստրութիւնը հակակարգապահական գործողութիւն է համարում և իբրև այդպիսի մի գործ՝ անհրաժեշտ է դատում պատժել (ծափահարութիւններ ձախ կողմից)։ Այն ինչ ամեն դպրոցի գործն ու նպատակն է ոչ թէ կրաւորական անձնաւորութիւններ ստեղծել, որոնք կեանքում երբէք չեն կարողանայ ոչ մի ինքնուրոյնութիւն ու ներգործականութիւն ցոյց տալ. ընդհակառակը, դպրոցը, եթէ նա իսկական դպրոց է, պէտք է ձգտէ դատիարակելու իր սա-

ներին իրենց անձնաւորութեան արժանապատուութեան գիտակցութեան մէջ, անձնական իրաւունքի գիտակցութեան մէջ, այն գիտակցութեան մէջ, որ թէև ինքը փոքրիկ մարդ է, աշակերտ է՝ բայց և այնպէս պէտք է ինքնուրոյն կերպով քննէ ամէն բան որ իրեն է վերաբերում. ոչ մի հրաման դպրոցում վերջ ի վերջոյ չպիտի մեքենաբար գործէ, ոչ մի աշակերտ դպրոցական իշխանութեան ոչ մի պահանջին չպիտի ենթարկւի անգիտակցաբար։ Դպրոցում, իսկապէս ասած, չպիտի լինի այն կարգապահութիւնը, որի մասին կարող է խօսք լինել ուրիշ ասպարէզներում, որովհետև դպրոցում չպիտի լինի և իշխանութիւն այն մտքով, ինչ մտքով որ իշխանութիւնը հասկացւում է ուրիշ ասպարէզներում։ Դպրոցի վարիչները, դաստիարակները և ուսուցիչները պէտք է հանդէս գան ոչ թէ իբրև վարչական իշխանաւորներ հրամաններով ու կարգադրութիւններով, այլ իբրև հեղինակութիւններ, և այդ հեղինակութիւնը դաստիարակները, ուսուցիչները ու տեսուչները պէտք է վաստակեն իրենց վարւելովը աշակերտների հետ։ Ոչ մի մինիստրը չէ կարող հեղինակութիւն տալ դպրոցական այս կամ այն գործչին, եթէ վերջինս ինքը իւր գիտութիւններով, գործունէութեամբ և անձնական վարւեցողութեամբ աշակերտների հետ, չէ վաստակել այդ հեղինակութիւնը ու վստահութիւնը։ Տարիների ընթացքում ծառայել եմ դպրոցում և գիտեմ, որ ամէն մի ուսուցիչ, ամէն մի դաստիարակ, որը մտադրութիւն չունի աշակերտի անձնաւորութիւնը ստրկացնելու ու ճնշելու, որը ինքը բոլորովին անկեղծ ու մաքուր տրամադրութեամբ է մօտենում նրան, միշտ աւելի մեծ վստահութիւն ու ազդեցութիւն է վայելում աշակերտների վրայ, քան այն բոլոր տեսուչներն ու իշխանաւորները, որոնք բազմաթիւ վարչական և կառավարչական լիազօրութիւններ ունեն վերևից ստացած, բայց ոչ մի վստահութիւն չեն վայելում աշակերտների աչքում ու սրտում։

Ինչ վերաբերում է այն կէտին, իբրև թէ քննութիւնների վերականգնումը կարող է բարւոքել դպրոցների ուսումնական մասի վիճակը, ես ուզում եմ ասել, որ մանկավարժական տեսակէտից այդ ոչ մի քննադատութեան չէ դիմանում։ Երբ տարին վերջանում է, ապա ոչ մի միջոց պարզ է, որ անցած տարւայ ուսումնական մասը բարւոքել չէ կարող. տարին անցել է, և ինչ որ եղել է ուսումնական տեսակէտից, այն էլ կմնայ, ուզում էք

վերականգնեցէք քննութիւնները, ուզում էք էլի մի ուրիշ բան հնարէք, ոչ մի բանով չէ կարելի վերականգնել բաց թողածը։

Հետևապէս այդ շրջաբերականը վերջ ի վերջոյ ուրիշ բան չէ, բայց եթէ ամենասովորական վարչական ակտ մի ակտ, և ոչ մի ուսումնական-կրթական արդիւնք չի ունենայ, բացի մերկ ակտի սովորական արդիւնքից, այն որ կը ճնշէ աշակերտներին, կպատժէ նրանցից մի քանիսին, ամենաըմբոստներին ուսումնարանական իշխանութեան կարծիքով։ Եւ այս դէպքում, ինձ թւում է, որ ժող. լուս. մինիստրութիւնը հանդէս է գալիս դարձեալ ոչ ինքնակալ կերպով, որովհետև չեմ կարող ենթադրել, որ ժող. լուս. որ և է մինիստրութիւն, ոչքան էլ նա թոյլ լինէր իր մանկավարժական գործունէութեան մէջ և անընդունակ վարելու իրեն յանձնուած ուսումնական գործը, շըհասկանար, որ նման շրջաբերականով ոչինչ չէ կարող անել։ Եթէ ժողով. լուս. մինիստրութիւնը ակտի հասցնի այսպիսի մի ակտ է հրատարակում, ապա կարծում եմ, որ ներքին գործերի մինիստրութեան հրամանով է գործում... (ծափահարութիւններ ձախ կողմից), որովհետև ներկայ բիւրոկրատիկ կաբինէտը, երկրին ցոյց տալու համար, որ անպատասխանատու մինիստրութիւնը Դուման չէ վախենում, և իւր իշխանութիւնն ու ազդեցութիւնը բնաւ նուազած չեն, ինչպէս գիտենք, վճռել է ակտիսներին նոր ոյժ տալ բոլոր տեսչութիւններում. ժող. լուս. մինիստրութիւնն էլ պարտաւոր էր իւր կողմից որ և է ակտիսայ հնարել. և ահա հնարեց, հրատարակելով շրջաբերականը, որ կարելի էր ծիծաղելի անուանել, եթէ տխուր հետևանքներ առաջացրած չլինէր արդէն։

Ծայրագաւառների պատգամաւորներից մէկը լինելով, ընդհանրապէս երկրում դպրոցական գործի մասին խօսելով, ես չեմ կարող անտես անել կառավարութեան դպրոցների վիճակը և ուսումնարանական իշխանութեան գործունէութեան այսպէս ասած փառաւոր էջերը մեր կովկասեան ծայրագաւառում։ Առնասարակ կառավարութեան մէջ իրենց ուղղակի կոչումն էին համարում ոչ այնքան լուսաւորութեան, որքան միսիոնարութեան և ռուսացման նպատակները. և այս ուղղութեամբ ընթանալով ի վերջոյ ուսումնարանական իշխանութիւնը ծայրագաւառներում այնտեղ հասաւ, որ կառավարչական դպրոցները բոլորովին այլասերուեցին և որ այլևս իսկապէս, այնտեղ կառա-

վարչական ոչինչ դպրոց չկայ էլ, չկան լուսաւորող ուսումնարաններ, այլ կան այսպէս ասած՝ ռուսերէնի կուրսեր. այնտեղ դպրոցները միմիայն մի բան են սովորեցնում—ռուսաց լեզու, էլ ուրիշ ոչ մի նպատակի չեն ուզում ծառայել։ Մէկ կողմից սովորեցնել ընիկներին անծանօթ ռուսերէնը, միւս կողմից ամեն կերպ արտաբսել դպրոցից ու հասարակական կեանքից մայրենի լեզուն։ Այստեղ մեզ մատնացոյց էին լինում այն համբ մեթոդը, որը գործադրւում էր կառավարութեան բոլոր դպրոցներում ծայրագաւառներում։ Մեզանում կովկասում էլ գտնւում էին կառավարչական պաշտօնական մանկավարժներ, որոնք ուզում էին գիտակցօրէն հիմնաւորել այդ մեթոդը և ապացուցել, որ օտարազգիներին ռուսերէն սովորեցնելու համար պէտք է անծանօթ ռուսերէնի վրայ սովորեցնել. և որ մայրենի լեզուի իսպառ հեռացումը դպրոցից այն միակ ճանապարհն է, որով իբրև թէ պէտք է ընթանալ ազգարնակութեանը անյայտ ու անծանօթ ռուսերէնը սովորեցնելու։ Բայց իհարկէ պարզ է կատարեալ տեսական անհեթեթութիւնը այդ տեսութեան, որ աւելի քաղաքական քան մանկավարժական մի տեսութիւն է. բայց գործնականօրէն էլ այդ տեսութեան արդիւնքն այն եղաւ, որ ոչինչ ռուսերէն ընիկներին չսովորեցրին, այլ միայն դառնացրին ինչպէս դէպի կառավարչական լեզուն, այնպէս էլ դէպի խորթ դպրոցները. ռուսաց դպրոցները կամ բոլորովին դատարկ էին մնում, ինչպէս որ ասաց մանմեղական պատգամաւորը, կամ եթէ դատարկ չէին էլ մնում, ապա ոչինչ ուսումնական—կրթական, ոչ էլ ռուսացման արդիւնք ցոյց չէին տալիս։ Բայց այդ իհարկէ բնաւ չէր հետաքրքրում, ոչ էլ վշտացնում ուսումնարանական իշխանութեանը, որովհետև նա, վերջ ի վերջոյ, ինչպէս ներքին նահանգների, այնպէս էլ ծայրագաւառների համար իրեն կոչած չէր համարում մի բան ուսուցանել. ռուսերէնն էլ սովորեցնում էին ոչ նրա համար, որ ուզում էին հաղորդել ծայրագաւառները ռուսաց քաղաքակրթութեանը և ռուսաց զրականութեանը. ոչ. այս դէպքում իշխանութիւնը լոկ ոստիկանական ֆունկցիաների էր հետաձգում լինում և ոստիկանական գործերի ետևից ընկած, ուսումնարանական իշխանութիւնը այնտեղ էր հասնում, որ բոլորովին կորցնում էր գիտակցութիւնը, թէ ինքը իսկապէս չէ՞ որ «ուսումնարանական» վարչութիւն է, ոչ թէ մի ուրիշ բան։ Այստեղ մի

քանի փաստեր առաջ բերին ցույց տալու, թէ ինչպէս ծայրագաւառներում ուսումնարանական Շրջանների Հոգաբարձուները այնպիսի ֆունկցիաներով էին հանդէս գալիս, որոնք աւելի վայել և տեղին են որ և է ոստիկանի կամ ժանդարմի.... Այդ քաղաքականութիւնը այն աստիճան արժանի է դատապարտման, որ մինչև անգամ մինիստրների կոմիտէն սրանից մի քանի տարի առաջ այն մտքով կարծիք էր յայտնել, որ դպրոցից քաղաքականութիւնը, ոստիկանական քաղաքականութիւնը պէտք է բոլորովին արտաքսել և դպրոցը պէտք է վերականգնել իւր ուսումնական ֆունկցիաներում։

Ուսումնարանական իշխանութեան համար Կովկասում բացի այն ոստիկանական ֆունկցիաներից, որ կային այլ ծայրագաւառներում, նաև մի նոր խնդիր կար—հայոց դպրոցների դէմ կուելը։ Ես ինձ թոյլ եմ տալիս ձեր ուշադրութիւնը գրաւելու այդ դպրոցների վրայ, որովհետև այդ դպրոցները շատ կարևոր են հայ ժողովրդի կեանքում, որ ապրում է Ռուսաստանում մի միլիոն և մի քանի հարիւր հազար հոգի։ Դեռ XIX դարի սկզբից կայսրութեան հայ ազգաբնակութիւնը իրաւունք ունէր սեփական դպրոցներ ինքնօրէն վարելու յանձին տեղական ծխական համայնքների և կենտրոնական հասարակական կազմակերպութիւնների։ Հայ ժողովուրդը ինքը ազատ կերպով բաց էր անում և բոլորովին ինքնակամ վարում իւր դպրոցները թէ սկզբնական, թէ միջնակարգ, և էջմիածնում էլ ունի մինչև անգամ իւր ճեմարանը բարձրագոյն ուսումնարանների դասընթացքով։ Բայց երբ 60-ական թուականների վերջին Կովկասում առանձին ուսումնարանական տեսչութիւն է կազմակերպւում, ապա կովկասեան ուսումնարանական Շրջանի Հոգաբարձուն հանդէս է գալիս որոշ քաղաքականութեամբ այդ դպրոցների վերաբերմամբ, մի քաղաքականութեամբ, որի նպատակն էր կամ գրաւել դրանց տեղական Ուսումն. Վարչութեան ձեռքը, կամ բոլորովին փակել տալ։ Հայ ժողովրդի ու Կովկասի Ուսումն. Շրջանի Հոգաբարձուի միջև կռիւը շարունակւեց մի քանի տասնեակ տարի փոփոխական աջողութեամբ. մէկ ինքնօրինութիւնը վերականգնւում էր աւելի կամ պակաս չափով, մէկ բոլորովին փակում էին հայոց դպրոցները կամ գրաւում ժողով. լուս. մինիստրութեան տեսչութեան տակ։ Կովկասի Ուսումն. Վարչութիւնը, որն անընդունակ էր իւր

դպրոցներն ստեղծել, գրաւելով հայոց դպրոցները՝ մէկ անգամից հարիւրաւոր պատրաստի դպրոցներ էր ստանում, մէջ տեղից վերացրած էր լինում վտանգաւոր մրցակիցների, որոնց հետ անկարող էր մրցել. հայոց եկեղեցական գոյքերը գրաւելով նա ուզում էր ուրիշի հաշուով ռուսացման իւր դպրոցները պահել։ Այժմ այդ իրաւունքները վերականգնուած են, բայց և այնպէս ինքնօրինութեան այն ձևը, որ ներկայումս իրօք գոյութիւն ունի և որով կան հայոց դպրոցները Կովկասում, կարօտ է որոշ բարեփոխման և օրէնսդրական ամրապնդման, որ յուսով ենք Պետ. Դուման անհրաժեշտ կհամարի կատարել։

Մինիստրութիւնը հանրական ուսման ներմուծման օրինագիծ է մեզ ներկայացրել։ Այդ օրինագծի առաջին նախադասութիւնը չափազանց բնորոշ է. այնտեղ ասւած է, որ ժող. լուս. մինիստրութեան, այդ հաստատութեան հէնց գաղափարի հաստաձայն, պարտականութիւնն է, Ռուսաց կայսրութեան մէջ բանալ ժողովրդական դպրոցներ և աջակցել նրանց առաջադիմութեանը։ Բանից դուրս է գալիս, որ ժող. լուս. մինիստրութիւնը կոչւած է հոգ տանելու ժողովրդական դպրոցների առաջադիմութեան մասին։ Ես լաւ հասկանում եմ, թէ ինչու ժող. լուս. մինիստրը անհրաժեշտ է համարում դրանից սկսել. որովհետև բոլորս էլ գիտենք, որ մինչև այժմ այդ ֆունկցիան բնաւ չէր պատկանելիս եղել ժող. լուս. մինիստրութեան գաղափարին։ Բայց լոկ բառական խոստովանութեամբ դեռ անհնարին է վերականգնել կամ ստեղծել երկրի և Պետ. Դումայի կողմից այն վստահութիւնը դէպի ժող. լուս. մինիստրութիւնը, որ անհրաժեշտ է նոյն մինիստրութեանը այն իրաւունքները տալու համար հանրական ուսման ներմուծման և վարման գործում, որ մինիստրութիւնը ցանկանում է ստանալ ներկայ օրինագծով։ Մինիստրութիւնը իբրև թէ ուզում է տեղական հասարակական հաստատութիւններին լիակատար ազատութիւն տալ, բաց միևնոյն ժամանակ իրեն է պահում վերահսկողութեան և ղեկավարութեան իրաւունքը։ Բայց այն անվստահութիւնը, որ ամենայն արդարութեամբ ստեղծւել է երկրում դէպի այդ մինիստրութիւնը, թւում է թէ պէտք է Դուման այնպիսի որոշման բերէ, որ հանրական ուսուցման և ժողովրդական կրթութեան ներմուծման և յետագայ վարման գործը երկրում պէտք է բոլորովին ազատւած լինի ժող. լուս. մի-

նախարարության որև է միջամտությունից։ Մինիստրն ասաց, թէ ներկայումս այդ գործը այնչափ հասունացել է, որ առանց դժուարության կարելի է իրականացնել հանրական ուսումը երկրում, որովհետև ժողովրդի կողմից այժմ ոչ մի արգելք չէ դնում։ Բայց ինձ թւում է, որ բոլորովին անհիմն ու անտեղի են մինիստրի այդ խօսքերը, որովհետև մինչև այժմ ժողովուրդը չէր, որ հակառակում էր հանրական ուսման, այլ հենց կառավարությունը ու ժող. լուս. մինիստրությունը. ուստի և բոլորովին տարօրինակ է, երբ մինիստրը ասում է ժողովրդին՝ դուք այժմ էլ արգելք չէք դնում, դրա համար կարող է երկրում հանրական ուսում լինել։ Ընդհակառակը, պէտք է պահանջել, որ ժող. լուս. մինիստրությունը այլևս չխանգարէ ժողովրդի կրթության գործին (ծափահարություններ ձախ կողմից)։ Այն ժամանակ անտարակոյս ժողովրդի ուսուցումը առանց դժուարության իրականացած կլինի. և ահա որպէսզի հենց մինիստրությունը չխանգարէ, պէտք է դրան բոլորովին հեռացնել վերահսկողությունից ու ղեկավարությունից։ Ինձ թւում է, որ վերահսկողության մասին դեռ խօսք կարող էր լինել, եթէ ժող. լուսաւորման գործը յանձնելու լինէր մասնաւոր մարդկանց։ բայց երբ զարգացման գործը հասարակական, թէկուզ տեղական, հիմնարկությունների է յանձնւում, ապա այլ ևս ոչ մի հիմք ու կարիք չկայ ինչ որ մինիստրական վերահսկողության ու ղեկավարության։ Համայնքները, հասարակական ինքնավարությունները, թէ երկրային և թէ ոչ երկրային ձևով կազմակերպւած, բոլոր հասարակական կազմակերպությունները կատարելապէս ձեռնհաս են, կարող եմ ասել ժող. լուս. մինիստրությունից աւելի ձեռնհաս՝ ժողովրդի ուսուցման գործը վարելու. ուստի նաև այն, իբր թէ համեստ, իրաւունքները, որ մինիստրությանը հաճելի է պահել իրեն, ինձ թւում է, որ պէտք է մերժել նրան։ Մինչև անգամ կարծում եմ, որ եթէ ներկայումս մինիստրությունը մեզ հանրական ուսման ներմուծման օրինագիծ է առաջարկում, դրա պատճառն այն չէ, որ բիւրոկրատիկ կառավարությունը յանկարծ դէպի ժողովրդի կրթությունը առանձին սիրով է բորբոքւել, այլ հենց նրա համար է նա այդ օրինագիծը առաջ բերել, որ այդ գործը, թէկուզ այս եղանակով, իրենից կախած պահէ։ Սոցիալիստ-յեղափոխականների խումբը

գիտէ, որ մինչև որ այդ կախումը գոյութիւն կունենայ, Ռուսաստանում ոչինչ հանրական ուսում լինել չէ կարող։

Ժողովրդի կրթութեան գործի լայն իրականացումը, այնչափ դժուարին և բարդ բան է, որ կետրոնական իշխանութեան միջամտութիւնը պէտք է հեռացնել ոչ միայն ժող. լուս. մինիստրութեան կատարելապէս վարկաբեկ եղած պատճառով, այլ նաև նրա համար, որ եթէ ժող. լուս. մինիստրութիւնը ամեն վատահութեան արժանի լինէր, այն ժամանակ էլ, եթէ ցանկանում ենք Ռուսաստանի նման լայնատարած երկրում հանրական ուսումն իրականացնել, այդ գործը վերին աստիճանի ապակետրոնացնել է պէտք։ Ապա թէ ոչ դրանից ոչինչ բան դուրս չի գայ։ Ոչ թղթի վրայ «հանրական ուսում» գրած կլինի, և ոչ մի տեղ ոչ օգաններ, ոչ ոյժեր կլինեն այդ իրագործելու։ Ուրեմն, առաջին սկզբունքը, որով պէտք է փոխարինենք ներկայումս տիրող կետրոնացման կարգը,—դպրոցական գործի լիակատար ապակետրոնացումը պիտի լինի։

Ապա տիրող բիւրոկրատիկ սկզբունքը, որով ներշնչած է ներկայումս դպրոցական ամբողջ գործը, պէտք է տեղի տայ հասարակական ինքնավարութեան, և այդպիսով դպրոցը թէ ներքին ընաւորութեամբ, թէ կառավարման կարգով, թէ ծրագրի ոգով պէտք է կազմակերպել լիակատար ժողովրդավար հիմունքների վրայ։

Միայն այս երկու պայմանով հնարաւոր է, որ դպրոցը հանրամատչելի դառնայ ամբողջ ազգաբնակութեանը։ Դպրոցի հանրամատչելի լինելը երկու մտքով պէտք է հասկանայ. նախ քանակի կողմից, այսինքն որ երկրում այնքան դպրոց լինի, որ կարողանան տեղ տալ դպրոցական հասակի երեխաների ամբողջ եղած սերունդին։ Բայց գործի միայն ֆիզիքական կողմն է այս։ Դպրոցը մատչելի պիտի լինի նաև իւր որակով։ Եթէ այնպիսի դպրոցներ են լինելու, որ դատարկ են մնալու, ապա թէկուզ շատ շատ էլ լինեն, որ ֆիզիքապէս կարողանան դեռեղել բոլոր երեխաներին, բայց եթէ երեխաները այդ դպրոցները չեն գնայ, ծնողներն էլ չեն թողնի որ գնան, ապա ուսման մատչելիութեանը երկրում հասած չենք լինի։ Որպէսզի դպրոցը հանրամատչելի լինի որակով, պէտք է որ մօտ լինի ժողովրդին և որ այնպէս լինի, ինչպիսին որ հարկաւոր է տեղական ազգաբնակութեանը, մայրենի

և սիբելի լինի նրանց համար։ Իսկ այսպէս անելու համար՝ դրպրոցի կառավարութիւնը պէտք է յանձնել նոյն ինքն ժողովրդին, որ կազմակերպի այնպիսի դպրոցներ, որոնք ցանկալի, շահեկան և սիբելի են ազգաբնակութեանը։ Միայն այս պայմանով, միայն այսպիսի որակով այդ դպրոցները ժառչելի կլինեն զանազան ազգութիւններին նաև իրենց որպիսութեամբ (ծափահարութիւններ ձախ կողմից)։

Այս հիմունքների համաձայն Դումայի ընտրելիք Յանձնաժողովի զեկավարող սկզբունքները պէտք է լինեն՝ դպրոցի ժողովրդականացում, ապակեսրոնացում և ազգայնացում։ Ազգայնացում այն ժամով, որ դպրոցը պէտք է ազգաբնակութեանը մօտ լինի և զանազան ազգութիւնների պահանջներին համապատասխանէ։ Ռուսաստանում ապրող իրաքանչիւր ազգութեան իրաւունքն ու հնարաւորութիւն պիտի տրւի այնպիսի դպրոց ունենալու, որպիսին որ ցանկալի է նոյն ազգութեանը իւր գոյութեան պատմական և կենցաղավարական պայմանների շնորհիւ։ Այդպիսի դպրոցների գոյութեան հնարաւորութեան համար անպատճառ օժանդակութիւն պիտի լինի պետական միջոցներից իւրաքանչիւր վայրին և ազգութեան սրա թւի և պետութեան դպրոցական բիւջէի ընդհանուր գումարի համեմատ, որպէսզի Ռուսաստանի բոլոր ազգութիւնները այնքան և այնպիսի դպրոց ունենան, ինչ որ հարկաւոր է իւրաքանչիւր ազգութեան» (ծափահարութիւններ ձախ կողմից)։

Ժողովրդի լուսաւորութեան Յանձնաժողովի անդամ ընտրուեց սոցիալիստ-յեղափոխականների և դաշնակցականների միացեալ խմբի թեկնածու Տիգրանեանը։

Այս Յանձնաժողովը դեռ նոր էր կազմակերպել և հազիւ իւր գործին ձեռնարկել սկսել, երբ Դումայի փակումը վրայ հասաւ։

41 և 43-րորդ նիստում (մայիսի 18 և 21) Դուման քննադատեց և մերժեց կառավարութեան ներկայացրած միաուժաւոր օրինագիծը—յանցագործութիւնների դիմաքանիր պատժելի դարձնելու վերաբերեալ։ Օրինագիծն ուզում էր սահմանել, որ ով որ իւր ճառի կամ հեղինակութեան մէջ յանցաւոր գործողութիւններ կգովարանէ, պատժի ենթարկի՝ կամ 2—8 ամիս բանտարկելութեան, կամ ձերբակալութեան 3 ամսից ոչ աւելի և կամ տուգանքի 500 ռուբլուց ոչ աւելի։ Թէև օրինագծում խօսւում էր

առհասարակ ուժեն տեսակ յանցանքների զովքի մասին, բայց պարզ էր, որ քրէական յանցանքներ (օր. սովորական գողութեան, վիրաւորանքի, խաբեբայութեան) գովաբանողների մասին չէր կառավարութեան հոգսը, այլ քաղաքական յանցաւորներին գովաբանողների։ Օրինագծի միտքն էր այսպիսի կողմնակի և մասամբ քողարկած ճանապարհով ժողովրդական ներկայացուցիչների բերանից և կողմից նախատինք կարդալ տալ ժողովրդի ազատութեան և շահերի պաշտպան մարտիկների գլխին, որոնցից մի երկուսի անունը (Շմիդ, Սպիրիդոնովայ) մինչև իսկ յատուկ յիշատակած էր մինիստրի զեկուցագրում։ Ինքնակալութեան դէմ մարտնչող քաղաքական յանցաւորներին և նրանց գործը վարկաբեկ անելն էր կառավարութեան նպատակը. ազատագրական շարժման պախարակելն էր նրա յետին միտքը։ Եւ հէնց այս տեսակէտով նայեց հարցին և քննադատեց կառավարութեան օրինագիծը գաշնակցական պատգամաւոր Տիգրանեանը։

Կադէտ պատգամաւորները նոյնպէս մերժում էին օրինագիծը։ Բայց նրանց բացասումը զուտ ձևական և իրաւաբանական պատճառաբանութեամբ էր հիմնաւորուած և բնաւ չէր շոշափում խնդրի յիշեալ բուն էութիւնը, սկզբունքային, քաղաքական և բարոյական կողմը։ Օր. նրանք առարկում էին օրինագծի դէմ, թէ սա պատժելի է դարձնում բոլոր յանցանքների գովաբանումը, և ոչ թէ միայն ծանրագոյններինը. (մինչդեռ չէ որ հէնց ծանրագոյն յանցանքների թւում են կարդւած քաղաքական յանցանքները)։ Հակաճառում էին, որ «գովաբանութիւն» տերմինը անորոշ հասկացողութիւն է. առարկում էին, թէ օրինագծում սահմանուած պատիժները շատ խիստ են և կարող է պատահել, որ որև է յանցանք գովաբանողը աւելի ծանր պատժի ենթարկուի այդ օրինագծի հիմամբ, քան նոյն յանցանքը գործողը։ Իրաւարարութեան (իստիցիայի) մինիստրը իսկապէս իրաւացի կերպով հակառարկեց այս բոլոր առարկութիւններին, որ դրանք բոլորն էլ սկզբունքային բնաւորութիւնից զուրկ լինելով՝ հիմք չեն կարող լինել օրինագիծը իսպառ մերժելու։ Եթէ կան անարդարութիւններ, թերութիւններ՝ ապա օրինագիծը կարելի է ուղղել, և չպէտք է ամբողջովին մերժել։

Սակայն կադէտ ճառախօսները չկամեցան ըստ էութեան վիճաբանութիւն սկսել օրինագծի դէմ. և այս գործը կատարե-

ցին միմիայն ձախակողմեանները։ Սոց.-յեղ. և Դաշն. միացեալ խմբի յանձնարարութեամբ և կողմից պատգամաւոր Տիգրանեանը խօսեց այսպէս.

«Մինիստրութեան օրինագիծում բացի այն իրաւաբանական և ձևական կողմերից, որ զննեցին նախորդ ճառախօսները, ես կարծում եմ՝ խորը սկզբունքային կողմ կայ, որի վրայ և պէտք է մենք դարձնենք մեր գլխաւորագոյն ուշադրութիւնը։ Մինիստրութեան օրինագիծը ուզում է յանցանքի մի նոր տեսակ սահմանել, որոշելով նաև համապատասխան պատիժ։ Այդ յանցանքը՝ տիրող օրէնքներին հակառակ գործողութիւնների գովաբանելն է. ոչ թէ մէկին որոշ գործողութեան կոչ անելը, ոչ թէ դրդելը, այլ հէնց գովաբանելը, այսինքն, ուրիշ խօսքով, որոշ կարծիքներ արտայայտելը, որոշ վերաբերմունք ցոյց տալը դէպի տիրող օրէնքները և դրանց խախտող գործողութիւնները։ Եթէ ներկայ օրէնքները խախտող գործողութիւնների գովաբանումը պատժելի է և յանցաւոր, ապա ուրեմն, (եթէ դրան համաձայնենք) պէտք է ընդունենք, որ յանցաւոր է և անթոյլատրելի նոյն այդ օրէնքների նաև նոյն ինքն վատաբանումը. որովհետև, տիրող օրէնքները խախտող գործողութիւնների գովաբանումը տրամաբանօրէն ուրիշ բան չէ, բայց եթէ ներկայումս գոյութիւն ունեցող օրէնքների, սրանց բովանդակութեան վատաբանումը։ Հետևապէս մինիստրութեան օրինագիծը այն իմաստն ու նպատակն ունի, որ պատժի երկիւղով արգելէ ներկայ օրէնքների վատաբանումը։

Բայց չէ՞ որ մենք լաւ գիտենք, որ ներկայ օրէնքները վատ են, հնացած և անկատար։ Այդ գիտենք և ընդունում ենք ոչ միայն մենք, ժողովրդի ներկայացուցիչներս. նոյնպիսի կարծիք ունի տիրող հին օրէնքների մասին ինքը կառավարութիւնն իսկ։ Այդ ոգով էր խօսում ներկայ օրէնքների մասին կառավարութեան դեկլարացիան Բ. Դումայում. իսկ իրաւարարութեան մինիստրը սրանից մէկ տարի առաջ առաջին Պետական Դումայում աւելի ևս որոշակի կերպով էր արտայայտւում։ Նա գտնում էր, որ ներկայ «հին օրէնքները վերին աստիճան անկատար են», այս են մինիստրի իսկական բառերը, և որ նրանց «կատարելագործումը ոչ միայն խիստ ցանկալի, այլ մինչև իսկ անհրաժեշտ է ներկայանում»։

Եթէ այդպէս են տիրող օրէնքները մինիստրութեան տեսակէտով, ապա ինչպէս նոյն այդ մինիստրութիւնը այժմ ուզում է առանձին օրինագծով պատիժ սահմանել այն օրէնքի վատաբանութեան համար, որը հէնց ինքը ընդունում էր և, ի հարկէ, պէտք է այժմ էլ ընդունէ իբրև վերին ատեանի անկատար օրէնք։

Կարող են առարկել սրա դէմ, որ թէև օրէնքները վատ են իրենց բովանդակութեամբ, բայց օրինապահութեան գաղափարը վերջ ի վերջոյ չէ՞ որ պէտք է պաշտպանուի։ Բայց բանն այն է, որ ժողովրդի ներկայացուցչութիւնը օրինաւորութեան գաղափարը պաշտպանելիս չէ կարող լերկ օրինապահութեան այդ պաշտամունքի տեսակէտին կանգնել։ Զէ կարելի հետևել այն հայեցակէտին, իբր թէ օրէնքը, ինչպէս էլ որ լինի նրա բովանդակութիւնը, լինի ամենատանելին, պէտք է անպատճառ նուիրական համարուի և ինչպէս էլ որ լինի պաշտպանուի։ Եթէ մինիստրութիւնը, կառավարութիւնը յիրաւի ցանկութիւն ունի տիրող օրէնքների վարկը բարձրացնել, այդ բանին կարելի է հասնել ոչ թէ վատաբանումը և գովաբանումը յանցաւոր համարել սկսելով և ամենածանր պատիժներով պատուհասելով, այլ միայն միակ միջոցով. այն է, տիրող օրէնքների անպատշաճ, հնացած ներկայ բովանդակութիւնը փոխարինելով այնպիսի նորով, որը ժողովրդի իրաւաճանաչութեանը համապատասխանելով այդ իսկ պատճառով իւր ունեցած բովանդակութեան շնորհիւ նուիրական կլինէր ժողովրդի բարգաւաճման համար։ Եթէ օրէնքը իւր բովանդակութեամբ այնչափ շեղուում է ժողովրդի իրաւաճանաչութիւնից, որ հասարակութեան բարգաւաճումը, ժողովուրդը, իւր համար բարոյապէս պարտադիր և թոյլատրելի է դատում նոյն այդ օրէնքների խախտման գովաբանումը, ապա, ես կասեմ, որ ոչ մի պատիժ, ոչ մի կառավարութիւն չէ կարող վերականգնել այդպիսի մի օրէնսդրութեան վարկը։ Եթէ կառավարութիւնը յիրաւի նախանձախնդիր լինէր օրինապահութեան շահերին, եթէ ձգտէր յիրաւի օրինաւորութեան վարկը երկրում բարձրացնելու և ոչ թէ տիրող հին կարգերը աւելի ևս ամրապնդելու, ապա այդ նպատակով նա ոչ թէ այսպիսի պատժական միջոցների կդիմէր, որ ի հարկէ այդ նպատակին չեն տանում, այլ բոլորովին ուրիշ միջոցների. կառավարութիւնը ոչ միայն չէր դակաակի, ինչպէս

որ այժմ անում է, այլ ընդհակառակը կաղակցէր տիրող հնացած օրէնքների շուտափոյթ փոփոխելուն, և ժողովրդի իրաւաճանաչութեանը համապատասխանող նոր օրէնքների շուտափոյթ սահմանելուն, որոնք իրենց ներքին էութեան շնորհիւ նպիրական կլինէին ժողովրդական բազմութեան համար։

Կարծում եմ, որ եթէ մինիստրութիւնը, այս անպատասխանատու կառավարութիւնը, ընդհանրապէս օրինաւորութեան և կառավարութեան վարկը պաշտպանելու բողի տակ, ուզում է որ ժողովրդի ներկայացուցչութիւնը հաստատէ իւր առաջարկած օրինագիծը, ապա այդ կառավարութեան նպատակն այս է. նա ուզում է, որ այդ օրինագծի հաստատմամբ բարոյական նպիրագործում, բարոյական արդարացում ստանան ժողովրդի ներկայացուցչութեան կողմից տիրող կարգը, ներկայ օրէնքները և ներկայ կառավարութիւնը. որովհետև եթէ ժողովրդի ներկայացուցչութիւնը պատժելի կը յայտարարէ տիրող օրէնքների խախտման գովաբանումը, ապա դրանով նա իւր վստահութիւնը յայտնած կլինի թէ ներկայ կառավարութեանը և թէ ներկայ իրաւակարգին։ Իսկ մերժելով ներկայ օրինագծի հաստատելը ժողովրդի ներկայացուցչութիւնը կմերժէ բարոյական արդարացումից թէ տիրող կարգին և թէ անպատասխանատու կառավարութեան։

Եւ քանի որ սոց.-յեղ. խումբը այս հայեցակէտի վրայ է կանգնած, ապա գտնում է, որ ժողովրդի ներկայացուցչութիւնը առաջիկայ օրինագիծը պէտք է մերժէ ոչ թէ այն ձևական իրաւաբանական հիմունքներով, որ այստեղ արդէն ասել է, այլ յուրջ սկզբունքային պատճառաբանութեամբ։ Ժողովրդի ներկայացուցչութիւնը պէտք է ասէ. «Ներկայ օրինագիծը ես մերժում եմ և տիրող հնացած օրէնքների խախտումը յանցանք չեմ համարում. (Ծափահարութիւններ ձախակողմից)։

Դումայի նախավերջին նիստն էր յունիսի 1-ին (52-րդը)։ Մինիստրների խորհրդի նախագահի պահանջով դռնփակ դարձնում Պռոկուրորը կարդաց յայտնի երկարապատում մեղադրական ակտը *), գրեթէ բոլոր սոցիալ-դեմոկրատ պատգամաւորների դէմ ուղղուած։

*) Տես «Ժայռ» օրաթերթի № № 14 և 15 յունիսի 13 և 14, 1907 թ.

կառավարութեան պահանջը անդառնալի էր, որ և պէտք էր կատարել Ստոլիպինի ասածով «անյապաղ» և «լիովին»...

Պարզ էր, որ այդ ամբողջ պահանջը, այն էլ այդպիսի անվայել ձևով առաջադրված, իսկապէս մի սպառնական պատրւակ էր Դուման փակելու, ցրելու։ Եւ մանաւանդ ձախակողմի պատգամաւորների համար արդէն հաստատապէս անտարակուսելի էր, որ Դումայի վերջին ժամերն հասել են արդէն։

Մինիստրութեան պահանջն էր, որ Դուման անմիջապէս վճռէ դատի ենթարկելու 55 հոգի սոց.-դեմոկրատ պատգամաւորներից, որոնցից 16-ին նաև ձերբակալելու, և այդ բոլոր ամբաստանւող պատգամաւորներին զրկէ ժամանակաւորապէս Դումայի նիստերին և պարապմունքներին մասնակցելու իրաւունքից։

Պետ. Դումայի նախագահը յայտնեց, որ քանի որ մինիստրութեան այդ հարցը նիստի օրակարգում նշանակված չկայ, ուստի Դումայի ներքին կանոնադրութեան (նակազի) համաձայն խնդիրը կարող է այժմ քննել ոչ ըստ էութեան, այլ լոկ յետադայ ուղղութեան տեսակէտից, այսինքն թէ երբ և ինչ կարգով է քննելու։

Կադէտները առաջարկեցին մի յատուկ Յանձնաժողով ընտրել անմիջապէս՝ խնդիրը քննութեան առնելու ու մշակելու համար։ Ձախակողմի համար տարակոյսի առարկայ չէր, որ մինիստրութեան պահանջին մերժել է պէտք։ Սակայն քանի որ պատգամաւորների մի խոշոր թիւ կարիք էր զգում և ցանկութիւն ունէր, որ լաւ պարզի խնդիրը և մինիստրութեան կողմից զեկուցված խիստ երկար ամբաստանագիրը խնամքով և հանգամանօրէն նախ քննի և ապա թէ պատասխանը տրի, սոց.-յեղափոխականների և դաշնակցականների միացեալ խումբ չընդդիմացաւ Յանձնաժողով ընտրելուն, թէպէտև լաւ գուշակում էր դրա ապարդիւն լինելը։

Նոյն այդ նիստում խօսեց պատգամաւոր Տիգրանեանը։ «Խնդիրն այժմ բնաւ այն չէ, թէ կառավարութիւնը Դումային այս կամ այն պատգամաւորի դէմ մի ամբաստանագիր է ներկայացրել նրա՝ իրօք թէ սուտ այս կամ այն յանցանքը կատարած լինելու առիթով։ Մենք ինքներս էլ ենք գիտակցում, որ այստեղ մի ձևական հարց չէ ի հարկէ ժողովրդական ներկայացուցչութեան այս կամ այն փունկցիայի մասին, այլ երկրորդ

Պետ. Դումայի լինելու թէ չլինելու մասին է հարցը։ Ինձ թւում է, ինչպէս և շատերին, որոնց հետ ես առիթ ունեցայ այդ մասին խօսելու, որ երկրորդ Պետ. Դումայի վիճակը արդէն վճռած է. և այն լուծումը, որ մենք ընդունելու ենք կառավարութիւնից մեզ առաջադրած հարցումի վերաբերմամբ, ինձ թւում է բացի շատ այլ հիմունքներից պէտք է թելադրի նաև այն բանի գիտակցութեամբ՝ որ ներկայ նիստը երկրորդ Պետ. Դումայի վերջին նիստն է։

Այստեղ ասողներ եղան, թէ պէտք է գնահատել, բարձր գնահատել ժողովրդական ներկայացուցչութեան գաղափարը։ Բայց ասողները Պետ. Դումայի այն կողմի պատգամաւորներիցն էին, որտեղից ամենից քիչ կարելի էր այդպիսի հաւաստիացումների սպասել։ Եւ իմ կարծիքով այստեղ ներկայ գտնուողներից շատերը համոզուեցին, որ այն կողմում յիրաւի գոյութիւն ունենային անկեղծ պաշտպաններ և յարգողներ ժողովրդական ներկայացուցչութեան, այն ժողովրդական ներկայացուցչութեան գաղափարի, որը իսկապէս նուիրական է, որովհետև նրա համար մարդկային արիւն է թափել և դեռ էլի թափւում է։ Ինձ թւում է, որ ժողովրդական ներկայացուցչութիւնը ձեռնամուխ լինելով կառավարութեան առաջարկի ըստ էութեան քննութեանը, պէտք է մերժէ այդ, բանի որ ներկայ առաջարկը...»

Նախագահը ընդհատում է՝ «Ճառախօս, խնդրեմ ըստ էութեան չխօսէք, այլ լոկ յանձնաժողովին յանձնելու հարցի մասին»։

Տիգրանեանը շարունակում է «....Մտքերիս հոսանքը բոլորովին կտրեց, որովհետև այժմ Պետ. Դումայում տիրող ամբողջ տրամադրութիւնը հակասում է խնդիրը լոկ ուղղութեան կողմից և ոչ թէ ըստ էութեան քննելուն։ Վերջ ի վերջոյ ախր էլ ինչպէս կարելի է դատողութիւններ անել այս հարցի ուղղութեան մասին, բանի որ նոյն ինքն Դումայի վիճակի հարցը արդէն վճռած է ըստ էութեան։ Էլ ինչպէս այստեղ ուղղութեան հարցը քննենք, այսինքն թէ Դուման ինչ եղանակով պէտք է քննէ ներկայ խնդիրը յետագայ նիստում, որը լինելու չէ։

Նախագահ. Ձեր ոգութիւն, այդ ձեր ենթադրութիւնն է, որ ոչ մի բանի վերայ չէ հիմնուած»։

Տիգրանեան՝ «Ես տեսնում եմ, որ ներկայ դէպքում պէտք է հրաժարուեմ խօսքս շարունակելուց, որովհետև իմ բռնած տեսա-

կէաը հակասում է խնդիրը քննելու այն ձևին, որի մասին առում է նախագահը և որին ես պարտաւոր եմ ենթարկուել։

Սոց.-դեմոկրատների այս դատը քննելու համար կազմուած Յանձնաժողովի անդամ ընտրուեց սոց.-յեղափոխականների ու դաշնակցականների խմբից պատգամաւոր Տիգրանեանը։

Ի՞նչ էր անելու այդ Յանձնաժողովը. ի՞նչ պէտք է լինէր նրա հայեցակէտը։ Երկու տարբեր կարծիք յայտնուեց այս առիթով նոյն Յանձնաժողովում։

Կադէտական մեծամասնութիւնը կարծում էր, որ հարցն այն է, որ Յանձնաժողովը քննէ տեսնի, թէ ի՞նչ աստիճան ապացուցուած է մեղադրանքը, արդեօք մինիստրութիւնը ունի՞ բաւարար փաստեր և համոզիչ ցուցմունքներ, որ սոց.-դեմոկրատ պատգամաւորները յիրաւի գործել են ինչ բանում որ մեղադրւում են. այս գործը կատարելու համար ոմանք առաջարկեցին քննել վաւերաթղթերը, հարցափորձի ենթարկել մեղադրուողներին, վկաներին և այլն։ Այս կարծիքին հետևողները բնականաբար տրամադիր էին կատարելու մինիստրութեան պահանջը այն սոց.-դեմոկրատ պատգամաւորների վերաբերմամբ, որոնց վրայ բարդուած մեղադրանքը բաւարար չափով ապացուցուած կհամարուի։

Բոլորովին այլ կարծիք յայտնեց դաշնակցական պատգամաւոր Տիգրանեանը։ Մերժելով իսպառ կադէտների յիշեալ հայեցակէտը, որը Յանձնաժողովին ինչ որ դատարանական քննիչ է դարձնում, իսկ Դուումային մի դատաստանական տեսանի դեր ընծայում, մինչդեռ ժողովրդական ներկայացուցիչների ժողովը միշտ իրրև քաղաքական և օրէնսդիր բարձր մարմին պիտի հանդիսանայ, Տիգրանեանը առաջարկեց բոլորովին առանց քննութեան թողնել՝ արդեօք ամբաստանուող պատգամաւորների վերաբերմամբ մեղադրանքը ապացուցուած է թէ ոչ, այլ ամենից առաջ պարզել, թէ ի՞նչ բանում են մեղադրում սոց.-դեմոկրատ պատգամաւորներին, ի՞նչ յանցանք են վերագրում նրանց, և ապա քննել թէ այդ յանցանքը, որ ներկայ դէպքում քաղաքական և ոչ թէ քրէական բնաւորութիւն ունի անշուշտ, արդեօք պախարակելի, ստորացուցիչ որպիսութիւն ունի՞. արդեօք այդ վերագրուող յանցանքը այնպիսի՞ մի գործ է, որը չէ վայելում և չի հաշուում ժողովրդի ներկայացուցչի վեհ կոչման և բարձր դիրքի հետ, թէ ընդհակառակը մի գործ է, որը թէև հակառակ լինելով տիրող անար-

դար և հնացած օրէնքին՝ յանցանք է համարուում ձևական—իրաւական և դատարանական տեսակէտից, բայց քաղաքական և բարոյական տեսակէտից թերևս մինչև իսկ գովասանքի է արժանի։ Եւ եթէ այդպիսով Ցանձնաժողովը կտեսնի, որ մինիստրութեան մատնացոյց արած ամբաստանութիւնը այս տեսակի մի յանցանք ինկատի ունի, ապա այլ ևս մինչև իսկ աւելորդ կլինի քննելը, թէ արդեօք ապացուցուած է թէ ոչ այդ մեղադրանքը

Ցանձնաժողովի մեծամասնութիւնը սակայն այս կարծիքին չէր, և դեռ մտադիր էր շարունակելու իւր «դատարանական» քննութիւնը, երբ Դուման էնքեց իւր մահկանացուն...

V.

Նորմալ պայմաններում Դումայի Ցանձնաժողովներում և ֆրակցիական ու խմբական ժողովներում կատարուած աշխատանքի արդիւնքը պիտի երևան հանէր Դումայի ամբիոնի վրայ ընդհանուր նիստում։ Բայց երկրորդ Դումայի անժամանակ և վաղաժամ փակմամբ մի շարք Ցանձնաժողովների գործածը և պատրաստածը մնաց անկատար, լոկ նոյն Ցանձնաժողովի արձանագրութիւններում նշանակուած, առանց հասարակութեանը յայտնի դառնալու, մանաւանդ որ, ինչպէս ասացի, մաժուլի (մանաւանդ կովկասեան) էջերում էլ Ցանձնաժողովներում կատարուածների մասին քիչ բան էր գրւում։

Դումայի այսպիսի վիճակ ունեցած Ցանձնաժողովներից էին խղճի ազատութեան և տեղական դատարանի Ցանձնաժողովները, որոնց մասին և կյիշատակւի այստեղ։

Խղճի՝ ազատութեան Ցանձնաժողովի հէնց առաջին նիստում նոյն Ցանձնաժողովի անդամ պատգամաւոր Տիգրանեանը առաջարկեց ընդունել իրրև գեկավարող սկզբունք եկեղեցու ու պետութեան բաժանման սկզբունքը և այնուհետև յետագայ գործունէութեան ընթացքում հետևել այդ սկզբունքին Ցանձնաժողովի բոլոր աշխատանքներում։ Այս առաջարկին կողմնակից հանդիսացան Ցանձնաժողովի սոց.-դեմոկրատ անդամները և աշխատաւորականներից մի քանիսը. մահմեդական անդամները անորոշ ու երերուն դիրք գրաւեցին ըստ երևութին պարզ հաշիւ չտալով

խնդրի էութեան մասին։ Ցանձնաժողովի մեծամասնութիւնը կադէտների ղեկավարութեամբ խուսափեց այդ առաջարկից։

Այս առթով «Русь» լրագրի թղթակիցը (С. А.) գրում էր (№ 122, 4-го (17-го) мая 1907 г.)։ «... Խղճի ազատութեան յանձնաժողովում վերջերս իսկապէս խոշոր կարևորութիւն ներկայացնող մի իրողութիւն է տեղի ունեցել, որի վրայ հասարակութիւնը պէտք է իւր լուրջ ուշադրութիւնը դարձնէ։ Կադէտները տապալեցին մի խնդիր, որ խորունկ նշանակութիւն ունի ամենքի համար, ում համար որ թանգ է խղճի իրական ազատութիւնը, ինչ ծաւալով որ ձգտում են այն իրականացնելու։ Արևմուտքի առաջադէմ պետութիւնները։ Ցանձնաժողովում կադէտները կըռուակ կէ՛ բպով ընդդիմացան եկեղեցի պետութիւնից անջատելու խնդիրը ներկայացնելուն։ Խնդիրը յարուցել և երկու նիստում շարունակ պաշտպանել է Երևանի նահանգի պատգամաւոր պ. Տիգրանեանը։ Սկզբունքով կադէտները ի հարկէ ոչինչ չէին կարող առարկել առաջարկի դէմ, թէպէտ և անում էին առարկութիւններ։ Իրանք էլ են ցանկալի գտնում այդ սկզբունքի իրականացումը, բայց այժմս հնարաւորութիւն չկայ։ Մանաւանդ որ սկզբունքը իրականացած չէ իւր լիակատար ծաւալով նոյն իսկ Ֆրանսիայում։ Երբ այնուհետև առաջարկի հեղինակը ըստ էութեան ապացուցանել սկսեց, թէ ինչ անելանելի վիճակում կլինի խղճի ազատութեան Ցանձնաժողովը, եթէ մի որոշ և պայծառ սկզբունք չընտրէ իրեն համար, որ պիտի կարմիր թելի նման անցնի իւր բոլոր օրինագծերով, պ. պ. Բուլգակովը և Ցանձնաժողովի միւս կադէտները ձեւական հողի վրայ անցան, ասելով, թէ իբր այդպիսի մի հարց Ցանձնաժողովի իրաւասութեան սէջ չի մտնում, մշակելու չէ յանձնուած, և այլն։ Պ. Տիգրանեանը և նրա հաժախոհները ընդդիմախօսեցին, որ քանի որ կազմուածը խղճի ազատութեան Ցանձնաժողովն է, ապա հէնց դրանով իսկ ենթադրւում է, որ նա կը բացատրէ խղճի ազատման առաջին և ամենակարևոր հարցը, որով և պայծառ ուղղութիւն կտայ իւր յետագայ աշխատանքներին։ Վերջապէս, որ եկեղեցու պետութեան փոխադարձ յարաբերութիւնը այնքան սերտ կերպով կապակցած է խղճի բոլոր հարցերին, որ առանց այդ հարցը լուծելու, Ցանձնաժողովը իսկապէս ոչինչ լուծած չի լինի։ Կադէտները փորձեցին առարկել, թէ առաջարկի հեղինակը թող հա-

մասամասխան մի օրինագիծ ներկայացնել, բայց նա պատասխանեց, որ բանն օրինագիծը չէ, այլ ընդհանուր սկզբունքը։ Յանձնաժողովը որոշեց, որ այժմ ժամանակը չէ *), և հնարաւորութիւն չկայ այդպիսի մի մեծածաւալ հարցով զբաղելու, այլ պէտք է ուրի գործ անել»։

Եկեղեցին ու կրօնը պետութիւնից անջատելու սկզբունքի մերժումը այնուհետև շարունակ վիճաբանութեան և հակասութեան առարկայ էր դառնում յանձնաժողովի աշխատանքներում։ Նոյն այդ հանդամանքը խոշոր տարաձայնութեան պատճառ եղաւ կրօնական համախմբութիւնների կառավարչական օրինագծի քննադատութեան և մշակման ժամանակ։ Կադէտները թեքում էին կրօնական համախմբութիւնների սկզբնաւորութեան դէպի կենցեսիոն (թոյլատրական) եղանակը, խուսափելով լոկ ծանուցման (եավոչնի) եղանակից. կրօնական համախմբութիւնների փակման վերաբերմամբ էլ կադէտները գերադասում էին վարչական (ադմինիստրատիւ) կարգը դատաստանականին։

Կադէտային մեծամասնութեան դիմաց Յանձնաժողովում մի ձախակողմեան օպոզիցիայ գոյացաւ, որը անշեղ հետևելով խղճի լիակատար ազատութեան և պետութեան աշխարհականացման (սեկուլարիզացիայի) սկզբունքներին քննադատում էր կադէտների բանաձևերը իւր սեփական յօրինածները հակադրելով։ Կարելի է ասել, որ այդ ձախակողմեան, գլխաւորապէս սոցիալիստական օպոզիցիայի ղեկավարը դաշնակցական պատգամաւորը հանդիսացաւ։

Բացի դրանից Յանձնաժողովի գործունէութիւնը նուիրած էր նաև մէկ կողմից պարզելու թէ պետութեան տիրող օրէնքներից որո՞նք պէտք է անյապաղ վերացնել բոլոր տարադաւան և տարահաւատ քաղաքացիների անհատական իրաւունքները հաւասարեցնելու (թէ քաղաքացիական և թէ քաղաքական ասպարէզում), և թէ ի՞նչ նոր օրէնքներ հրատարակելու կարիք կայ նոյն այդ նպատակին հասնելու համար։

Յայտնի է, որ Ռուսաստանում տիրող օրէնսդրութիւնը դա-

*) Նոյն այդ հայեացքն էին պաշտպանում նաև կադէտային թերթերը՝ «Рѣчь»-ը և «Русскія Вѣдомости» (տես օր. Ս. Կոալեարեվսկու յօդուածը վերջին լրագրի № 101, մայիսի 5)։

ւանանքը ազգութիւնից և եկեղեցին ազգային կազմակերպութիւնից չէ զատում։ Տիրող օրէնսդրութեան այդ աւանդական հայեցակէտի իբրև մի հետևութիւն (եկեղեցու և ազգի ու պետութեան միութեան սկզբունք)՝ ներկայումս դաւանական և ազգային (կոնֆեսիոնալ և նացիոնալ) հարցերը շաղկապած են հանդիսանում եկեղեցական հարցերի և հասատատութիւնների հետ։ Ուստի խղճի ազատութեան Յանձնաժողովը Ռուսաստանի եկեղեցիների և կրօնների ազատման վերաբերեալ խնդիրները քննելիս ստիպած շօշափելու էր նաև Ռուսաստանի զանազան ազգութիւնների քաղաքական ազատութեան խնդիրը, ազգային ինքնավարութեան և ինքնօրինութեան (ատոնոմիայի) սահմաններում։

Սակայն Յանձնաժողովի պարապմունքները դեռ ևս պատրաստի և մշակած արդիւնքների չյանգած, փակուց Պետական Դուման։

Տեղական դատարանի Յանձնաժողովի համար առաջ եկ բերում նոյն Յանձնաժողովի անդամ պատգամաւոր Սաղաթէլեանի զեկուցումը։

«Ներկայումս ամենքի համար ակներև դարձած ճշմարտութիւնը, որ գիւղացի ժողովուրդը զրկուած է արդարադատութիւնից, որ գիւղական դատարանները ապացուցել են իրենց անպէտքութիւնը, առաջ է բերել տաղնապալի կարիք գիւղական դատավարութեան վերակազմութեան։ Կառավարութիւնը իւր կողմից շտապել էր ներկայացնել Դումային նոր դատաստանական օրինագիծ, որի համաձայն գասակարգային դատարանը վերանում է, և գիւղական դատարանների տեղ հաստատւում են հաշտարար դատարաններ։ Դատաւորը ընտրւում է տեղացիներից, որը պիտի ունենայ բարձր իրաւարանական կրթութիւն և հոգի ցնող, հաւասար զեմստուոյի ընտրողական ցենզին։

Դատավարութիւնը կատարւում է պետական լեզուով ընդհանուր օրէնքների հիման վրայ, իսկ գիւղական կեանքի այն դէպքերում, որոնք օրէնքներում նախատեսուած չեն, գործադրւում է տեղական իրաւական սովորոյթը։ Վերանորոգութիւնը վերաբերում էր միայն այն նահանգներին, որոնք ունեն զեմստվոյ և Դոնի շրջանին։ Ըստ երևոյթին կառավարչական օրինագիծը դեմոկրատիկ հիմքերի վրայ էր դրուած, բայց այդ միայն ըստ երևոյթին։

«Դատաստանական ժամանաժողովում օրինագիծը երկար վիճաբանութիւնների առարկայ եղաւ և մի քանի արմատական փոփոխութիւնների ենթարկուեց։

«Այս վիճաբանութիւնների ժամանակ և որոշուեց ձախակողմեան կուսակցութիւնների ուղղութիւնների տարբերութիւնը։

«Առաջ եկան հարցեր. 1) դատավարութիւնը ինչու տեղացի ժողովրդի լեզուով չպիտի լինի, 2) ենթարկելով գիւղական կեանքը X-րդ հատորի օրէնքներին, (Гражданскіе законы) չեն վտանգվիլ համայնական առանձնայատկութիւնները, ի թիւս դոցա և համայնական հողատիրութիւնը։

«Կադէտները շատ ընորոշ կերպով արտայայտեցին, որ կողմնակից են սեպհականութեան վերաբերմամբ հողվէական ուղղութեան, որը զարգացրել է և որի վրայ հաստատուել է այժմեան բուրժուազական կազմը։ Կադէտները մերժում էին իրաւական սովորոյթի գոյութիւնը իբրև մի հաստատուն և ռացիոնալ սիստեմի։ Այս ասիթով ևս վէճի մտայ մանաժողովում կադէտների և պահպանողականների հետ, արծարծելով այն միտքը, որ այժմ երը հասունացել է ընկերվարական կազմի վերափոխումեան հարցը, ենթարկել գիւղական կեանքը X-րդ հատորի ազդեցութեանը կնշանակէ նոր խոչնդոտ յարուցանել վերածնութեան գործին և հետզհետէ քայքայել համայնականութեան սկզբունքները և համայնական հողատիրութիւնը։ Ինչքան էլ որ առարկեն, թէ իրաւական սովորոյթները բազմազան են և անկատար՝ նրանք աւելի նպատակայարմար են և նպաստաւոր ընկերվարական յառաջադիմութեան տեսակէտից, քան X-րդ հատորը, որը ամբողջովին հիմնուած է անասնման սեպհականութեան սկզբունքի վրայ, և ներշնչուած է հողվէական օրէնքի ոգով. իրաւական սովորոյթները պատճառ չեն գիւղական դատարանի թերութիւնների, այլ մտաւորապէս և բարոյապէս անպատրաստ դատաւորները, որոնք ոչ թէ գործադրողներ են, այլ պաշտօնական յեղաշրջողներ իրաւական սովորոյթների։ Նոր դատարանի համար իրաւական սովորոյթները պիտի պարտադիր լինեն։ Հակառակ դէպքում նրանց հասցրած վնասը անհամեմատ գերազանց կլինի բան բերած օգուտը։

«Մեծամասնութեամբ ընդունուեց, որ գիւղական ժողովրդի շրջանում ժառանգութեան, ընտանեկան բաժանութեան և հողի

յարաբերութիւնների վերաբերմամբ պիտի գործադրուն իրաւական սովորոյթները, միացեալ դէպքերում X-րդ հատորը։

«Այս քննադատութեան առնուցին օրինագծի միւս անարդար կողմերը,—որ անհիմն պատճառաբանութեամբ սահմանափակում է դէմոտվոյ ունեցող նահանգներով միայն, և չի ընդունում տեղական լեզուն դատաւարութեան համար պարտադիր։

«Այս հարցերում կադէտները չպաշտպանեցին ձախակողմեանների։ Կադէտները միացան մեզ ցենզի վերաբերմամբ և մեծամասնութեամբ մերժուեց հողի ցենզը դատաւորների համար։ Նոր էին սկսել Դումայում վիճաբանութիւններ այս օրինագծի մասին, որ վրայ հասաւ նրա փակումը»։

VI.

Դումայի վաղաժամ փակմամբ, կիսակատար, նոյն իսկ մեծ մասամբ անկատար մնացին նաև մի շարք հետաքրքրաշարժ խնդիրներ ու կարևոր ակտեր, որ ձախակողմեանները և առանձնապէս սոց.-յեղ. և դաշնակց. միացեալ խումբը մշակել էր իւր կուսակցական ժողովներում, յարուցել Դումայում հանդէս բերելու և նոյն իսկ արդէն որոշ ընթացք տալ։

Պառլամենտական խմբի գործունէութեան արդիւնքը սովորաբար երևան է գալու խմբի անդամ պատգամաւորների Դումայի ամբիոնից արտասանած ճառերում և խմբի կողմից առաջարկուող բանաձևերում ու ռէզոլիւցիաներում։ Սակայն Բ. Դումայում եղան հարցեր, որոնք զանազան պատճառներով հանդէս չեկան ընդհանուր նիստերում։ Այժմ հանաւոտակի յիշատակեմ սոց.-յեղ. և դաշնակց. միացեալ խմբի այս կարգի անկատար մնացած գործունէութիւնը և յատկապէս դաշնակցական պատգամաւորների ունեցած մասնակցութիւնը։

Ամնիստիայի հարցը, որ չնայած կադէտների առաջ բերած խոչնդոտների՝ ձախակողմեան (գլխաւորապէս սոց.-յեղափոխականների, դաշնակցականների և տրուդովիկների *) խմբերի ջան-

*) Սոց. դեմոկրատները ուելորդ համարեցին ամնիստիայի համար առանձին քայլեր անելը Դումայում, օր. ամնիստիայի յատուկ առաջարկ կամ առանձին օրինագիծ յարուցանելով, որովհետև ապարդիւն էին դանումայդ։ Նրանք բաւականացան պատգամաւոր Ծերեթելու կարդացած իրենց դեկլարացիայում

քերի շնորհիվ վերջապէս Դուման իւր քննութեանն առնել որոշեց։ Սակայն կադէտները ձեւական մի հարց յարուցին, արդեօք Դուման իրաւունք ունի ամիստիայ անելու, թէ այդ Միապետի բացառիկ մենաշնորհն է, նրա իրաւասութեանն է պատկանում և անժամանելի է ժողովրդական ներկայացուցչութեանը *)։

Դուման ընտրեց յատուկ ամիստիայի Յանձնաժողով, որ պէտք է քննէր նաև այդ ձեւական իրաւաբանական հարցը Դումայի իրաւասութեանը վերաբերեալ։ Ամիստիայի Յանձնաժողովի անդամ ընտրուեց պատգամաւոր Տիգրանեանը ամբողջ սոց.-յեղ. և դաշնակց. միացեալ խմբի որոշմամբ։ Յանձնաժողովը դեռ չձեւնարկած իւր գործին Դուման ցրեցին։

Ամիստիայի նման «վտանգաւոր» հարցերից էր ըստ կադէտային հայեացքի նաև տեսուչը զատապարտելու առաջարկի քննութիւնը, որ յարուցին աջակողմեանները անշուշտ որոշ պռովոկատորական դիտաւորութեամբ։ Դումայի թէ ծայրայեղ, թէ չափաւոր աջակողմը պնդում էին, որ անհրաժեշտօրէն շուտով քննուի այդ խնդիրը և ամբողջ Դումայի կողմից որոշ պատասխան տրուի։ Ձախակողմեանները (սոց.-յեղ., դաշն. և սոց.-դեմ.) պատրաստ էին պատասխանելու և իրենց կարուկ կարծիքը հաստատակ ու շիտակ յայտնելու։ Տրուդովիկները որոշ չափով տատանուում էին։

լոկ յայտարարելով, որ «սոց. դեմոկրատ. ֆրակցիան ոչ մի բոպէ չի մոռանայ աղուծածների ու բանտարկեալների կատարեալ ազատման մասին», բայց որ դրա համար աշխատելու են «այն միակ եղանակով, որով միայն և կարող է այդ ձեռք բերուել», այն է «մշտապէս ցոյց տալով ժողովրդին, որ «ժողովուրդն ինքն ազատուելով միայն՝ կազատի և իւր կուսակիցներին»։ Եթէ աշխատաւորականները և սոց.-յեղափոխականները ամիստիայի օրինագիծ առաջարկելու վերաբերմամբ կողմնակից էին, այդ չէ նշանակում իհարկէ, որ սրանց կարծիքով օրինագիծը հաստատելու և օրէնք էր դառնալու։ Բայց եթէ անմիջական օրէնդրական արդիւնքը աչքի առաջ ունեցէր, ապա ձախակողմը ոչ մի օրինագծի առաջարկ այլ ևս ի հարկէ չպիտի անէր... Սոց.-յեղափոխականների և դաշնակցականների միացեալ խումբը սակայն ընդունում էր, որ ամիստիայի հարցը յատուկ օրինագծով յարուցանելը և Դումայում քննելը անշուշտ ազդու ագիտացիայի կարեւորութիւն էր ունենալու։

*) Այս առարկութիւնը ի հարկէ լոկ ձեւական պատրուակ էր. իրօք կադէտները դէմ էին ամիստիայի հարցը յարուցանելուն իրենց ընդունած տակտիկայից դրդուած։ Բ. Դումայում եղած կուսակցութիւնների տակտիկաների մասին տես «Կովկասի առաւօտ» օրաթերթի №№ 19, 20 (1907 թիւ) «գործելակերպերը երկրորդ Դումայում»։

Իսկ կադէտները պարզ կերպով ընդդիմանում էին այդ հարցը մէջ բերելուն։ Զէ՞ որ քաղաքական տեսորը գնահատելու հարցը կապակցված ու պայմանաւորված էր նոյնինքն ազատագրական շարժման գնահատութեան փափուկ հարցից։ Դուման փրկելու տենչանքին տարված, կադէտները չէին ուզում, որ Դումայի ընդհանուր ժողովում հանդէս գայ այդ հարցը, տաք, սուր, թեր ևս խիստ կարծիքներ յայտնուն, և իրենք էլ հարկադրված լինեն որոշ պատասխան տալու։ Իրենց կուսակցական ֆրակցիայում չափաւոր, մեղմ, մասամբ երկմիտ ուղղութիւնը ընդունելով տեսորի մասին և հրատարակելով այդ, կադէտները այնուհետև հակառաջարկով հանդէս եկան Դումայում, օրակարգից դուրս հանելու տեսորի հարցը և դրանով չզբաղելու։ Տրուդովիկները վերջ ի վերջոյ կադէտներին միանալով այս խնդրում, կադէտների առաջարկը ընդունուեց Դումայի մեծամասնութեան կողմից, և այն օրը, երբ արդէն որոշված էր որ պէտք է քննուէր տեսորի խնդիրը օրակարգի մէջ նշանակված լինելով, Դումայի մեծամասնութիւնը հրաժարուեց այդ հարցով զբաղելու։

Սոց.-յեղ. և դաշն. միացեալ խումբը հասկանալի պատճառներով մեծ կարևորութիւն էր տալիս այս հարցը լիակատար և պարզ լուսաբանելուն։ Կուսակցական ժողովի նիստում որոշուեց Դումայի ամբիոնից ոչ միայն լոկ բացատրել տեսորը, պարզելով նրա անխուսափելիութեան պատճառները երկրի քաղաքական-հասարակական կացութեան պատճառով (ինչ որ անելու էին անշուշտ սոցիալ-դեմոկրատները), այլ նաև արդարացնել այն ցոյց տալով նրա բարոյական որպիսութիւնը և նպատակայարմարութիւնը... Միացեալ խումբը յանձնարարեց սոց.-յեղ. պատգամաւոր Արխանգելսկուն և դաշն. պատգամաւոր Տիգրանեանին խօսել տեսորի մասին յիշեալ բովանդակութեամբ, որ տակայն տեղի չունեցաւ՝ տեսորի հարցը օրակարգից անակնկալ կերպով դուրս հանելու պատճառով։

Սոց.-յեղափոխ. և դաշնակց. միացեալ խմբում ընդունեցան առարկայ եղաւ նաև Դումայի նախագահ Գոլոմինի քոնած ընդարձակ ատիթ տուող սոցիալ-դեմոկրատ պատգամաւոր Արշակ Զուրաբոբի յայտնի միջնադէպն էր *)։

*) Սեահոգի օտարակեր թերթերի (գլխաւորապէս «Նովոյ Վրեմյայի» և կառավարչական պաշտօնական «տեղեկատու բիւրոյի» տարածած խեղաթիր

Գոլովինի յանցանքը այն էր, որ նիստը ընդհատելուց յետոյ (ազնուկի պատճառով) նա իրեն թոյլ տուց ենթարկուել կուսակցութեան ֆրակցիայի տրամադրութեանը և որոշմանը, անտես անելով միւս ֆրակցիաները և խմբերը, մինչդեռ նախագահը պարտաւոր է անկուսակցական և չէզոք պահել իրեն։ Այս բոլորովին սխալ ճանապարհի վրայ կանգնելով, Գոլովինը իրեն թոյլ տուց ոչ միայն նիստը վերսկսելուց յետոյ անտեղի ներբողներ կարդալ իրեն թէ վիրաւորուած զօրքի հասցէին, տարաձայնուց զրկել Զուրաբովին ձայնից և յանդիմանել, այլ նաև նիստից յետոյ անմայել մեղայական այցելութիւններ կատարել զինուորական մինիստրի և մինիստրների խորհրդի նախագահի մօտ։

Սոց.-յեղ. և դաշն. միացեալ խմբի ժողովում այս առիթով որոշուեց հարց յարուցանել նախագահի իրաւասութեան սահմանների մասին ընդհանրապէս, աչքի առաջ ունենալով նաև Գոլովինի այցելութիւնները կայսրին, որոնց մասին նա, առաջին Պետ. Դումայի նախագահ Մուրոմցևի նման, Դումային ոչինչ պաշտօնապէս չէր յայտնում։ Սուտը այն կարծիքին էր, որ Դումայի ընտրեալ նախագահը անշուշտ պատասխանատու լինելով նոյն Դումայի առաջ իւր բոլոր պաշտօնական գործերի համար, չէ կարող որ և է գաղտնիք ունենալ իրեն ընտրող մարմնից, և առանց նրա գիտութեան և հաւանութեան կարևոր և փափուկ քայլեր առնել։ Այս խնդիրը Դումայում յարուցանելու մասին որոշուեց նա-

---

ւած տեղեկութիւնների շնորհիւ. այդ միջնադէպի մասին բոլորովին սխալ տրամաբանութիւն առեղծուեց հասարակութեան մի մասի մէջ։ Միջնադէպը դրդիչ նիստում տեղի ունենալով մաքուր և ազնիւ թերթերը անկարող եղան հերքել այդ պրովոկատորական սուտը իսկական եղելութիւնը հաղորդելով հասարակութեանը։ Զուրաբովը վիրաւորական բան չասեց զօրքի մասին. «ինքնակալ պետութեան մէջ մեր զօրքը երբէք պատրաստ չի լինի արտաքին պաշտպանութեան համար, այլ հիանալի կուսակցի մեզ հետ և մեզ ցրելով, միշտ պարտութիւն կը կրէ արևելքում». ահա աջակողմին կեղծ կատաղութիւնը իրը պատճառող իսկական խօսքերը. եթէ կայ այստեղ որ և է վիրաւորանք, ապա այդ զօրքի հասցէին չէ, այլ ինքնակալութեան, որի շնորհիւ զօրքը զուրկ է կատարեալ լինելու հնարաւորութիւնից... Սակայն աջակողմի խաւար ուժերին և մանկ կառավարութեանը պրովոկացիայի պատրուակ էր հարկաւոր. այդ խօսքերը արտասանող ճառախօսի սոցիալ-դեմոկրատ և մանաւանդ օտարազգի, ոչ-ռուս լինելը յարմար ապրի համարեցին նրանք մի նոր սկանդալ սարքելու համար, և սարքեցին։

խապէս խորհրդակցել տրուդովիկների ու սոցիալ-դեմոկրատների հետ. միացեալ խմբի կողմից բանակցելը ձախակողմեանների ինֆորմացիոն բիւրոյում յանձնարարուեց Տիգրանեանին։ Սոցիալ-դեմոկրատները սկզբունքով հաստատելով, առաջ բերին խնդրի փափուկ և բարդ լինելը և առաջարկեցին մի առ ժամանակ յետաձգել Դումայում յարուցանելը (երևի ապասում էին, որ Լենգոն սոց.-դեմ. հատգումարին գնացած իրենց ընկեր-պատգամաւորները յետ դառնան)։ Սակայն Դումայի վերջնաս փակմամբ այս խնդիրն էլ մնաց այսպէս անկատար։

ՅԱԻԵԼԻԱԾ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻՆ

«Պատգամաւորը պէտք է հաստերաշխ գործէ սոցիալիստա-յեղափոխական աշխարհայեացք դաւանող բոլոր կուսակցութիւնների հետ և նրանց հետ բոլոր կարգէ, աջակցելով միաժամանակ ազատութեան և ժողովրդավարութեան սկզբունքների բոլոր անկեղծ և անշեղ կողմնակիցներին։

Համոզուած լինելով, որ Ռուսաստանի վերածնութիւնը անհնարին է առանց պառլամենտից դուրս վարող կուսի, պատգամաւորի վրայ պարտք է դրուում իր խօսքերը և կոչերը համապատասխանեցնել այն քաղաքական և յեղափոխական քայլերի հետ, որոնք կարող են նախաձեռնել ժամանակակից յեղափոխական շարժումն իրենց ուսերի վրայ տանող հասարակական տարրերը—յեղափոխական ինտելիգենցիան, աշխատաւոր դասակարգի գիտակից խաւերը, ճնշած ազգերը և յեղափոխական բանակը։

Այս նպատակով պատգամաւորը պարտաւոր է.

Զգալ Սահմանադիր ժողովի գումարմանը, յեղափոխական և սոցիալիստական տեսակէտներից քննելով այն բոլոր հարցերը, որոնք ներկայ ազատագրական շարժման առանցքն են կազմում։—

ա) Իրականացնել Ռուսաստանում լիակատար ժողովրդաղ-

տութիւն. Սահմանադիր ժողովը պէտք է գումարի ընդհանուր, հաւասար, գաղտնի, ուղղակի և համեմատական (պրոպորցիոնալ) ձայնատուութեան հիման վրայ։

բ) Լուծել ազգերի հաւասարութեան խնդիրը Ռուսաստանում։

գ) Ամբողջ հողը տալ երկրագործ ժողովրդի ձեռքը։

դ) Իրականացնել բանւոր դասակարգի բոլոր նւազագոյն պահանջները. 8 ժամեայ բանւորական օր։ Ոչ թոյլատրել առանց քննութեան բանւորական օրէնսդրութեան և ոչ մի կողմը։

Իսկ Ռուսաստանի քաղաքական վերակազմակերպման խնդրում Դաշնակցութիւնը դեմոկրատիզմի և ազատութեան սկզբունքներից դրդած պահանջում է փոխել պետութեան ցենտրալիստական (կեսրոնացնող) կազմակերպութիւնը դեցենտրալիստականի (ապակեսրոնական), հիմնւած դաշնակցական (ֆեդերատիւ) սկզբունքի վրայ, թողնելով ընդհանուր պետական օրէնսդիր մարմնի կոմպետէնցիային (իրաւասութեանը) միայն ընդհանուր պետական հարցերը, ինչպիսի են, օրինակ, պետութեան պաշտպանումը, ժաքսի և դրամի սիստեմը, պօստ-հաղորդակցութիւնը եայլ դրանց նման խնդիրները, մնացած բոլոր խնդիրների քննութիւնը և նրանց վերաբերմամբ օրէնսդրութիւն յօրինելը թողնելով շրջանային սէյմերին, որոնք պէտք է կազմւեն Ռուսաստանի զանազան շրջաններում և մասնաւորապէս Անդրկովկասում։ Միայն այդ սէյմերը հնարաւորութիւն կունենան և ձեռնհաս կարող են լինել հողի իրաւական, ազգային, կուլտուրական և այլ զանազան հարցերը լուծելու։

Ազգերի հաւասարութեան սկզբունքը ոչ թէ խօսքով այլ իրապէս իրականացնելու, փոքրամասնութեան իրաւունքների ապահովման գրաւական ներկայացնելու, և կովկասեան ազգերի ազգային կռիւներին ու պառակտումներին վերջ տալու նպատակով, անհրաժեշտ է ա) քաղաքների, շրջանների, պետութեան և այլ ինքնավար մարմինների ուսումնարանական և այլ կուլտուրական կրթական բիւջէները բաժանել առանձին ազգութիւնների և հանրայնքների մէջ համեմատ նրանց բնակչութեան թւին։

բ) Բոլոր պետական և հասարակական հիմնարկութիւններում պէտք է պաշտօնեաներ ընդունւեն բոլոր ազգերի ներկայացուցիչներից. խտրութիւն չը պէտք է դրւի ազգերի մէջ նաև աշխատանքի բոլոր այլ ճիւղերում։

գ) Անդրկովկասի պետական և հասարակական հիմնար-

կուիթիններին բոլոր պաշտօնեաները պարտաւոր են գիտենալ տեղական լեզուներից երկուսը։

Հողի խնդրում պատգամաւորը պէտք է անցկացնէ կեսրոնական օրէնսդիր հիմնարկութեան մէջ ընդհանուր այն սկզբունքները, որոնք հողը կը տան երկրագործ համայնքների ձեռքը հաւասարաչափ (уравнительный) հողաբաժանութեան և հողից հաւասարապէս օգտուելու իրաւունքով։ Իսկ հողի խնձուած հարցի վերջնական լուծումը Կովկասում, պէտք է պահանջէ՝ յանձնել Կովկասեան օրէնսդրական սէյմին։

Հէնց առաջին պարագայից օգտուելով, պատգամաւորը պէտք է հրահանգի Կովկասեան երկրագործներին խեղդող կիսա-ֆէոդալական յարաբերութիւնների վերջ դրելը. դրա հետ միասին նա պէտք է դադարեցնէ Ռուսաստանից ներս հոսող գաղթականական շարժումը, մինչև որ տեղական ազգաբնակութիւնը կստանայ այնքան հող, որ համապատասխանէ, գոնէ, նրա սպառողական պէտքերին։

Զօրաբանակը վերակազմելու գործի ժամանակ միլիցիականներին պէտք է տալ թոշակ, որը համաչափ պէտք է լինի տեղական աշխատավարձի մինիմումին։ Ամեն մի միլիցիական պէտք է ծառայէ իր նահանգի սահմանում, մօտակայ պետական սահմանները պաշտպանելու համար։ Իսկ սահմանների ընդհանուր պաշտպանութեան համար պէտք է կազմուեն առանձին բանակներ, որոնց մէջ կը մտնեն միլիցիականներ բոլոր նահանգներից. ամեն մի նահանգ ուղարկում է սահմանների պաշտպանութեան համար իր բնակիչների թիւն համեմատ միլիցիականներ։

Վերածնուած ժողովրդավարական Ռուսաստանի արտաքին քաղաքականութիւնը պէտք է համապատասխանէ նրա ներքին քաղաքականութեան։

Երիտասարդ Ռուսաստանը պէտք է պաշտպանէ թոյլ ազգերի իրաւունքները, միջազգային դատարանի յանձնելով ծագած վէճերը. դրա հետ միասին նա պէտք է ջատագով հանդիսանայ ժողովրդապետութեան, ազգային հաւասարութեան և ֆեդերացիայի սկզբունքների իրականացմանը բոլոր այլ պետութիւններում մանաւանդ Պարսկաստանում, Տաճկաստանում, որպէս այնպիսի երկրներում, որոնք գտնւում են նրա ազդեցութեան տակ։

ՀՈՂԻ ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Առաջարկած Բ. Պետ. Դուժային սոց.-յեղ. եւ դաշն. միացեալ խմբի կողմից)։

«Ուշադրութեան առնելով,—որ հողի խնդրի բարենորոգման հիմունքները շօշափում են ժողովրդի թէ իրաւաճանաչութիւնը և թէ նրա ամենակենսական շահերը,—որ այդ հիմունքները չեն կարող իրաւացիօրէն վճռուել Պետական Դուժայից, որը ընտրած է ամենաանկատար ընտրական օրէնքի հիմամբ և նախընտրական ագիտացիայի ազատութեան կատարեալ բացակայութեամբ,—որ ամեն մի կարևոր անհամապատասխանութիւն ծրագրած բարենորոգման և ժողովրդի իրաւաճանաչութեան ու շահերի միջև մեր լայնատարած և խիստ բազմազան հայրենիքի այս կամ այն մասում կարող է նորանոր բարդութիւններ և երկպառակութիւններ յարուցանել,—Դուժայի սոց.-յեղափոխականների խումբը անհրաժեշտ է համարում տեղական Հողի կոմիտէներ կազմակերպելը և, մտադիր լինելով ժողովրդի մի մասնրամասն համապատասխան օրինագիծ ներկայացնելու, ներկայումս բաւականանում է հետևեալ ձևաթանելով իւր հայեացքը այդ կոմիտէների կոչման վերաբերմամբ յետագայ հիմնական դրութիւնների համաձայն։

1) Հողի տեղական կոմիտէները պէտք է կազմուեն անյապաղ, առանց սպասելու որ հողի խնդրի բարեփոխման հիմունքները մշակուեն Հողի Յանձնաժողովից և ընդունուեն Պետ. Դուժայից։

2) Այդ կոմիտէները պէտք է հրաւիրուեն խորհրդաժելու հողի խնդրի բարեփոխման նոյն ինքն հիմունքները և այն ձևերը, որով պէտք է ձևակերպել այդ հիմունքները ըստ տեղական պայմանների։

3) Այդ կոմիտէներին պէտք է յանձնել այն բոլոր տեղեկութիւնների հաւաքելը, որ անհրաժեշտ են հողի խնդրի բարեփոխման ժամանակ։

4) Մինչև հողի խնդրի բարեփոխման իրականացումը—հողի տեղական կոմիտէներին պէտք է յանձնել կարգաւորել կապալաղները և գիւղատնտեսական վարձի պայմանները, ուր որ ճորտական (кабальный) բնաւորութիւն ունեն։

5) Կոմիտէները ընտրւում են հանրական, անմիջական, հաւասար և գաղտնի բէլարկութեամբ։—Ընդ սմին դադարեցնելու են հողի սեփականութեան ասևտուրի հիմունքներով շարժումը և ընծայումը»։

ՀՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

(Առաջարկած Բ. Պեռ. Դումային սոց.-յեղ. եւ դասեռ. միացեալ խմբի կողմից)։

1) Ռուսաց պետութեան սահմաններում այսուհետև և ընդմիշտ վերացւում է հողի ամեն սեփականատիրութիւն։

ա) Ֆինլանդիան, բաղաքական ինքնօրինութեան տէր լինելով, ազատ է սոյն հիմնական օրէնքի ներգործութիւնից։

բ) Նոյնը կը վերաբերի Ռուսաց կայսրութեան նաև ուրիշ մասերին, երբ Ֆինլանդիայի նման քաղաքական կազմակերպութիւն կստանան (Լեհաստան)։

2) Ամբողջ հողը՝ իւր բոլոր ջրերով ու խորքերով՝ յայտարարւում է սեփականութիւն Ռուսաց պետութեան համայն ազգաբնակութեան։

3) Այդ սեփականութիւնից օգտւելու հաւասար իրաւունք ունեն բոլոր քաղաքացիները և քաղաքացուհիները։

4) Ամբողջ հողի՝ իւր բոլոր ջրերով ու խորքերով՝ ծայրագոյն տնօրէնը, սոյն հիմնական օրէնքի գծած սահմաններում, ժողովրդական ներկայացուցիչների ժողովն է հանդիսանում. տեղական տնօրէններ են հանդիսանում նոյն հիմունքներով տեղական ինքնավարութեան օգանները՝ իւրաքանչիւրը իւր երկրային շրջանում։ Տեղական ինքնավարութեան ամենատոհրին օգանը երկրային համայնքն է, որն ընդգրկում է մէկ կամ մի քանի գիւղ։

5) Պետութեան վրայ, յանձին իշխանութեան կեսրոնական օգանների ու տեղական ինքնավարութեան օգանների, ծանրանում է՝

ա) բոլոր քաղաքացիների համար հաւասարապէս օգտւելն ապահովացնելը։

բ) հողի բնական հարստութիւնները ուժասպառ լինելուց պահպանելը, այլ և դրանց շատացնելու միջոցներ ձեռք առնելը։

6) Հողից, իւր ջրերով ու խոքերով, օգուտը թոյլ է տրըւում այս կերպ՝

ա) հասարակաց անտեսութեան համար՝ պետական բարձրագոյն իշխանութեան և տեղական ինքնավարութեան օրգանների ձեռքով, որոնք կազմակերպում են և վարում հողի վրայ, նրա ջրերում և խոքերում հասարակօրէն անհրաժեշտ և հասարակաց նշանակութիւն ունեցող տնտեսութիւններ (հասարակաց օգուտը).

բ) մասնաւոր աշխատաւոր տնտեսութիւնների համար՝ անհատների, ընտանիքների և խմբերի (ընկերակցութիւնների ու արտելների) ձեռքով, որոնք վարում են ձեռնարկութիւնը անձնական աշխատանքով (մասնաւոր—աշխատաւորական օգուտը).

գ) բնակատեղի ու շէնքերի համար՝ 1) այն անձերի ձեռքով, որոնք ապրում են շինութիւնների վարձից և վարձու բանւորներ ունեցող առևտրական ու արդիւնագործական ձեռնարկութիւնից (կապիտալիստական օգուտը) ստացւող եկամուտով և 2) այն անձերի ձեռքով, որոնք օգտւում են հողից իբրև տնատեղիից և տնտեսական շէնքերից սեփական բնակութեան համար, այլ և առևտրական ու արդիւնագործական ձեռնարկութիւնների համար առանց վարձու բանւորների։

Հողից, ջրից և խոքերից օգուտելու ոչ մի այլ տեսակ, բացի 6-րդ յօդուածումս ցոյց տւածից, թոյլ չէ տրւում։

7) Հասարակաց օգուտելու հիմնական կանոնները։

ա) Պետութիւնը և տեղական ինքնավարութեան բոլոր օրգանները իրաւունք ունեն համապատասխան ներկայացուցչական ժողովների յատուկ կարգադրութիւններով հողի անհրաժեշտ տարածութիւններ յատկացնել հասարակաց օգուտելու համար յետագայ նպատակներով՝ I. հողի բնական հարստութիւնները ուժասպառ լինելուց պահպանելու, այլ և դրանց շատացնելու միջոցներ ձեռք առնելու համար (ոռոգման, ցամաքացման, ջրաբաշխման շինուածքներ, անտառներ ձգել, աւազուտներ ամրապնդել և այլն)։ II. Հողի աւելի խոշոր հարստութիւնների շահագործման և դրանց եկամուտները հասարակաց պէտքերի յատկացնելու համար։ III. Փորձնական ու օրինակելի տնտեսութիւններ ու ձեռնարկութիւններ սարքելու, այլև առողջապահական, բարեգործական, կրթա-

կան և այլ նպատակների համար, և IV. սնտեսության աւելի նպատակայարմար ձևեր հաստատելու համար։

բ) Յատուկ օրէնքով կանոններ են սահմանուում՝ պետության կամ տեղական ինքնավարության օգտաններին ձեռքով ստացած արտադրութիւնները աշխատաւոր ժողովրդին արտոնեալ պայմաններով (արտադրման գնով կամ ձրիաբար) մատակարարելու անձնական սպառողության բանակով, ինչպէս և բոլոր ցանկացողներին առևտրական հիմունքներով վաճառելու մասին։

գ) Յատուկ օրէնքով կանոններ են սահմանուում պետական և հասարակաց ձեռնարկութիւններում աշխատանքը այնպէս կազմակերպելու, որ աշխատողները ընդարձակ իրաւունքներ ստանան ձեռնարկութիւնների կառավարման մէջ։

8) Մասնաւոր-աշխատաւորական օգտուելու հիմնական կանոնները.

ա) Ոչ ոք իրաւունք չունի հողից օգտուելու աւելի չափով, քան ինչ որ կարող է՝ նոյն տեղի սնտեսության միջին պայմաններում՝ մշակել իւր կամ իւր ընտանիքի աշխատող ուժերով, այսինքն աշխատաւորական նորմայից ոչ աւելի։

բ) Հողը կարող է յատկացուել օգտուելու՝

I. առանձին անձերի և ընտանիքների։

II. հողը իրենց մէջ հաւասար բաժանող հողի ընկերակցութիւնների.

III. ձեռնարկութիւնը միասին վարող և արդիւնքը հաւասար բաժանող արտելների։

Նշանաւորութիւն. Ինքնավարության օգտաններից և ոչ մէկը իրաւունք չունի արգելքներ յարուցանել արտելների կամ հողի ընկերակցութիւնների կազմակերպելուն և կամ արտոնութիւններ սահմանել ծխական (ոչ համայնական) եղանակով օգտուողների համար։

գ) Հողից օգտուելու հաւասարութիւնը առանձին համայնքների կամ այլ երկրային ինքնավար միութիւնների միջև սահմանում են ըստ պատկանելոյն տեղական ինքնավարության համապատասխան օգտաններին և բարձրագոյն պետական իշխանութիւնը.

I. Ընդունված նոռմայից վեր հողերի վրայ պռոգրեսիվ հարկ դնելով,

II. Ազգաբնակութիւնը ցրելով ու գաղթեցնելով,

III. Այդ միջոցները անբաւարար եղած դէպքում հողերի սահմանները փոփոխելով։

գ) Յատուկ օրէնքներով սահմանուում են հողաբաժանութեան հիմնական սկզբունքները, իսկ ինքնավարութեան բարձրագոյն օրգաններին յանձնարարուում է այդ սկզբունքների հիման վրայ և համեմատ պարտադիր կարգադրութիւններ ու կանոններ հրատարակել ապահովելու.

I. Հողաբաժիններից օգուտելու անհրաժեշտ տեղութիւնը հողի մշակման տեղական պայմանների համեմատ.

II. Հողաբաժինները կամ նրանց մասերը մէկի ձեռքից ուրիշին անցնելիս օգուտողներին վարձատրելը այն չվայելած բարութիւնների համար, որ նրանք կատարել են իրենց աշխատանքով կամ կապիտալով։

և) Հողի հաւասար ընդհանուր բաժանումը անձերի, ընտանիքների ու խմբերի միջև վարում է տեղական ինքնավարութեան ստորին ինստանցիան վերին ինստանցիաների հսկողութեամբ և հողի օրէնքի ընդհանուր նոռմաները պահպանելով։

զ) Իւրաքանչիւր քաղաքացի, որ կամենում է իւր աշխատանքը հողի վրայ դնել և չէ կարողացել իրագործել այդ համաձայնութեան գալով առանձին համայնքների, հողի ընկերակցութիւնների և արտելների հետ, իրաւունք ունի դիմելու տեղական ինքնավարութիւնների ու պետութեան հողավար (землеустроительный) հիմնարկութիւններին, որոնք պարտաւոր են.

I. կամ տեղաւորել նրան շատ հող ունեցող համայնքներից մէկում յատուկ օրէնքով ցոյց տուած կարգով.

II. կամ նրան հողաբաժին հանել այս կամ այն խոշոր երկրային ինքնավար միութեան հողի պահեստի ֆոնդից.

III. կամ կարգել նրան հող մշակող հասարակական ձեռնարկութիւններից մէկն ու մէկում։

Ռանսոմ Թիւն։ Յատուկ օրէնքով սահմանուում է հողաբաժինները հարկը պահանջած դէպքերում հատանելու կամ տալ մերժելու կարգը, նմանապէս և իրենց իրաւունքները իրաւաբանօրէն պաշտպանելու կարգը այն անձերից, որոնք այդ իրաւունքը խախտած կհամարեն։

է) Հողի և իր արդիւնքների հաւասար բաժանման ժամանակամիջոցներն ու եղանակները հողի ընկերակցութիւններում ու արտելներում իրենք են սահմանում հողի օրէնքի ընդհանուր նորմաները պահպանելով։

ը) Հողը մասնաւոր կերպով իրար տալը առանձին օգտագործողների միջև (անձերի, ընտանիքների, հողի ընկերակցութիւնների և արտելների) թոյլ է տրւում ոչ այլ կերպ, բայց եթէ համայնքի համաձայնութեամբ և հողի օրէնքի ընդհանուր նորմաները պահելով։ Մասնաւոր-աշխատաւոր օգտագործողները հողագործութիւնը թողնելիս իրենց օգտած հողաբաժինները համայնքի անօրինութեանն են յանձնում. մի և նոյն ժամանակ գանազան վայրերի ու ձեռնարկութիւնների համար յատուկ օրէնքով սահմանելիք ժամանակամիջոցների ընթացքում վերապահում են իրենց նոյն համայնքում հողից օգտուելու իրաւունքը, իսկ այդ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ պահում են լոկ ամեն քաղաքացու ընդհանուր իրաւունքը հողաբաժին ստանալու։

թ) Յատուկ օրէնքով վարկի կանոններ են սահմանւում հողից աշխատաւորաբար օգտագործողների համար արդիւնագործութեան անհրաժեշտ միջոցները ձեռք բերելու և ձեռնարկութիւնները բարւոքելու նպատակով։

ժ) Յատուկ օրէնքի հիմամբ ընդհանուր պարտադիր ապահովագրման կամ որևէ ուրիշ ձևով հատուցւում են հողից աշխատաւորաբար օգտագործողների կորուստների տնտեսական ամեն տեսակ ադէքներից (հրդեհ, անբերրիութիւն, անասնի կոտորում, աշխատելու ընդունակութիւնից զրկելը և այլն)։

9) 8-րդ յօդւածում շարադրւած հիմունքների նմանութեամբ կանոններ են սահմանւում մասնաւոր աշխատաւորական օգտուելու համար խորքերից, ջրերից, անտառներից և ուրիշ արդիւնաբեր հողամասերից։

10) Բնակելու, շէնքերի ու շինւածների համար հողից օգտուելու հիմնական կանոնները.

ա) իբրև ազարակային հողաբաժիններ ամեն տեսակ շէնքերի ու շինւածքների համար յատկացւում են պետութիւնից ու տեղական ինքնավարութեան օրգաններից սահմանւած կանոնների համաձայն։

բ) Ամեն տեսակի շէնքերը ու շինւածքները, հասարակաց

պէտքերի պահանջմամբ, կարող են օտարացնել պետութեան ու տեղական ինքնավարութեան օգտակարների ձեռքով յատուկ օրէնքով սահմանելիք կարգով։

I. ՀՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ։

Օրէնքը ներմուծելու և մինչև ներմուծելը հողի յարաբերութիւնները կարգաւորելու նախապատրաստական միջոցները։

§ 1. ա) Վերացուած են բոլոր հրովարտակները հողի և հողից օգտուելու մասին Հիմնական Օրէնքների 87-րդ յօդուածի կարգով հրատարակուած, այլ և Գիւղացիների ընդհանուր Օրէնսդրութեան 36-րդ յօդուածը։

բ) Կանգ է առնում գիւղացիական և ազնուականութեան հողային բանկերի, հողավար (землеустроительный) կոմիսիաների և հողավարման միւս ներկայ օգտակարների գործունէութիւնը։

գ) Կանգ է առնում հողի սեփականութեան առուտրի ու ընծայման ճանապարհով շարժումը։

§ 2. Մինչև տեղական ինքնավարութեան վերակազմակերպումը երկրայնութեան և հանրական, անմիջական, հաւասար ու փակ ձայնաւորութեան հիմունքներով, այլ և անցողական ժամանակի հողավարման նպատակով՝ կազմակերպւում են տեղական հողի կոմիտէներ—վոլոստի, գաւառի, նահանգի ու շրջանի՝ հանրական, անմիջական, հաւասար ու փակ ընտրական իրաւունքի հիմամբ։

Յանձնարարութիւն։ Շրջանների բաժանումը իրենց գիւղական հիմնական առանձնայատկութիւնների համեմատ կատարւում է օրէնսդրական կարգով։

§ 3. Իրաքանչիւր վոլոստի կոմիտէը բաղկանում է հաւասար թւով նոյն վոլոստից ընտրուած անդամներից և սահմանակից վոլոստներից ընտրուած անդամներից։

§ 4 Գաւառի հողի կոմիտէը կազմւում է հաւասար թւով նոյն գաւառի ներկայացուցիչներից և նահանգի միւս բոլոր միասին վերցուած գաւառների ներկայացուցիչներից։

§ 5. Նահանգի հողի կոմիտէտը կազմուում է հաւասար թւով նոյն նահանգի ներկայացուցիչներից և շրջանի միւս բոլոր իմիսին վերցած նահանգների ներկայացուցիչներից։

§ 6. Շրջանի հողի կոմիտէտը կազմուում է հաւասար թւով շրջանի ներկայացուցիչներից և ներկայացուցիչներից միւս բոլոր շրջանների միասին վերցած։

§ 7. Հողի կոմիտէտները, տեղական առանձնայատկութիւնների ու պայմանների համեմատ, նախագծեր են կազմում՝

ա) Ինքնավար երկրային միութիւնների սահմանների մասին.

բ) Հողից օգտուելու նորմաների մասին և

գ) Հողաբաժիններ յատկացնելու մասին։

§ 8. Նախընթաց յոդուածի որոշած նպատակներով մանրամասն հաշիւ է կատարւում ազգաբնակութեան, բոլոր հողերի, ձեռնարկութիւնների, մշակուող խորքերի, այլ և դրանց գնահատումը։

§ 9. Անյապաղ վերջ է դրւում ուղղիների, կաթնէտի, եկեղեցիների ու վանքերի կողմից հողին և նրա խորքերին տիրելու ամեն ձևերին, և այդ հողերի անօրինութիւնը յանձնւում է հողի կոմիտէտներին, որոնց անմիջական անօրինութեանն են յանձնւում նաև պետական արդիւնաբեր հողամասերը։

§ 10 Այդ հողամասերի բաշխումը աւելի մանր տեղական հողի կոմիտէտների միջև կատարւում է հմտապատասխան աւելի խոշոր և բարձր հողի կոմիտէտների հսկողութեամբ, և բարձրագոյն կոմիտէտներին իրաւունք է վերապահւում իւր անմիջական անօրինութեանը թողնել աւելի ընդարձակ տեղական—հասարակական նշանակութիւն ունեցող արդիւնաբեր հողամասերը։

§ 11. Հողի կոմիտէտները իրաւունք ունեն միջոցներ ձեռք առնելու բոլոր հողային հարստութիւնները ջրերով ու խորքերով, այլ և աշխատաւոր ժողովրդի շահերը պաշտպանելու, կարգաւորելու հողատէրերի ու հողից աշխատաւորաբար օգտուողների փոխադարձ յարաբերութիւնները, ժամանակաւոր հողից օգտուելու չափերը սահմանելու, կապալի և վարձու աշխատանքի պայմանները կանոնաւորելու և այլն։

§ 12. Քաղաքների, զեմստվոների, հասարակական, կրթական և բարեգործական հաստատութիւնների, այլազգիների ու կղերկների հողերը մնում են իրենց ներկայ տէրերի ժամանակաւոր անօրինութեան տակ պետական իշխանութեան ու հողի կոմիտէտ-

ների հակադրությամբ, սրանցից յատկապէս սահմանելիք կանոնների, որոնք ապահովելու են հասարակաց շահերը ու աշխատաւոր ժողովրդի պէտքերը։

II. ՕՐԷՆՔԸ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 1. Հողի սեպհական տէրերին ու օգտագործողներին—առանձին անձերին, ընկերակցութիւններին, համայնքներին ու արտելներին—իրենց ցանկութեամբ և նոյն տեղի հասար ընդունուած աշխատաւորական նորմայից ոչ աւելի չափով թողնւում են օգտագործել հողերը, ձեռնարկութեան հողաբաժինները ու մշակող խորքերը, որոնք ա) սեփականատիրութեան իրաւունքով իրենց են պատկանած եղել, բ) նաղէլի են եղել, և գ) կապալով իրենց ձեռին են եղել։

Դանձնութիւն։ Տեղական ինքնավարութեան օգտաններին թոյլ է տրւում, որ այդ դէպքում հողաբաժինների փոխանակում և սահմանների փոփոխում կատարեն։

§ 2. Մնացած բոլոր հողերը, իրենց ջրերով ու խորքերով, օտարացւում են առանց վարձատրման և յատկացւում են պետական ու հասարակական տնտեսութիւն կազմակերպելու, այլ և աշխատաւոր, սակաւահող և հողազուրկ ժողովրդին ապահովելու։

§ 3. Ամենից առաջ հողով մատակարարւում են տեղացի սակաւահող օգտագործողները, ապա տեղացի հողագործ ազգաբնակութեան հողազուրկ մասը (մշակները, անասուն գիւղացիներն և այլն), ապա տեղացի ոչ հողագործ ազգաբնակութիւնը, և վերջը արդէն, եթէ հողի պահեստը կներէ, եկեղեցիները։

§ 4. Որտեղ որ տիրում է ծխական տնտեսութիւնը, առաջւայ ծխական հողատէրերը ծխական օգտագործողներ են դառնում հողի հիմնական օրէնքի § 8. բ. կէտի I բաժնի հիմամբ, այդտեղից բղխող բոլոր հետևանքներով։

§ 5. Համայնական տնտեսութեան վայրերում

ա) երբ երկրային համայնքը իւր բնակչութեան կազմով ժողովրդապէս նոյն է նախկին տիրապետական համայնքին—դրանք ձուլւում են, և վերջինիս իրաւունքներն ու պարտականութիւնները անցնում են առաջինին։

բ) երբ երկրային համայնքը երկու կամ մի քանի նախկին տիրապետական համայնքներ է ընդգրկում, դրանց թոյլ է թողւում կամ մի համայնք կազմել և ձուլել երկրային համայնքի

հետ, կամ դառնալ հողի ընկերակցություն հողի հիմն. Օրէնքի § 8 բ. կէտի 2-րդ բաժնի իմաստով բոլոր բղխող հետևանքներով.

գ) ինչ վերաբերում է բարդ (վոլոստի) համայնքներին, ուր որ կան այդպիսիներ, նույն հիմունքներով կատարում է դրանց ձուլումը կամ յարաբերությունների կարգավորումը ինքնավարության համապատասխան բարձր երկրային օգանների հետ։

§ 6. Յատուկ օրէնքներով որոշում է Օրէնքի ներժուծումը այլազգիների ու կազակների հողերում։

§ 7. Բարեգործական և կրթական հիմնարկությունների հողերը, որքան որ ծառայում են լոկ եկամուտ ստանալու այդ հիմնարկությունները պահելու համար, յատկացում են սակաւահող ու հողազուրկ ժողովրդին բաժանելու՝ փոխարէնն հատուցանելով դրամական նպաստներով. իսկ մնացած հողերը կարող են իրենց մեալ որպէսզի օգտուեն տեղական ինքնավարության օգաններից որոշելիք չափով և պայմաններով։

§ 8. Քաղաքային հողերը, որչափ որ ծառայում են անմիջապէս քաղաքի ժողովրդի պէտքերին (իբրև արօտատեղի կամ բնակատեղի, տնատեղի և շինուածքների տեղի) մնում են իրենց անօրինության յանձնուած, և, հարկ եղած դէպքում, աւելացուելու են. իսկ զուտ տնտեսական պէտքերի ծառայող հողերը անցնում են պատշաճաւոր երկրային համայնքների կամ տեղական ինքնավարության աւելի խոշոր օգաններին անօրինությանը։

§ 9. Համայն—պետական կամ խոշոր տեղական նշանակություն ունեցող բոլոր անտառները, ջրերը ու խորքերը յանձնում են պետության և տեղական ինքնավարության օգաններին անմիջական անօրինությանը. մի առ ժամանակ դրանք կարող են թողնել իրենց առաջուայ տէրերին ու օգտագործողներին օգտուելու պետության իշխանությունից կամ տեղական ինքնավարության օգաններից որոշելիք պայմաններով, որոնք պէտք է հոգ տանեն պահպանելու թէ ժանտաւոր օգտուելու յանձնուած խորքերի ու ջրերի արժէքաւորությունը, և թէ դրանց շահագործման մէջ աշխատող ժողովրդի առողջությունն ու աշխատանքը։

§ 10. Ագարակային հողաբաժինների վրայ կառուցած բոլոր շինուածքներն ու շէնքերը մնում են իրենց ներկայ սեփականատէրերին ու տէրերին, բայց պետությանը և տեղական ինքնավարության օգաններին իրաւունք է վերապահում այդ օտարացնելու հասարակաց կամ պետական օգտի համար, որի կատարման կարգը պէտք է որոշի ընդհանուր օրէնսդրական եղանակով հաստատուած յատուկ կանոններով։

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՈՒ ՊՍԱՆԵՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՄՍԱՕՐԻՆ

„ՅԱՌԱՋ"-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Բալ.—Հարուստներ և աղքատներ II տպագրութիւն	15	կ.
2. Պէշիխանով.—Հաց, լոյս և ազատութիւն	12	»
3. Ֆէօդորովիչ.—Ինչպէս են ժողովում և ծախսում ժողովրդական փողերը	5	»
4. Կարմելիկ.—Նոր լերան քարոզը	2	»
5. Զերնով.—Դիւցազին և բանուորը	15	»
6. Պերնէրստորֆէր.—Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան	5	»
7. Պրամսլոյնի.—Դիւղացիներին	5	»
8. Ե. Թոփչեան.—Արհեստակցական միութիւններ . . .	15	»
9. Նօվոտորժսկի.—Ի՞նչ է իրաւական պետութիւնը .	15	»
10. Ն. Կարանով.—Հողային հարցը Նոր-Զելանդիայում .	2	»
11. Ժան Ժորէս.—Բուրժուական սեփականութիւնը և նրա ապագայ զրաւումը	5	»
12. Ա. Աթեղեան.—Դեմոկրատական ընտրութիւններ .	12	»
13. Կաուցկի.—Ազգութիւնների հարցը Ռուսաստանում .	3	»
14. Ա. Ամարեան.—(Ղարիբ) Ազատութեան ճանապարհին	80	»
15. Ֆ. Լասսալ.—Սահմանադրութեան էութեան մասին	5	»
16. Ա. Ն.—Ի՞նչպէս կարելի է լուծել հողային հարցը .	12	»
17. Վ. Գալուբով.—Ի՞նչ է ժողովրդապետութիւնը .	2	»
18. Ս. Զաւարեան.—Վիճակագրական տեղեկութիւններ դիւղական ազգաբնակութեան տնտեսական վիճ. մասին	25	»
19. Ալֆոնս Դիւնան.—Ժողովրդական օրէնսդրութիւնը—դաշնակցական Զուիցերիայում	25	»
20. Դիմիշէյն.—Ո՞վ ինչպէս է ապրում	7	»
21. —Մի զրոյց հողի մասին	5	»
22. Լ. Շիշկո.—Ագրարային ծրագրի հարցը	7	»
23. Ա. Նիկոլաև.—Կոօպերացիա	5	»
24. Շտապեցէք օգտուելու ձեր իրաւունքներից	1	»
25. Լ. Պետրով.—Երկու ծրագիր	20	»
26. Ս. Վշոսեկ.—Պետական կազմակերպութեան հիմքերը Արևմուտքում.—	12	»
27. Անսկիյ.—Դիւղացիական հարցը Ֆրանսիայում . . .	7	»
28. Մ. Յովհաննիսեան.—Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները	50	»

3245

ՅԱՌԱՋԻ ԳՐԱԴԱՐԱՆ

29. Ֆ. Դէդ. եւ Պ. Լաֆարգ.—Տնտեսական զարգացումը և սոցիալիզմը 5
30. Նովոսորվսկի.—Ազգային հարցը, աւտոն. և ֆէդէրաց 7
31. Մորամանկ կարդեր 7
32. Մ. Յովհաննիսեան.—Դորդեան հանգոյցը (տաճկահայ խնդրի վերջին շրջանը) 20
33. Հրահանգներ գաւառների համար . . . . . .
34. Վ. Զերնով.—Դասակարգային կուսի թէօրիայի շուրջը 10
35. Լ. Շիշկո.—Նեազգայոյն ծրագիրը 12
36. Ս. Նեկրասով.—Ի՞նչ կարդեր են հարկաւոր ժողովրդին 10
37. Ա. Շախաթունեան.—Ֆէդէրալիզմ և դեմոկրատիզմ . 30
38. Արամայիս.—Վնասակարը 4
40 Մ. Յովհաննիսեան.—Կովկասեան Վանդէան (հայ-թրքական ընդհարումները և նրանց պատճառները) . . . 25
41. Շ. Փորլով —Ի՞նչպէս իրականացնել ապրութիւնների հաւասարութիւնը 7
42. Գ. Թամակ.—Դէպի ֆէդէրացիա 80
43. Վ. Զերնով.—Պրոլէտարիատը և աշխատ. գիւղացիութ. 18
44. Աւրամովա. – Գիւղացին և բանւորը 3
45. Է. Վանդերվէլդ.—Բանւոր դասակարգի դրութիւնը Բելգիայում 45
46. Ս. Զակ.—Հող և կապիտալիզմ 15
47. Վահէ.—Անջատաձները 10
48. Մ. Յովհաննիսեան.—Փիլիսոփայ սոցիոլոգը . . . 15
49. Ֆէլդորովիչ.—Ժողովրդական փոկրը (բուրբեռեն) . 7
51. Արամայիս.—Մի քանի գլուխ հայ թրքական ընդհարումներից II մաս 10
52. Յ. Թադէոսեան.—Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը 20
53. Գնդունի.—Յիշողութիւններ մօտիկ անցեալից I պրակ 10
54. Գնդունի.—Յիշողութիւններ մօտիկ անցեալից II պրակ 15
55. Յ. Թադէոսեան.—Ազգային հերոս 5
56. Ն. Կարիշև.—Տնտեսագիտական զրոյցներ 20
57. Ս. Տիրատեան.—Դաշնակցական պատգամաւորները երկրորդ պետական Դուման մում 30

Դիմել՝ Թիֆլիս «Փարոս», և «Գուտտենբերգ» գրախանութները.

—Բագու՝ «Սատրուդնիկին».

—Երևան.—Ս. Օհանջանեանին և «Արարատ» գրախանութները.

Յանկացողները կարող են ստանալ գրադարանի բոլոր գրքերը միասին պոստով, չվճարելով ճանապարհածախսը։